ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

## 2007-2011 թթ.

ՄՇԱԿՎԵԼ Է «ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ե Ր Ե Վ Ա Ն   2 0 0 6

## Բովանդակություն

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ....................5
Բ Ա Ժ Ի Ն 1. «Սևան» ազգային պարկի ստեղծումը և տեղադրությունը ....................8
Բ Ա Ժ Ի Ն 2. «Սևան» ազգային պարկի բնական պայմանները ....................9
2.1. ԿԼԻՄԱՆ ....................9
2.2. ՌԵԼԻԵՖԸ ....................9
2.3. ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ....................10
2.4. ՀՈՂԵՐԸ ....................11
2.5. ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ....................11
2.5.1. Ֆլորան ....................11
2.5.2. Բուսականությունը ....................12
2.6. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ....................13
2.6.1. Անողնաշարավորներ ....................13
*2.6.1.1. Փափկամարմիններ և Հոդվածոտանիներ ....................13*
*2.6.1.2. Խեցգետիններ ....................13*
2.6.2. Ողնաշարավորներ ....................13
*2.6.2.1. Ձկներ ....................13*
*2.6.2.2. Երկկենցաղներ. ....................14*
*2.6.2.3. Սողուններ. ....................14*
*2.6.2.4. Թռչուններ. ....................14*
*2.6.2.5. Կաթնասուններ. ....................15*
Բ Ա Ժ Ի Ն 3. «Սևան» ազգային պարկի սահմանները ....................16
3.1. «Սևան» ազգային պարկի սահմանների որոշման սկզբունքները ....................16
3.2. «Սևան» ազգային պարկի սահմանների նկարագրությունը ....................16
3.3. «Սևան» ազգային պարկի պահպանական գոտու նկարագրությունը ....................19
3.4. «Սևան» ազգային պարկի սահմանների փոփոխության վերաբերյալ մեկնաբանություններ ....................19
3.5. Համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների սահմանների և կատեգորիայի ճշգրտում ....................20
3.6. «Սևան» ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների կառավարման բարելավման գործողությունների պլան (աղյուսակ 1) .................... Error! Bookmark not defined.
Բ Ա Ժ Ի Ն 4. «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները ....................22
4.1. «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների փոփոխությունները ....................22
4.2. «Սևան» ազգային պարկի արգելոցային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները ....................23
4.2.1. «Նորաշենի» արգելոց. ....................23
4.2.2. «Լիճք-Արգիչի» արգելոց. ....................24
4.2.3. «Գիլլի» արգելոց. ....................24
4.2.4. «Արտանիշի» արգելոց ....................25
4.3. «Սևան» ազգային պարկի արգելավայրային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները ....................26
4.3.1. «Գավառագետի» արգելավայր. ....................26
4.3.2. «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայր. ....................27
4.4. «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները ....................27
4.4.1. Առաջին ռեկրեացիոն գոտի. ....................27
4.4.2. Երկրորդ ռեկրեացիոն գոտի. ....................28
4.4.3.Երրորդ ռեկրեացիոն գոտի. ....................29
4.4.4. Չորրորդ ռեկրեացիոն գոտի. ....................29
4.4.5. Հինգերորդ ռեկրեացիոն գոտի ....................30
4.4.6. Վեցերորդ ռեկրեացիոն գոտի. ....................30
4.4.7. Յոթերորդ ռեկրեացիոն գոտի. ....................31
4.4.8. Ութերորդ ռեկրեացիոն գոտի. ....................31
4.5. «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտու նկարագրությունը ....................32
4.6. «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների կառավարման բարելավմանն ուղղված գործողություններ ....................34
Բ Ա Ժ Ի Ն 5. «Սևան» ազգային պարկի կառավարման ներկա առանձնահատկությունները և դրա բարելավմանն ուղղված գործողությունների պլանը ....................35
5.1. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման ....................40
գործողությունների պլան ....................40

**Բ Ա Ժ Ի Ն 6. «Սևան» ազգային պարկին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագիրը և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման գործողությունների պլանը ........................ 41**
6.1. Համայնքների սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը ........................ 41
6.2. Համայնքների կողմից «Սևան» ազգային պարկի բնական պաշարների օգտագործումը ........................ 41
6.2.1. Ջրային ռեսուրսների օգտագործումը. ........................ 42
6.2.2. Ձկան և խեցգետնի պաշարների օգտագործումը. ........................ 42
6.2.3. Ռեկրեացիոն նպատակներով տարածքների օգտագործումը. ........................ 42
6.2.4. Արածեցումը. ........................ 42
6.2.5. Բուսական պաշարների օգտագործումը. ........................ 42
6.2.6. Կենդանական պաշարների օգտագործումը. ........................ Error! Bookmark not defined.
6.3. Բնական պաշարների օգտագործման բնագավառում բնակչության իրազեկությունը, «Սևան» ազգային պարկի և շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը ........................ 43
6.4. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տարածքներում կենսաբանական պաշարների օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման առանձնահատկությունները ........................ 44
6.5. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բնական պաշարների պահպանումը և օգտագործման կարգավորումը ........................ 46
6.6. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի մասնակցային կառավարման գործողությունների պլանը ........................ 46

**Բ Ա Ժ Ի Ն 7. «Սևան» ազգային պարկի բնական էկոհամակարգերի ներկա վիճակը և դրանց բարելավմանն ուղղված գործողությունների պլանը ........................ 47**
7.1. ՋՐԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐ ........................ 47
7.1.1. Սևանա լճի էկոլոգիական վիճակը ........................ 47
7.1.2. Գետերի էկոլոգիական վիճակը ........................ 48
7.1.3. «Սևան» ազգային պարկի ջրային էկոհամակարգերի բարելավման գործողությունների պլան ........................ 50
7.2. ՋՐԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ........................ 51
7.2.1. Ձկներ. ........................ 51
7.2.2. Սևանա լճի մակարդակի բարձրացման պայմաններում լճի հնարավոր ձկնարդյունաբերության գնահատում ........................ 53
7.2.3. Խեցգետին. ........................ 54
7.2.4. «Սևան» ազգային պարկի ջրային կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունների պլան ........................ 55
7.3. ՑԱՄԱՔԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐ ........................ 55
7.3.1. Բուսական աշխարհի հաշվառումը, վիճակը և գործողությունների պլանը ........................ 55
*7.3.1.1.Նոր տեսակներ և պոպուլյացիաներ «Սևան» ազգային պարկի տարածքից. ........................ 55*
*7.3.1.2. Էնդեմիկ տեսակներ ........................ 56*
*7.3.1.3. Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված տեսակներ. ........................ 57*
*7.3.1.4. Տնտեսապես արժեքավոր տեսակներ ........................ Error! Bookmark not defined.*
7.3.1.4.1. Դեղաբույսեր ........................ 58
7.3.1.4.2. Ուտելի բույսեր ........................ 59
7.3.1.4.3. Բույսերի ինվազիվ և էքսպանսիվ տեսակներ. ........................ 60
7.3.1.4.4. Հազվագյուտ սնկեր. ........................ 60
7.3.1.4.5. Ուտելի սնկեր. ........................ 61
*7.3.1.5. «Սևան» ազգային պարկի բուսականության վիճակը ........................ 62*
7.3.2. «Սևան» ազգային պարկի բուսական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունների պլան ........................ 62
7.3.3. Կենդանական աշխարհի հաշվառումը, վիճակը և գործողությունների պլանը ........................ 62
*7.3.3.1. Անողնաշարավորներ. ........................ 62*
*7.3.3.2. Երկկենցաղներ. ........................ 63*
*7.3.3.3. Սողուններ. ........................ 63*
*7.3.3.4. Թռչուններ. ........................ 65*
*7.3.3.5. Կաթնասուններ. ........................ 66*
7.3.4. «Սևան» ազգային պարկի կենդանական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունների պլան ........................ 67
7.4. «Սևան» ազգակին պարկի անտառոգույքագրում ........................ 67
7.4.1. Անտառային տարածքների դինամիկան ըստ հողատեսքերի ........................ 68
7.4.2. Ազգային պարկի անտառների գնահատում ........................ 69
*7.4.2.1. Ազգային պարկի անտառների բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների. ........................ 69*
*7.4.2.2. Անտառածածկ տարածքների բաշխվածությունն ըստ ծառուտների լրիվության ........................ 70*
*7.4.2.3. Անտառածածկ մակերեսների և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի. ........................ 72*
7.4.3. Սևանա լճի մակարդակի բարձրացման ազդեցությունն ազգային պարկի անտառածածկ տարածքների վրա ........................ 73
7.4.4. «Սևան» ազգային պարկի անտառային տարածքների կառավարման բարելավման գործողությունների պլան ........................ 75

**Բ Ա Ժ Ի Ն 8. «Սևան» ազգային պարկում տուրիզմի և ռեկրեացիայի առանձնահատկությունները և դրանց կարգավորման ուղիներն ու գործողությունների պլանը**......77
8.1. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բնական ու մշակութային առանձնահատկությունները......77
8.1.1. Առողջարարական պաշարներ.......77
8.1.2. Բնական և մշակութային ժառանգություն.......77
8.2. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեությունը տուրիզմի և ռեկրեացիայի կազմակերպման բնագավառում......78
8.3. Տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության գնահատականը «Սևան» ազգային պարկի տարածքում...78
8.4. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի զարգացման ձևերը և երթուղիները......79
8.4.1. Տուրիզմի զարգացման ձևերը.......79
8.4.2. Էկոտուրիզմ.......80
8.4.3. Տուրիստական երթուղիներ.......80
8.5. Տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներին սպառնացող վտանգները......80
8.6. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության կանոնակարգման գործողությունների պլան......82
**Բ Ա Ժ Ի Ն 9. «Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման և իրականացման գործողությունների պլանը**......84
**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր  Ե Վ  Ք Ա Ր Տ Ե Զ Ն Ե Ր**......88
ՀԱՎԵԼՎԱԾ 1......Error! Bookmark not defined.
ՀԱՎԵԼՎԱԾ 2......Error! Bookmark not defined.
ՀԱՎԵԼՎԱԾ 3......Error! Bookmark not defined.
Քարտեզ 1. Ռելիեֆը......Error! Bookmark not defined.
Քարտեզ 2. Ջրագրությունը......Error! Bookmark not defined.
Քարտեզ 3. Ազգային պարկի և պահպանական գոտու սահմանները......Error! Bookmark not defined.
Քարտեզ 4. Ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները......Error! Bookmark not defined.
Քարտեզ 5. Կարմիր գրքում գրանցված առավել ուշադրության արժանի և էնդեմիկ բուսատեսակների բաշխվածությունը......Error! Bookmark not defined.
Քարտեզ 6. Դեղաբույսերի բաշխվածությունը......Error! Bookmark not defined.
Քարտեզ 7. Ուտելի բույսերի բաշխվածությունը......Error! Bookmark not defined.
Քարտեզ 8. Կարմիր գրքում գրանցված և հազվագյուտ կենդանիների տեսակների բաշխվածությունը......Error! Bookmark not defined.
Քարտեզ 9. Անտառների բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների......Error! Bookmark not defined.
Քարտեզ 10. Անտառների բաշխվածությունն ըստ լրիվության......Error! Bookmark not defined.
Քարտեզ 11. Անտառների բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի......Error! Bookmark not defined.
Քարտեզ 12. Անտառների բաշխվածությունն ըստ հասակային փուլերի......Error! Bookmark not defined.
Քարտեզ 13. Սևանա լճի մակարդակը ծովի մակարդակից 1900 և 1903.5 մ բարձրություններում......Error! Bookmark not defined.
Քարտեզ 14. Բնական և մշակութային հուշարձանների բաշխվածությունը......Error! Bookmark not defined.
Քարտեզ 15. Հիմնական հուշարձանները և տուրիստական երթուղիները......Error! Bookmark not defined.

# Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանը մշակվել է 2004-2006 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի տրամադրած դրամաշնորհային միջոցներով:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման համար հիմք են հանդիսացել ռազմավարական նշանակության այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝

- Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի իրականացման վերաբերյալ Հայաստանի Ազգային Ժողովի կողմից վավերացված Գլոբալ էկոլոգիական խնամառու դրամաշնորհային հիմնադրամի Համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև, որպես Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի իրականացնող գործակալության (2002 թվ.).
- Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի գնահատման փաստաթուղթը (2001 թվ.):

Բացի այդ, հաշվի են առնված Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններ, որոնք արտահայտված են Հայաստանի Ազգային Ժողովի կողմից վավերացված այնպիսի միջազգային կոնվենցիաներում, ինչպիսիք են՝

- Կենսաբանական բազմազանության մասին – 1993 թվ.
- Համաշխարհային բնական և մշակութային ժառանգության պահպանության մասին – 1994 թվ.
- Անապատացման դեմ պայքարի… - 1997 թվ.
- Տեղեկատվության հասանելիության, շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին – 1998 թվ:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում մեծ ուշադրություն է հատկացվել Հայաստանի Հանրապետության այնպիսի օրենքների և օրենսգրքերի պահանջներին, ինչպիսիք են՝

- Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները – 1991 թվ.
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին – 1991 թվ., ինչպես նաև սույն օրենքի նոր նախագծին.
- Բուսական աշխարհի մասին – 1999 թվ.
- Կենդանական աշխարհի մասին – 2000 թվ.
- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին – 2001 թվ.
- Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին – 2001 թվ.
- Հողային օրենսգիրքը – 2001 թվ.
- Ջրային օրենսգիրքը – 2002 թվ.:

Բացի այդ, «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում հաշվի են առնվել նաև Հայաստանի կառավարության կողմից հավանության արժանացած այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են՝

- Հայաստանի շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագիրը – 1998 թվ.
- Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը – 2001 թվ.
- Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիրը – 2002 թվ.:

Հարկ է նշել, որ «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակումը Հայաստանի կառավարության 2006 թվ. գործունեության միջոցառումների ծրագրում ընդգրկված է որպես գերակա խնդիր:

Կառավարման պլանի մշակման ընթացքում ուսումնասիրվել և գնահատվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման առանձնահատկությունները: Ընդ որում՝ գնահատումն իրականացվել է 2005 և 2006 թվականներին՝ Վայրի բնության պահպանության հիմնադրամի (WWF) և Համաշխարհային բանկի մշակած մեթոդիկայով: Գնահատման արդյունքում մշակվել են ազգային պարկի կառավարման բարելավման գործողություններ, որոնք ուղղված են ինչպես «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառուցվածքային բարեփոխումներին, այնպես էլ կադրերի մասնագիտական պատրաստվածությանն ու ծառայողական պարտականությունների սահմանմանը:

Մեծ ուշադրություն է հատկացվել «Սևան» ազգային պարկին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագրին և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման հնարավորություններին: Ընդ որում՝ մասնակցային կառավարման գործողությունները ուղղված են «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բնական էկոհամակարգերի բարելավմանը, ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների կառավարմանը, ինչպես նաև տուրիզմի և ռեկրեացիայի կարգավորմանը:

Կառավարման պլանի մշակման ընթացքում գնահատվել է «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տնտեսական գործունեության, բնական պաշարների օգտագործման բնագավառում շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը, բացահայտվել են պարկին հարակից համայնքների բնակչության կողմից կենսաբանական ռեսուրսների (անտառ, անտառային կողմնարդյունք, արոտավայրեր, ջրային կենսաբազմազանություն) օգտագործման հասանելիության և օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման առանձնահատկությունները: Իրականացվել է կենսաբանական և գենետիկական ռեսուրսների (բնափայտ, անտառային պտուղներ և հատապտուղներ, ուտելու բույսեր, կերաբույսեր, դեղաբույսեր, սնկեր, խեցգետիններ, ձկներ, թռչուններ, կաթնասուններ) գույքագրում, բացահայտվել են էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող հիմնական գործոնները, որոշվել են շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափանիշները և մշակվել են էկոհամակարգերի վիճակի զարգացման միտումների կանխագուշակման մեթոդները: Բացի այդ, դիտարկվել են նաև «Սևան» ազգային պարկի տարածքում տուրիզմի և ռեկրեացիայի զարգացման ուղիները, գույքագրվել են բնական և մշակութային ժառանգության օբյեկտները:

Մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու քարտեզագրման ուղղությամբ: Կենսաբազմազանության և անտառային տարածքների գույքագրման արդյունքների հիման վրա որոշվել և քարտեզագրվել են «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները: Քարտեզագրվել են նաև Կարմիր գրքում գրանցված, էնդեմիկ, հազվագյուտ բուսական ու կենդանական տեսակների տեղաբաշխումը, անտառային տարածքների բաշխվածությունը ըստ ծառուտների լրիվության, բոնիտետի դասերի, տարիքային խմբերի: Տրվել է նաև հիմնական տուրիստական երթուղիների քարտեզը:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանը կպահովի բնապահպանական և տնտեսական ոլորտների ինտեգրացման ուղղությամբ նախատեսված գործողությունների իրականացումը: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունի ազգային պարկի և կենսաբանական բազմազանության մոնիտորինգի իրականացումը, որը կարող է հիմք հանդիսանալ ընկալելու ազդեցության էությունը և միջոցներ ձեռնարկել պահպանության համար: Մոնիտորինգի իրականացման գործողությունները կնպաստեն ազգաբնակչության համար ազգային պարկի տնտեսական արժեքների հասանելիությանը, ինչպես նաև տեղական համայնքներին շահույթի մասնահանման արդյունավետ

քաղաքականության և մեխանիզմների մշակմանը, որը հնարավորություն կտա ազգային պարկի լիարժեք գործունեության համար ապահովել կայուն ֆինանսավորում:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանը կնպաստի գործող իրավական ակտերի առավել արդյունավետ և հավասարակշռված կիրարկմանը, որի հետևանքով զգալիորեն կկանխարգելվեն գլոբալ կարևորության կենսաբազմազանության կորուստը, կբարելավվի տնտեսական գործունեության հավասարաչափ իրականացումը: Կառավարման պլանի կարևորագույն նպատակն է ապահովել, որպեսզի կենսաբազմազանության պահպանության պահանջները հավասարակշռվեն տեղական բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված օժանդակության հետ:

# Բ Ա Ժ Ի Ն   1. «Սևան» ազգային պարկի ստեղծումը և տեղադրությունը

«Սևան» ազգային պարկը հիմնադրվել է Հայկական ՍՍՀ Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների Խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի թիվ 125 որոշմամբ՝ Սևանա լճի բնական էկոհամակարգը պահպանելու նպատակով:

«Սևան» ազգային պարկը գտնվում է հանրապետության հյուսիս–արևելյան հատվածում՝ Գեղարքունիքի մարզում: Շրջապատված է Գեղամա, Վարդենիսի, Սևանի, Փամբակի և Արեգունու լեռնաշղթաներով: Այն ընդգրկում է լճի ջրային հայելին և ափամերձ տարածքի ջրից ազատված հատակային գրունտները՝ հիմնականում մինչև շուրջլճյա ավտոճանապարհը: Ըստ վերը նշված որոշման՝ պարկի տարածքը կազմել է 150,1 հազար հա, որից ջրային մակերեսը 125,3 հազ. հա, իսկ ցամաքային տարածքը՝ 24.8 հազար հա, որից Սևանի շրջանին բաժին է ընկել 2700 հա, Կամոյի շրջանին՝ 3200 հա, Մարտունու շրջանին՝ 3500 հա, Վարդենիսի շրջանին՝ 11400 հա, Կրասնոսելսկի շրջանին՝ 4000 հա: Սույն որոշմամբ պարկը բաժանվել է երեք գործառնական գոտիների. 5 արգելոցային (Արտանիշի՝ 6420 հա, Նորատուսի՝ 3600 հա, Լիճքի՝ 600 հա, Կարճաղբյուրի՝ 3750 հա, Գիլլիի՝ 1000 հա) 15370 հա ընդհանուր մակերեսով և 10 արգելավայրային (Ծովինարի՝ 400 հա, մնացածները՝ հետևյալ գետերի գետաբերանային հատվածներում՝ Գավառագետ – 3.5 կմ, Ծակքար – 6.5 կմ, Լիճք – 2 կմ, Արգիչի – 3 կմ, Մարտունին – 1.8 կմ, Վարդենիս – 2 կմ, Մակենիս-Կարճաղբյուր – 1.5 կմ, Մասրիկ – 8 կմ, Բաքաջան – 6 կմ), ռեկրեացիոն (Սևանի շրջանում՝ 620 հա, Սևանի և Կրասնոսելսկի շրջաններում՝ 3150 հա, Մարտունու շրջանում՝ 2500 հա, Վարդենիսի շրջանում՝ 400 հա, Կամոյի շրջանում՝ 600 հա)՝ 7270 հա ընդհանուր մակերեսով, պարկի մնացած տարածքը կազմել է տնտեսական գոտին: Պարկն ունի պահպանական գոտի, որն ընդգրկում է Սևանա լճի ողջ ավազանը՝ սահմանն անցնում է լիճը երիզող լեռնաշղթաների ջրբաժանով:

Մինչև 1997 թ. «Սևան» ազգային պարկի տարածքում գտնվող անտառային ֆոնդի հողերը տնօրինում էին Սևանի, Նորատուսի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի անտառտնտեսությունները: Վերջիններս 1997 թ. ՀՀ Բնապահպանության նախարարի թիվ 114 հրամանով լուծարվում են (բացի Ճամբարակի անտառտնտեսությունից) և դրանց գույքը հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցվում է «Սևան» ազգային պարկին: ՀՀ Բնապահպանության նախարարի 1998 թ. թիվ 91 հրամանով պարկին են հանձնվել նաև Սևանա լճի հանգստյան գոտու առափնյա տնտեսության տարածքները և գույքը:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15-ը մայիսի 2001 թ.) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ: ՀՀ Կառավարության 2002 թ. մայիսի 30-ի թիվ 927-Ն որոշմամբ «Սևան» ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպվում է «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության:

# ԲԱԺԻՆ 2. «Սևան» ազգային պարկի բնական պայմանները

## 2.1. ԿԼԻՄԱՆ

Սևանա լճի ջրհավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն են արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600–2800–ի միջև:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաանպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև $-36^0C$: Լճի հակադիր` Արեգունու ափին ձմեռը համեմատաբար մեղմ է, նվազագույն ջերմաստիճանը հասնում է $-25^0C$–ի: Բարձրադիր շրջաններում $0^0C$–ից բարձր օրերի թիվը հասնում է 200–ի, ցածրադիր գոտիներում` 260 օր: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվում է հուլիս–օգոստոս ամիսներին ($+28^0C$), նվազագույնը` հունվար–փետրվարին: Տարվա միջին ջերմաստիճանը տատանվում է $5\text{-}6^0C$–ի միջև:

Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրեկան և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75%, Մեծ Սևանում` 80-85%, ամռանը` համապատասխանաբար Փոքր Սևանում 65%, Մեծ Սևանում` 75%:

Ջրի և ցամաքի հարևանությամբ ու ռելիեֆի բազմազանությամբ է պայմանավորված քամիների գերակշռությունը այս տարածքում: Քամիների միջին տարեկան արագությունը ավազանում տատանվում է 1.5-6.0 մ/վրկ:

Սևանա լճի ջրհավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը: Լճի ջրհավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված տեղանքի բարձրությունից, ավելանում են տարեկան 400 մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում)՝ միջինը կազմելով 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ, այդ թվում` մայիս-հունիս ամիսներին` 115 մմ: Հիմնական գարնանային առավելագույն տեղումներից բացի դիտվում է նաև երկրորդ առավելագույնը` աշնանայինը: Տարվա ընթացքում նվազագույն քանակությամբ տեղումներ դիտվում են օգոստոս–սեպտեմբեր և հունվար- դեկտեմբեր ամիսներին:

Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը ձևավորվում է դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

## 2.2. ՌԵԼԻԵՖԸ

«Սևան» ազգային պարկի ափամերձ հատվածի ռելիեֆը (լճի ափից մինչև 1916 մետրը) ալիքավոր է և հարթ (Քարտեզ 1): Ափերը հիմնականում մեղմաթեք են, տեղ-տեղ զառիթափ` 3-8 մետր բարձրությամբ (օրինակ` Վարդենիկ-Արծվանիստ, Արտանիշ թերակղզու արևմտյան հատվածների ափերը): Պարկի Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի Գիհի-կաղնուտային ռելիկտային հատվածը, ինչպես նաև Սևան և Արտանիշ թերակղզիները ունեն բլրապատ, ժայռոտ և կտրտված ռելիեֆ: Սևանա թերակղզու արևելյան մասը մի ժայռապատ բարձունք է, որի ամենաբարձր կետը հասնում է 1982.3 մետր բարձրության:

Արտանիշ թերակղզու կենտրոնական և արևելյան մասը, 1915-2460.8 մետր բարձրությունների միջև, պատված են լեռնազանգվածով (բացառությամբ նրա արևմտյան մասի, որը հարթ է): Առավելագույն բարձրությունը Աղաթափա գագաթն է` 2460.8 մետր բարձրությամբ, որը գտնվում է թերակղզու կենտրոնական մասում: Արտանիշի թերակղզու կենտրոնական մասից լեռնաբազուկները ձգվում են ճառագայթաձև: Այստեղ մշտական հոսող գետեր չկան` միայն ժամանակավոր հոսող փոքրիկ գետակներ են:

«Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային հատվածը հիմնականում ընկած է 1950-ից 2500 մետր բարձրությունների միջև: Ռելիեֆը իրենից

ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ, թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Խոր ձորերով հոսում են մշտական գետերը՝ Դարանակ, Փամբակ, Շամպիր, Ծափաթաղ և Ձիլ:

«Սևան» ազգային պարկի տարածքը ընդգրկում է Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիչի և այլ գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի մակարդակի իջեցման և գետերի էրոզիայի բազիսի իջեցման հետևանքով առաջացել են 10-6 մետր խորությամբ ձորակներ:

## 2.3. ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Սևան» ազգային պարկի սահմաններում է գտնվում Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճը՝ Սևանը, որի ծավալը 33.2 կմ$^3$ է, մակերեսը՝ 1238 կմ$^2$ (Քարտեզ 2): Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ$^3$), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ$^3$): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ափի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4–ը՝ Փոքր Սևան, 24–ը՝ Մեծ Սևան: Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ$^2$ (լճի ողջ ջրհավաք ավազանի մակերեսի 76.2%), իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ$^2$ (լճի ողջ ջրհավաք ավազանի մակերեսի 23.8%-ը):

Գեղամա լեռնազանգվածից սկիզբ են առնում 5 գետեր, որոնցից Գավառագետը թափվում է Փոքր Սևան, իսկ մնացած գետերը, Շողվակ, Ծակքար, Բախտակ և Լիճք՝ Մեծ Սևան: Գեղամա լեռնազանգվածի գետերի ընդհանուր հոսքի մեծությունը կազմում է 219x10$^6$ մ$^3$, որը Սևանա լիճ թափվող գետերի ընդհանուր հոսքի 27.73 %-ն է:

Վարդենիսի լեռնազանգվածից սկիզբ են առնում 9 գետեր՝ Արգիչի, Մարտունի, Աստղաձոր, Ձոլաքար, Սելավգետակ, Վարդենիկ, Արծվանիստ, Մակենիս և Մասրիկ, որոնք թափվում են Մեծ Սևան: Վարդենիսի լեռնազանգվածի գետերի ընդհանուր հոսքի մեծությունը կազմում է 483 x 10$^6$ մ$^3$, որը Սևանա լիճ թափվող գետերի ընդհանուր հոսքի 61.9 % - ն է:

Սևանի լեռնազանգվածից սկիզբ են առնում 11 գետեր և առվակներ ՝ Փոքր Մասրիկ, Շեկասար, Գյունեյ, Դարանակ, Փամբակ, Շիշկերտ, Ծափաթաղ, Ձիլ, Դալի, Նորուզ և Արտանիշ, որոնք թափվում են Մեծ Սևան: Սևանի լեռնազանգվածի գետերի ընդհանուր հոսքի մեծությունը կազմում է 36.5x10$^6$ մ$^3$, որը Սևանա լիճ թափվող գետերի ընդհանուր հոսքի 4.62 % - ն է:

Արեգունու լեռնաշղթայից սկիզբ են առնում 2 ոչ մեծ գետեր՝ Սպիտակաջուր և Դրախտիկ, իսկ Փամբակի լեռնաշղթայից՝ միայն Ձկնագետը, որոնք թափվում են Փոքր Սևան: Արեգունի–Փամբակ լեռնազանգվածի գետերի ընդհանուր հոսքի մեծությունը կազմում է 45.4 x 10$^6$ մ$^3$, որը Սևանա լիճ թափվող գետերի ընդհանուր հոսքի 5.75 %-ն է:

Գետերի միջին տարեկան հոսքը կազմում է 26.8 մ$^3$/վրկ. (առանց Արփա-Սևան ջրատարի): Սևանա լիճ թափվող գետերի ջրածախսի դինամիկան ցույց է տալիս, որ Գավառագետ, Ծակքար, Արգիչի, Վարդենիկ, Մակենիս և Մասրիկ գետերում տարվա ամենաջրառատ ժամանակաշրջանը ապրիլ-հունիս ամիսներն են, որը կապված է գարնանային վարարումների հետ: Դրանք սկսվում են ապրիլի առաջին կամ երկրորդ տասնօրյակից ու հիմնականում ավարտվում հունիսի երկրորդ տասնօրյակի ընթացքում: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունեն լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային:

Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ$^3$: Այսօր այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման նպատակներով վերցված ջուրը:

## 2.4. ՀՈՂԵՐԸ

«Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրորելիտային տափաստանացված: Զգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: «Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդես են գալիս լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մետր և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

## 2.5. ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

### 2.5.1. Ֆլորան

2005 թվականի դաշտային հետազոտությունների արդյունքում, ինչպես նաև գրական և հերբարիումային տվյալների համաձայն, պարզվել է, որ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1619 տեսակ: Ընդ որում՝ «Սևան» ազգային պարկի տարածքում աճում է անոթավոր բույսերի 1145 տեսակ, իսկ պահպանական գոտում՝ 1587: Պարկի ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով: Պահպանական գոտու ֆլորան ներկայացված է 32 ծառատեսակներով, 102 թփերի տեսակներով, 1146 բազմամյա խոտաբույսերով և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներով (բուսատեսակների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, որոնցից 13–ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ են: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի 3 էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (պահպանական գոտում դրանք 48-ն են):

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ), որոնցից 180-ը պատկանում են ագարիկալ սնկերին, 55-ը՝ աֆիլոֆորայիններին, իսկ 32-ը՝ գաստերոմիցետներին: Ընդ որում՝ պարկի տարածքում հայտնաբերված սնկերը հիմնականում հանդիպում են քայքայված բնափայտի, կոճղերի, գոմաղբի և ավազուտների վրա, այսինքն՝ պատկանում են քսիլոտրոֆ և պսամոտրոֆ էկոլոգիական խմբերին, իսկ պահպանական գոտու սնկերը ավելի բազմազան սուբստրատների վրա են զարգանում:

Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են և վաճառվում են շուկաներում հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (Pleurotus ostreatus), յուղասունկ հատիկավոր (Suillus granulatus), շեկլիկ (Lactarius deliciosus), աղվեսասունկ (Cantharellus cibarius), կոճղասունկ մարգագետնային (Marasmius oreades), շամպինյոն սովորական (Agaricus campestris), շամպինյոն դաշտային (Agaricus arvensis), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (Coprinus comatus), շարքասնկերից (Tricholomataceae)՝ կոճղասունկ աշնանային (Armillaria mellea), լեպիստա մանուշակագույն ոտիկով (Lepista personata), շարքասունկ հողամոխրագույն (Tricholoma terreum): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ սնկեր,

որոնք ունեն բուժիչ հատկություններ: Դրանք են՝ ագարիկոմիցետներից 28 տեսակներ, աֆիլոֆորոմիցետներից 17 տեսակներ և գաստերոմիցետներից 8 տեսակներ: Բնակչությունը չի օգտագործում այդ սնկերը, քանի որ տեղեկացված չեն դրանց օգտագործման ձևերին և բուժիչ հատկություններին:

24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (Paxillus involutus), կեղծ կոճղասունկ (Hypholoma fasciculare), ճանճասպան հովազային (Amanita pantherina), շամպինյոն դեղնամաշկ (Agaricus xanthodermus), գոմաղբասունկ թեփուկավոր (Coprinus picaceus), սարդոստայնասնկեր (Cortinarius), թելիկասնկեր (Inocybe), շարքասնկեր (Tricholoma) ցեղերի որոշ տեսակներ և այլն: Տեղացի բնակիչները այդ տեսակները կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքել և թունավորման դեպքերը հազվադեպ են:

2.5.2. Բուսականությունը

Սևանա լիճը շրջապատող լեռների և դրանց լանջերի տարբեր դիրքադրությունների, հողերի տիպերի, ռելյեֆային առանձնահատկությունների և այլ հանգամանքների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզայիկ բնույթ, լավ է արտահայտված նաև ուղղահայաց գոտիականությունը:

Գեղամա և Վարդենիսի լեռների լանջերին ներկայացված են լեռնային տափաստանային համակեցությունները (ծովի մակարդակից 1900-2200 մ), որոնցում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (Festuca valesiaca), բարակոտնուկ սանրաձև (Koeleria cristata), փետրախոտ տխուր (Stipa tirsa) և այլ հացազգիները: Դրանցում զգալի են տրագականտ-տային աստրագալների և ուրցի բազմաթիվ տեսակների մասնակցությունը: Բարձրության հետ տափաստանները փոխարինվում են լեռնային մարգագետնատափաստաններով, որտեղ համակեցություններում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (Festuca valesiaca), շյուղախոտ ոչխարային (Festuca ovina), բոշխ ցածր (Carex humilis), դաշտավլուկ մարգագետնային (Poa pratensis) և այլ տեսակները: Ծովի մակարդակից 2300 մ-ից բարձր բուսականության բնույթը աստիճանաբար փոխվում է դեպի մերձալպյան մարգագետինները, որոնց առավել տիպիկ ներկայացուցիչներից են բարակոտնուկ սանրաձև (Koeleria cristata), դաշտավլուկ ալպյան (Poa alpina), գարի մանուշակագույն (Hordeum violaceum), բրոմոպսիս խայտաբղետ (Bromopsis variegata), քոսքոսիկ կովկասյան (Scabiosa caucasica), ոզնախոտ կծկավոր (Dactylis glomerata), զանգակ խմբված (Campanula glomerata), թթվիճ խոշորածաղիկ (Betonica macrantha), երեքնուկի (Trifolium) տարբեր տեսակներ և այլն: 2700-3200 մ բարձրությունները զբաղեցնում են ալպյան ցածրախոտ մարգագետինները և ալպյան գորգերը, ուր հաճախ հանդիպում են զանգակ եռատամ (Campanula tridentata), խատուտիկ Ստևենի (Taraxacum stevenii), բերենիկե բոզային (Veronica gentianoides), շյուղախոտ ոչխարային (Festuca ovina), բոշխ տխուր (Carex tristis) և մի շարք այլ տեսակներ: Լեռնային լանջերի որոշ ձորերում հանդիպում են թփուտներ՝ կազմված հիմնականում մասրենու (Rosa spinosissima, R.canina) և ասպիրակի (Spiraea crenata) տեսակներից:

Թփուտները լավ են արտահայտված լճի հյուսիս-արևելյան ափին, Սևանի և Արեգունու լեռնաշղթաների լանջերին և Արտանիշ թերակղզում: Այդպիսիք են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (Sorbus kuznetsovii), արոսենի, ծտախնձոր (S.aucuparia), արոսենի Հայաստանի (S.hajastana), արոսենի հունական, ասպար (S.graeca)), մասրենու (Rosa spinosissima, R.canina), ասպիրակի (Spiraea crenata), ալոճենու (Crataegus orientalis), ուռենու (Salix caprea) և մի շարք այլ թփատեսակների համակեցությունները:

Արեգունու լեռնաշղթայի լանջերին, ինչպես նաև լճի հյուսիսային մասում (Սևանի լեռնաշղթա) ստորին գոտին կազմում են տրագականտային աստրագալների թփուտները՝ գազ ոսկեգույն (Astragalus aureus), գազ մանրագլուխ (A.microcephalus), գազ գյունեյի (A.gjunaicus) և այլն: Ավելի բարձր, 2000-2100 մ-ից վերև, մարգագետնատափաստանային բուսականության հետ մեկտեղ տարածված են արևելյան կաղնու (Quercus macranthera) մնացորդային կաղնուտները և չորասեր թփերի ու տափաստանային խոտաբույսերի մասնակցությամբ գիհու նոսրանտառները: Վերջիններս բավականին ընդարձակ

տարածքներ են զբաղեցնում Ջիլ, Դարանակ, Բաբաջան և Արտանիշ գյուղերի մոտ: Գերակայող տեսակներն են գիհի բազմապտուղը (Juniperus polycarpos) և գիհի երկարավունը (J.oblonga), որոնք կազմում են ինչպես մոնոդոմինանտ այնպես էլ խառը ասոցիացիաներ: Առանձին տարածքներում գիհիներին միանում են այլ թփատեսակներ՝ ասպիրակի (Spirea crenata, S.hypericifolia), արոսենի Հայաստանի (Sorbus hajastana), արոսենի հունական, ասպաք (S.graeca) և այլն: Գիհի սաբինան (J. Sabina) և գիհի փռվողը (J. depressa) որոշ տարածություններ են գրավում նաև մերձալպյան գոտում, երբեմն նույնիսկ տափաստանային գոտում:

Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության այնպիսի էքստրազոնալ տիպեր, ինչպիսիք են փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր բարձունքային գոտիներում:

Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ), որոնց զգալի մասը, Սևանա լճի մակարդակի ենթադրվող բարձրացման դեպքում, կմնա ջրի տակ:

Ինչ վերաբերվում է ջրային բուսականությանը, ապա անմիջապես Սևանա լճում, ըստ ջրի խորության և պարզության, այն կազմում է երկու արտահայտված գոտի՝ մակրոֆիտների (հիմնականում ծաղկավոր բույսեր) և խարային ջրիմուռների ու ջրային մամուռների: Ծովինար, Նորատուս, Ջիլաքար, Մարտունի, Լիճք գյուղերի մերձափնյա տարածքներում կան ոչ մեծ ճահիճներ, ուր աճում են բոշխ կարճամազ (Carex hirta), դուն երկար (Cyperus longus), դուն թուխ (C.fuscus), ճլախոտ թաբերնեմոնթանի (Schoenoplectus tabernaemontani) և շատ այլ տեսակներ:

## 2.6. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

### 2.6.1. Անողնաշարավորներ

#### 2.6.1.1. Փափկամարմիններ և Հոդվածոտանիներ.

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (Mollusca) 43 տեսակներ, որոնք պատկանում են խխունջներին և լորձնամոլյուսկներին, և Հոդվածոտանիների 639 տեսակներ, որոնք պատկանում են միջատներին (անողնաշարավոր կենդանիների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին): Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (Maculinea nausithous Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

#### 2.6.1.2. Խեցգետիններ.

Երկարաչանչ խեցգետինը (Pontastacus leptodactilus) Սևանա լճում հայտնաբերվել է 70-ական թվականների վերջին՝ պատահական ներմուծման շնորհիվ: Ներկայումս խեցգետնի պոպուլյացիայի մասին տեղեկություններ չկան, քանի որ գիտական հետազոտություններ չեն կատարվել: Լիճ լցվող գետերում խեցգետին չի հանդիպել, սակայն խեցգետինը բավականին շատ է Սևանից սկիզբ առնող Հրազդան գետում: Երկարաչանչ խեցգետինը, ի տարբերություն այլ տեսակների, չի ձմեռում:

### 2.6.2. Ողնաշարավորներ

#### 2.6.2.1. Ձկներ.

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout–Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (S. ischchan aestivalis), Ձմեռային բախտակ (S. ischchan ischchan), Գեղարքունի (S. ischchan gegarkuni), Բոջակ (S. ischchan danilewskii):

Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (Whitefish – Coregonus lavaretus):

Ծածանազգի ձկնատեսակներից են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (**Khrami carp-Varicorhinus capoeta sevangi**) և Սևանի բեղլուն (**Sevan barble–Barbus goktschaicus**): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (**Crucian carp–Carassius auratus gibelio**), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից:

1987 թվականից Սևանա լճի երկու էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն, ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

2.6.2.2. Երկկենցաղներ.

Համաձայն 2005 թվականի դաշտային հետազոտությունների արդյունքների և համապատասխան գրականության աղբյուրների՝ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են երկկենցաղների հետևյալ 4 տեսակները, որոնք պատկանում են Յատկողներ (Salientia) կարգին՝ լճագորտ (Rana ridibunda), փոքրասիական գորտ (Rana macrocnemis), կանաչ դոդոշ (Bufo viridis), Շելկովնիկովի ծառագորտ (H.a.shelkovnikovi):

2.6.2.3. Սողուններ.

Համաձայն 2005 թվականի դաշտային հետազոտությունների արդյունքների և համապատասխան գրականության աղբյուրների՝ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են սողունների 16 տեսակներ (սողունների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին), որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (Lacertilia) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (Serpentes) կարգին: Դրանցից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (E.a.transcaucasica) և փոքրասիական մողեսը (Lacerta parva):

2.6.2.4. Թռչուններ.

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ (թռչունների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին), որոնք պատկանում են հետևյալ կարգաբանական խմբերին.

1. Սուզակներ (Podicipediformes) – 7 տեսակ.
2. Ջկնկուլ (Pelecaniformes) – 4 տեսակ.
3. Արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) –11 տեսակ.
4. Ֆլամինգո (Phoenicopteriformes) – 1 տեսակ.
5. Գիշատիչներ (Falconiformes) – 30 տեսակ.
6. Սագեր, բադեր, կարապներ (Anseriformes) – 28 տեսակ.
7. Հավազգիներ (Galliformes) – 3 տեսակ.
8. Կռունկ, փարփար (Gruiformes) – 9 տեսակ.
9. Որոր, կտցար, քարադր (Charadriiformes) – 49 տեսակ.
10. Աղավնազգիներ (Columbiformes) – 4 տեսակ.
11. Կկուներ (Cuculiformes) – 1 տեսակ.
12. Բու (Strigiformes) – 3 տեսակ.
13. Այծկիթ (Caprimulgiformes) – 1 տեսակ.
14. Մանգաղաթևեր, ծիծեռնակներ (Apodiformes) – 5 տեսակ.
15. Մեղվակեր, հոպոպ, ալկիոն (Coraciiformes) – 5 տեսակ.
16. Փայտփոր, վիզգցուկ (Piciformes) – 4 տեսակ.
17. Ճնճղուկանմաններ (Passeriformes) – 102 տեսակ:

39 թռչնատեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (Laurus armenicus) էնդեմիկ տեսակ է:

Ազգային պարկի տարածքում կան 26 տնտեսապես կարևոր նշանակություն ունեցող թռչնատեսակներ: Դրանցից կռնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը,

լորը, սովորական տատրակը, թխակապույտ աղավնին, անտառային աղավնին և այլն հետաքրքրություն են ներկայացնում որսի տեսանկյունից:

### 2.6.2.5. Կաթնասուններ.

Համաձայն 2005 թվականի դաշտային հետազոտությունների արդյունքների և համապատասխան գրականության աղբյուրների՝ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ (կաթնասունների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին), որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

1. Միջատակերներ (Insectivora) - 7 տեսակ.
2. Կրծողներ (Rodentia) - 15 տեսակ.
3. Նապաստակներ (Logomorpha) - 1 տեսակ.
4. Չղջիկներ (Chiroptera) - 7 տեսակ.
5. Գիշատիչներ (Carnivora) - 11 տեսակ.
6. Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla) - 3 տեսակ:

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակզաքիսը, անտառային կատուն, բեզոարյան այծը):

# ԲԱԺԻՆ 3. «Սևան» ազգային պարկի սահմանները

## 3.1. «Սևան» ազգային պարկի սահմանների որոշման սկզբունքները

«Սևան» ազգային պարկի առաջարկվող սահմանը փոփոխություն է կրում Հայկական ՍՍՀ Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների Խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի թիվ 125 որոշմամբ նկարագրված սահմանի նկատմամբ՝ հիմք ընդունելով հետևյալ սկզբումքները. Սևանա լճի նախկին ափագիծը՝ ծովի մակարդակից 1915.89 մ բարձրությունը, նախկին անտառտնտեսությունների տարածքները, լճի և շրջակա լանդշա ֆտների էկոլոգիական վիճակի ու բնական պաշարների (բուսական, անտառային, կենդանական, ջրային) պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրը, ինչպես նաև ազգային պարկի կառավարման պլանների մշակման շրջանակներում անտառագետների, քարտեզագիրների, կենդանաբանների, բուսաբանների, հիդրոլոգների դաշտային ուսումնասիրությունների արդյունքները և պետական կադաստրով գրանցված համայնքային սահմանները: Ըստ վերը նշված սկզբունքների՝ առաջարկվող սահմանում «Սևան» ազգային պարկի տարածքը, Սևանա լճի հայելու հետ միասին, կազմում է 1474.56 կմ$^2$ (147 456 հա), իսկ առանց լճի հայելու՝ 226.97 կմ$^2$ (22 697 հա): Պահպանական գոտու տարածքը կազմում է 3427.75 կմ$^2$ (342 775 հա):

## 3.2. «Սևան» ազգային պարկի սահմանների նկարագրությունը

«Սևան» ազգային պարկի սահմանն անցնում է (Քարտեզ 3).

1. Սկսած Երևան-Սևան ավտոմայրուղու Գագարին բնակավայր մտնող խաչմերուկից՝ կամուրջի մոտից՝ ***Ա*** կետից (X=489650, Y=4489120)* ձգվում 50 մետր լայնությամբ և 4.7 կմ երկարությամբ, ավտոմայրուղու աջ և ձախ կողմերով մինչև Սևան քաղաք մտնող խաչմերուկ՝ չհասած 150 մետր ***Բ*** կետը (X=494230, Y=4489250):
2.[1] Այնուհետև սկսվում է Երևան-Սևան-Դիլիջան ավտոմայրուղու Սևան քաղաք մտնող խաչմերուկի 910 մետր դեպի Սևան թերակղզի հատվածից՝ ***Գ*** կետից (X=495520, Y=4489060): Այստեղից գրունտային ճանապարհով իջնում է 300 մետր դեպի հարավ-արևելք, որից հետո թեքվում հարավային ուղղությամբ անցնում 1.0 կմ, կտրում է Սևան-Գավառ ավտոճանապարհը, Սևան քաղաք մտնող խաչմերուկի 1.58 կմ հատվածից՝ ***Դ*** կետից (X=495490, Y=4487960), հետո մոտ 1.5 կմ անցնում Լճաշեն գյուղի համայնքային սահմանով և դուրս գալիս Լճաշեն-Չկալովկա միջգյուղական ճանապարհի՝ ***Ե*** կետը (X=495270, Y=4486720): Այստեղից միջգյուղական ճանապարհին զուգահեռ Լճաշեն գյուղի համայնքային սահմանով 3.6 կմ անցնում է արևելյան ուղղությամբ և Չկալովկա գյուղի մոտ դուրս գալիս Սևան-Գավառ ավտոճանապարհ: Ապա անցնում է Չկալովկա համայնքի վարչական սահմանով 4,3 կմ մինչև Չկալովկա և Նորաշեն համայնքների վարչական սահմանների հատման կետը: Ապա Նորաշեն համայնքի վարչական սահմանով ձգվում է 0,3 կմ և միանում Սևան-Գավառ ավտոճանապարհին, որով էլ շարունակվում է 0,76 կմ և վերստին միանում Նորաշեն համայնքի վարչական սահմանին և ձգվում 0,96 կմ: Ապա նորից անցնում է Սևան-Գավառ ավտոճանապարհով 1,07 կմ, այնուհետև ձվում անտառի սահմանով 1,3 կմ հասնում Ծովազարդ բնակավայրի սկիհզբ, ապա թեքվում է արևելք, կտրում անտառն ու հասնում Սևան-Գավառ ավտոճանապարհ, ձգվելով 0,9 կմ: այնուհետև անցնում է Սևան-Գավառ ավտոճանապարհով 0,7կմ, ապա Ծովազարդ համայնքի վարչական սահմանով 0,9 կմ, այնուհետև վերստին Սևան-Գավառ ավտոճանապարհով 0,3 կմ: Ապա անցնում է 1,4 կմ Ծովազարդ համայնքի վարչական

* X-ը արևելյան երկայնությունն է, Y-ը հյուսիսային լայնությունը: Կետի աշխարհագրական կոորդինատները արտահայտված են մետրական մեծությունով, Գաուսս Կրուգեր պրոյեկցիայով և Պուլկովո կոորդինատային սիստեմով:

[1] Սահմանների փոփոխության վերաբերյալ մեկնաբանությունը 3.4. բաժնի 1-ին ենթակետում:

սահմանով, 0,3 կմ Սևան-Գավառ ավտոճանապարհով և 0,1 կմ անտառի սահմանով ու նորից միանում Ծովազարդ համայնքի վարչական սահմանին և նրանով ձգվում 1,7 կմ մինչև Ծովազարդ և Լճափ համայնքների վարչական սահմանների միացման տեղը: Որից հետո սահմանն անցնում է Լճափ համայնքի վարչական սահմանով 0,15 կմ, ապա Անտառի սահմանով 0,2 կմ: Լճափ-Բերդկունք-Հայրավանք հատվածում անցնում է համայնքային հողերի սահմաններով: Չկալովկայից Նորաշեն անցնում է արևելյան ուղղությամբ, մինչև Լճափ հարավ-արևելյան, ապա թեքվում հարավ-արևելք անցնում 19.6 կմ մինչև Հայրավանքի եկեղեցիական համալիրը: Շրջանցելով Հայրավանքի եկեղեցիական համալիրը անցնում է արհեստական անտառտնկարկների եզրով հարավ-արևելյան ուղղությամբ 1.1 կմ, դուրս գալիս Սևան-Մարտունի ավտոճանապարհ՝ Նորատուսի համայնքային սահման՝ Ձ կետը (X=509150, Y=4476430) և 2.9 կմ անցնում ավտոճանապարհով՝ *Է* կետը (X=511830, Y=4474290): Որից հետո թեքվում է դեպի արևելք և 5.8 կմ անցնում Նորատուսի համայնքային սահմանի և արհեստական անտառտնկարկների եզրով մինչև Նորատուս թերակղզու կենտրոնում գտնվող, բարձր հաճախականության ռադիոլոկացիոն կայանի դարպասները՝ *Ը* կետը (X=516680, Y=4474636): Բարձր հաճախականության ռադիոլոկացիոն կայանից թեքվում է դեպի հարավ անցնում 8.8 կմ արհեստական անտառտնկարկների եզրով և հասնում Սևան-Մարտունի ավտոճանապարհ՝ *Թ* կետը (X=518000, Y=4467007): Այնուհետև շարունակում դեպի հարավ 7.0 կմ Նորատուս-Մարտունի ավտոճանապահից 50-150 մ հեռավորությամբ աջ ընկած քարափով, որից հետո շրջանցում Սառիկյա հրվանդանի Կարմիր ամառանոցը և անցնում ավտոճանապարհով 9.1 կմ մինչև Ծակքար գետի ձախակողմյան բազուկը: Երանոս գյուղ մտնող խաչմերուկի մոտ 0.8 կմ շրջանցում է Երանոս գյուղին պատկանող բնակելի տարածքը:

3.[2] Ծակքար համայնքի սահմանաեզրից անցնում է Ծակքար գետի ձախակողմյան բազուկով հոսանք ի վար 0.2 կմ, որից հետո թեքվում դեպի արևելք և մոտ 0.4 կմ անցնում Բախտակ գետի աջակողմյան մասով հոսանք ի վեր: Այստեղից անցնելով 1.6 կմ Լիճքի ձկնաբուծարանի մոտից չհասած Գավառ-Մարտունի ավտոճանապարհ զուգահեռ անցնում 2.5 կմ, այնուհետև անցնում ավտոճանապարհով մոտ 800 մետր մինչև Արգիճի գետ: Որից հետո անցնում է ավտոճանապարհի աջակողմյան մասով 40 մ լայնությամբ և 0.8 կմ երկարությամբ և 2.1 կմ անցնում ավտոճանապարհով: Այնուհետև ավտոճանապարհից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս, հասնում ազգային պարկի արտադրական մասին և թեքվում է դեպի արևելք: Անտառի և բացատի սահմանով թեքվում դեպի հյուսիս-արևելք, հետո հանգստյան տան մոտով թեքվում է դեպի հյուսիս, ապա արևելք, հատում դաշտային ճանապարհը, Մարտունի գետը, հասնում կեղտաջրերի մաքրման և գազի կարգավորիչ կայաններին: Այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, անցնում լիճ տանող ճանապարհով և դուրս գալիս ցամաքուրդ: Անցնելով ցամաքուրդով և առվով դուրս գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ: Մարտունի-Վաղաշեն-Աստղաձոր-Ձոլաքար-Վարդենիկ-Ծովինար հատվածում անցնում է 17.5 կմ արհեստական անտառտնկարկների եզագծով կտրում է ավտոճանապարհը՝ *Ժ* կետ (X=541508, Y=4447632), անցնում ճանապարհի աջակողմյան մասով 0.5 կմ խորությամբ և 1.5 կմ երկարությամբ, որից հետո 200 մ չհասած Արփա-Սևան թունել դուրս գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ: Ավտոճանապարհով շարունակում 1.2 կմ մինչև Արծվանիստ գյուղի խաչմերուկ: Արծվանիստ գյուղի խաչմերուկից մինչև Ծովակ անցնում է արհեստական անտառտնկարկների եզրագծով մոտ 15.0 կմ (միայն Կարճաղբյուր գյուղի տակ մոտ 0.8 կմ երկարությամբ անցնում է Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհով):

4.[3] Ծովակ գյուղական բնակավայրի մոտից թեքվում է դեպի հյուսիս անցնում 7.5 կմ Սևանա լճի ցամաքած հատակի ափազծի և արհեստական անտառտնկարկի եզրով

---

[2] Սահմանների փոփոխության վերաբերյալ մեկնաբանությունը 3.4. բաժնի 2-րդ ենթակետում:

[3] Սահմանների փոփոխության վերաբերյալ մեկնաբանությունը 3.4. բաժնի 3-րդ ենթակետում:

անցնող Ծովակ-Նորակերտ ավտոճանապարհով՝ մինչև Նորակերտ գյուղ տանող խաչմերուկ: Այնտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և անցնում արհեստական անտառտնկարկի եզրով 16.2 կմ, 1.8 կմ չհասած Փամբակ գյուղի երկաթուղային կայարանը՝ ***Ի*** կետը (X=546578, Y=4470690), որից հետո անցնում է Փամբակ-Արտանիշ ավտոճանապարհով մինչև Նավրուզղարա գետի հունը՝ 19.5 կմ: Այստեղից անցնելով երկաթգծով մոտ 1.5 կմ Արտանիշ գյուղ տանող ճանապարհի խաչմերուկից թեքվում է դեպի արևմուտք անցնում Արտանիշ գյուղի համայնքի հարավային սահմանի գրունտային ճանապարհով՝ սկզբում թեքվում է դեպի արևմուտք անցնում 4.0կմ, այնուհետև թեքվում դեպի հյուսիս-արևմուտք 2.3 կմ: Որից հետո թեքվում է դեպի արևմուտք, շրջանցելով Արտանիշ թերակղզու լեռների հյուսիսային լանջերը անցնում 3.6 կմ Այստեղից անցնում է Շորժա գյուղի համայնքային սահմանով, սկզբում թեքվում դեպի հարավ անցնում 4.4 կմ, հետո դեպի արևմուտք և հյուսիս դաշտային ճանապարհով անցնում 6.0 կմ և Շորժա գյուղի մոտ (600 մետր չհասած Շորժա գյուղ մտնող ավտոճանապարհի խաչմերուկ) դուրս է գալիս Արտանիշ-Ծովագյուղ ճանապարհ:

5.[4] Դարանակ-Փամբակ-Ծափաթաղ-Ձիլ համայնքային տարածքներում անցնում է առանձին կտորներով, որտեղ տարածված են կաղնու և գիհու ռելիկտային նոսր անտառները.

- Առաջին հատվածը ձգվում է Դարանակ գյուղի վերջից, գետի աջ և ձախ ափերով դեպի հյուսիս-արևելք 1.3 կմ լայնությամբ և դեպի հյուսիս-արևմուտք 2.8-4.0 կմ:
- Երկրորդ հատվածը սկսում է չհասած Դարանակ գետ 2.4 կմ-ից և ձգվում է երկաթգծի երկայնքով մոտ 1.7 կմ երկարությամբ և դեպի հյուսիս՝ լանջն ի վեր մոտ 800 մետր:
- Երրորդ հատվածն ընկած է Փամբակ գյուղից 800 մետր դեպի հյուսիս և ձգվում է Փամբակ գետի ձախ ափից 370 մետր լայնությամբ և լանջն ի վեր 700 մետր երկարությամբ:
- Չորրորդ հատվածի սահմանը սկսում է 2.0 կմ չհասած Շամպիր գետ, ձգվում է երկաթգծից դեպի լանջն ի վեր մոտ 4.7 կմ երկարությամբ: Շամպիր գետի գետաբերանից մոտ 2.1 կմ հեռավորությունից հատված ձգվում է գետի երկու ափերով մոտ 1.0-1.6 կմ լայնությամբ:
- Հինգերորդ հատվածն ընկած է Ծափաթաղ և Ձիլ գյուղերի միջև: Սահմանը սկսվում է Ձիլ գետից 1.5 կմ ներքևից, ձգվում հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ 5.2 կմ լայնությամբ մինչև Ծափաթաղ գետ և երկաթգծից դեպի լանջն ի վեր, հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք 3.2 կմ երկարությամբ:

6.[5] Շորժա գյուղի մոտից ձգվում է Շորժա-Ծովագյուղ ճանապարհով դեպի արևմուտք 2.9 կմ, ապա դեպի հյուսիս 2.0 կմ, որից հետո թեքվում դեպի հյուսիս-արևմուտք և 3.5 կմ ձգվում ճանապարհով մինչև Դրախտիկ գետ: Դրախտիկ գետի գետաբերանի մոտից անցնում է ավտոճանապարհի հարավից մոտ 50-160 մետր լայնությամբ և 450 մետր երկարությամբ: Հետո ձգվում է մոտ 3.4 կմ ավտոճանապարհով հյուսիս-արևմտյան ուղղությամբ մինչև Դրախտիկի համայնքային սահմանի վերջը՝ Դերեգոմի ձմեռանոցի մոտ գտնվող գետակը՝ ***Լ*** կետը (X=515270, Y=4492233): Այստեղից թեքվում է դեպի հյուսիս, ձորով 1.9 կմ բարձրանում վեր, հասնում Արեգունու լեռնաշղթայի ջրբաժանին և 2502 մ բարձրության վրա՝ ***Խ*** կետը (X=515000, Y=4494154), միանում պահպանական գոտուն: Պահպանական գոտուն համընթաց Արեգունու լեռնաշղթայի ջրբաժանով ձգվում է 19.1 կմ մինչև Ծովագյուղի համայնքային սահմանը՝ 2297 մ բարձրության ***Ծ*** կետը (X=500254, Y=4500290): 2297 բարձրության կետից թեքվում է դեպի հարավ (Ծովագյուղի համայնքային սահմանին համընթաց) 0.85 կմ իջնում լանջն ի վար մինչև Շորժա-Սևան ճանապարհը՝ ***Կ*** կետը (X=500134, Y=4499503): Անցնելով ճանապարհով հյուսիս-արևմտյան ուղղությամբ 1.2 կմ թեքվում է հարավ-արևմուտք անցնում 5.0 կմ հասնում Սևան-Դիլիջան ավտոմայրուղուն: Այստեղից անցնելով Սևան-Դիլիջան ավտոմայրուղով 0.9 կմ թեքվում է դեպի հարավ-արևմուտք և Սևան-Դիլիջան հին

---

[4] Սահմանների փոփոխության վերաբերյալ մեկնաբանությունը 3.4. բաժնի 4-րդ ենթակետում:

[5] Սահմանների փոփոխության վերաբերյալ մեկնաբանությունը 3.4. բաժնի 5-րդ ենթակետում:

ճանապարհով անցնում 6.1 կմ մինչև Սևանա թերակղզի: Սևանա թերակղզու մոտից թեքվում է դեպի արևմուտք և 2.0 կմ բարձրանում լանջն ի վեր մինչև 2200-2150 մ բարձրությունները՝ Հ կետը (X=497970, Y=4493252), որից հետո թեքվում դեպի հարավ-արևելք, 2.1 կմ իջնելով լանջն ի վար, հասնում Ցամաքաբերդ գյուղի ճանապարհ: Ճանապարհով ձգվում է դեպի հյուսիս-արևելք, հետո արևելք անցնում 1.7 կմ մինչև Սևանա թերակղզու խաչմերուկ, որից հետո միանում Դիլիջան-Սևան ավտոմայրուղուն: Դիլիջան-Սևան ավտոմայրուղով անցնելով 1.7 կմ Ցամաքաբերդ գյուղի վերջում թեքվում է դեպի արևմուտք: 100 մ չհասած Սևան ՀԷԿ անցնում է Հրազդան գետի ջրանցքի կողքով և ձկնաբուծարանի տակով դուրս գալիս Դիլիջան-Սևան ավտոմայրուղի: Դիլիջան-Սևան ավտոմայրուղով անցնում է 3.4 կմ հասնում է Գ կետին:

### 3.3. «Սևան» ազգային պարկի պահպանական գոտու նկարագրությունը

«Սևան» ազգային պարկի պահպանական գոտին սկսվում է Սևանի լեռնանցքից (Քարտեզ 3)՝ 2114.4 մ բարձրությունից և անցնում է Արեգունու, Սևանի, Արևելյան Սևանի ծալքաբեկորավոր լեռնաշղթաների, Վարդենիսի և Գեղամա հրաբխային լեռնավահանների ջրբաժաններով: Գեղամա հրաբխային լեռնավահանի ջրբաժանից գոտու սահմանը իջնում է Երևան-Սևան ավտոմայրուղի, անցնում Գեղամավան, Ծաղկունք և Դդմաշեն գյուղերի համայնքների հարավ արևմտյան սահմաններով: Այնուհետև թեքվում է հյուսիսային ուղղությամբ, անցնում Զովաբեր գյուղի համայնքի արևմտյան սահմանով, բարձրանում Փամբակի լեռնաշղթայի լանջն ի վեր: Այստեղից գոտու սահմանը, մինչև Սևանի լեռնանցք, անցնում է Ձկնագետ գետի ջրբաժանային գծով:

### 3.4. «Սևան» ազգային պարկի սահմանների փոփոխության վերաբերյալ մեկնաբանություններ

1. Լճաշենից Հայրավանք հատվածում ազգային պարկի նախկին սահմանը անցնում է Սևան-Մարտունի ավտոճանապարհով, իսկ ներկայիս սահմանը անցնում է համայնքների վարչական սահմաններով: Սահմանի փոփոխության հիմնական պատճառը այդ համայնքների զարգացումն ու տարածքների օգտագործման ընդարձակումն է, որը արդեն արտահայտվել է համայնքների 2003 թվականի ընթացքում պատրաստված համայնքային կադաստրային քարտեզներում:

   Նորատուս համայնքի տարածքում առաջարկվող և նախկին սահմանները գրեթե համընկնում են՝ կրկնելով Սևանա լճի շուրջ ստեղծված արհեստական անտառտնկարկի եզրը: Նորատուս թերակղզին մտնում է «Սևան» ազգային պարկի մեջ՝ ներառելով թերակղզու կենտրոնում գտնվող բարձր հաճախականության ռադիոլոկացիոն կայանը: Նկատի ունենալով, որ ռադիոլոկացիոն կայանի տարածքը անտառածածկ է և շրջակա տարածքների օրգանական շարունակությունն է, նպատակահարմար է այդ տարածքը ներառել ազգային պարկի մեջ:

   Հայրավանք-Նորատուս հատվածում առկա են ազգային պարկի առաջարկվող սահմանների որոշ ներթափանցումներ պարկի նախկին սահմանների մեջ:

   Երանոս-Նորատուս հատվածում պարկի առաջարկվող և նախկին սահմանները համընկնում են՝ բացառությամբ Կարմիր ամառանոցի հրվանդանի, որտեղ առաջարկվող սահմանը 0,2-0,3 կմ խորանում է նախկինի մեջ: Գավառ-Մարտունի ավտոճանապարհի Նորատուս-Երանոս-Ծակքար հատվածում ազգային պարկի առաջարկվող և նախկին սահմանները գրեթե համընկնում են՝ այդ հատվածում անցնում են արհեստական անտառտնկարկի եզրագծով:

2. Ճակքար-Ներքին Գետաշեն-Մարտունի հատվածում ազգային պարկի առաջարկվող և նախկին սահմանները գրեթե համընկնում են: Այս հատվածում առաջարկվող և նախկին սահմանները համընկնում են Գավառ-Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհի եզրագծին: Միևնույն ժամանակ Մարտունի, Լիճք և Ճակքար համայնքներին հարող սահմաններում կան խախտումներ: Այդ համայնքների աճի և ընդարձակման պատճառով որոշ հողօգտագործողներ թափանցել են ազգային պարկի մեջ՝ հիմնականում գյուղատնտեսական գործունեության և որոշ շինությունների ձևով: Այս փոփոխությունները արտահայտվել են նաև Ճակքար, Լիճք և Մարտունի համայնքների 2003 թվականի ընթացքում պատրաստված համայնքային կադաստրային քարտեզներում:
Մարտունի-Վաղաշեն-Զոլաքար-Վարդենիկ-Ծովինար հատվածում ազգային պարկի առաջարկվող սահմանները զգալիորեն թափանցել են նախկին սահմաններից ներս հետևյալ չափերով՝ Աստղաձոր-Զոլաքարի ուղղությամբ 0,3-0,42 կմ և Վարդենիկի ուղղությամբ՝ 0,9 կմ: Վաղաշեն-Արծվանիստ համայնքների արտաքին սահմանները դեպի Սևանա լիճ զգալիորեն մոտեցել են Սևանա լճի ափագծին՝ պարկի նախկին սահմանից 0,8 կմ ավելի խոր: Արծվանիստ-Կարճաղբյուր հատվածում պարկի առաջարկվող սահմանը զգալիորեն (0,6-0,8 կմ) թափանցում է պարկի նախկին սահմաններից և Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհից դեպի լճահայաց կողմը: Աստղաձոր, Զոլաքար, Վարդենիկ, Արծվանիստ, Կարճաղբյուր և Ծովակ համայնքների ներկա սահմանները զգալիորեն թափանցել են պարկի նախկին սահմաններից ներս՝ կապված բնակավայրերի աճի ու ընդարձակման, ինչպես նաև Սևանի լճափնյա հանգստյան գոտում որոշ ծառայություններ մատուցելու նպատակով:
3. Նորակերտ, Գեղամասար, Արեգունի և Դարանակ համայնքային սահմաններում ազգային պարկի առաջարկվող և նախկին սահմանները չեն համընկնում, քանի որ առաջարկվող սահմանը անցկացվել է արհեստական անտառտնկարկի եզրագծով:
4. Դարանակ-Փամբակ-Ծափաթաղ-Ջիլ համայնքային տարածքներում առանձին կտորներով տարածված են կաղնու և գիհու ռելիկտային նոսր անտառները, որոնք հատուկ պահպանման կարիք ունեն: Այդ իսկ պատճառով այս անտառների տարածքները առաջարկվում է մտցնել ազգային պարկի մեջ՝ որպես արգելավայրային գոտի:
5. Շորժա-Ծովագյուղ ավտոճանապարհից վեր, դեպի Արեգունու լեռնաշղթայի ջրբաժան, Դրախտիկի և Ծովագյուղի համայնքային սահմանի միջև ընկած տարածքները մտել են ազգային պարկի մեջ՝ հաշվի առնելով, որ այդ տարածքում պետական ֆոնդի հողեր են և դրանց մեծ մասը հանդիսացել են նախկին անտառային հողեր:

### 3.5. Համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների սահմանների և կատեգորիայի ճշգրտում

«Սևան» ազգային պարկին հարակից որոշ համայնքների վարչական սահմաններում առկա են պետական սեփականություն հանդիսացող անտառային տարածքներ, որոնց սահմանները ճշգրտման անհրաժեշտություն ունեն: Դրանք են՝ Սևան-290 հա, Ծովագյուղ-570 հա, Լճաշեն-92 հա, Չկալովկա -55 հա, Նորաշեն-20 հա, Ծովազարդ-26 հա, Լճափ-9 հա, Բերդկունք-5 հա, Հայրավանք-9 հա, Նորատուս-93 հա, Գավառ-299 հա, Մարտունի-186 հա, Վաղաշեն-69 հա, Վարդենիկ-113 հա, Արծվանիստ-29 հա, Ծովինար-30 հա, Կարճաղբյուր-21 հա, Լճավան-86 հա, Ծովակ-12 հա, Վարդենիս-246 հա, Ավազան-143 հա, Գեղամասար-91 հա, Կախակն-291 հա, Տրետուկ-162 հա, Սոթք-241 հա, Կուտակն-323 հա, Կութ-102 հա, Արտանիշ-474 հա և Դրախտիկ-42 հա: Ընդհանուր առմամբ անտառային այդ տարածքները կազմում են շուրջ 4129 հա կամ 41.3 կմ$^2$:

Բացի այդ, այդ տարածքները եղել են նախկին Սևանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի և Կրասնոսելսկի անտառտնտեսությունների կազմում: 1997 թ. ՀՀ Բնապահպանության նախարարի թիվ 114 հրամանով այդ տնտեսությունների լուծարումից հետո նշված անտառային տարածքների զգալի մասը դուրս են մնում «Սևան» ազգային պարկի սահմաններից: Դրանք, լինելով հիմնականում արհեստական

տնկարկներ, ունեն բնապահպանական նշանակություն (հակաէրոզիոն, հակասելավային, ձնապահպան և այլն), որոնց որոշ մասը հատվել, նոսրացվել, դեգրադացվել են և անհրաժեշտ է ճշգրտել դրանց կատեգորիան: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել նախ և առաջ քարտեզագրական, անհրաժեշտության դեպքում նաև գեոդեզիական հանույթային աշխատանքներ (Հավելված 1):

1997 թվականից սկսած ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեի կողմից այս համայնքներում կատարվել են գեոդեզիական չափագրումներ: 2005 թ. «Սևան» ազգային պարկի կառավարման պլանների մշակման շրջանակներում անտառագետների կողմից նշված համայնքների տարածքներում իրականացվել են անտառային հողերի գույքագրում: Արդյունքում բացահայտվել են անտառային հողերի սահմանների անհամապատասխանություններ: Այստեղից անհրաժեշտություն է առաջանում վերը նշված համայնքային սահմաններում գեոդեզիական հանույթի միջոցով ճշգրտել անտառային հողերի սահմանները(Հավելված 1):

Սևանի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի վրա տարածվող գիհու և կաղնու ռելիկտային նոսր անտառները ձգվում են Դարանակից մինչև Ջիլ: 2005 թ. «Սևան» ազգային պարկի կառավարման պլանների մշակման շրջանակներում այդ անտառների մի մասը՝ Դարանակ-454 հա, Փամբակ-254 հա, Ծափաթաղ-653 հա և Ջիլ-447 հա (ընդհանուր առմամբ 1808 հա), գույքագրվել և առաջարկվում է ընդգրկել «Սևան» ազգային պարկի մեջ՝ արգելավայրային գոտու կարգավիճակով: Անտառային տարածքների մնացած մասը հնարավոր չէր գույքագրել, քանի որ դրանք կենտրոնացած են սահմանային գոտում: Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում գիհու և կաղնու ռելիկտային նոսր անտառների տարածման գոտու սահմանների ճշգրտում և գույքագում (Հավելված 1): Դա հնարավոր է 1 մետր թույլատրելիության արբայնակային պատկերի միջոցով՝ հետևյալ կոորդինատային կետերի միջև ընկած տարածքում, որը կազմում է 263 կմ$^2$.

1) արևելյան երկարության 45˚ 27' 38", հյուսիսային լայնության 40˚ 30' 12",
2) արլ. երկ. 45˚ 43' 20", հս. լայն. 40˚ 22' 22",
3) արլ. երկ. 45˚ 38' 25", հս. լայն. 40˚ 17' 09",
4) արլ. երկ. 45˚ 23' 31", հս. լայն. 40˚ 26' 44":

# Բ Ա Ժ Ի Ն 4. «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները

## 4.1. «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների փոփոխությունները

Համաձայն Հայկական ՍՍՀ Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների Խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի «Սևան» ազգային զբոսայգի ստեղծելու մասին» թիվ 125 որոշման՝ ազգային պարկի տարածքում առանձնացվել են 3 տարածքա-գործառնական գոտիներ. արգելոցային, արգելավայրային և հանգստյան:

Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում 2005-2006 թվականներին կատարված ուսումնասիրությունների արդյունքում թեմատիկ խմբերի (հիդրոլոգների, բուսաբանների, անտառագետների, կենդանաբանների և քարտեզագիրների), «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, Գեղարքունիքի մարզպետարանի և այլ շահագրգիռ կողմերի առաջարկությունների հիման վրա սույն կառավարման պլանում ներկայացվում են 4 տարածքա-գործառնական գոտիներ՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրեացիոն և տնտեսական (Քարտեզ 4): «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների փոփոխությունները կայանում են հետևյալում:

1. <u>Արգելոցային գոտիներ.</u> Վերը նշված որոշմամբ ստեղծվել են եղել 5 արգելոցներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմել է 15 370 հա, որից ցամաքային տարածքը՝ 7 170 հա, իսկ ջրայինը՝ 8 200 հա: Սույն կառավարման պլանով առաջարկվում է ստեղծել 4 արգելոցներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7 464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4 289 հա, իսկ ջրայինը՝ 3 175 հա: Այդ արգելոցներն են.
   - ա/ ***«Նորաշենի» արգելոց.*** Նախկինում գոյություն չի ունեցել, սակայն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից տարածքը պահպանվել է արգելոցային ռեժիմով: Այն զբաղեցնում է 839 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 341 հա, իսկ ջրայինը՝ 498 հա:
   - բ/ ***«Լիճք-Արգիչի» արգելոց.*** Այն զբաղեցնում է 1 175 հա մակերես, որից ցամաքայինը կազմում է 482 հա, իսկ ջրայինը՝ 693 հա: Ընդգրկում է գոյություն ունեցող «Լիճք» արգելոցի (ընդհանուր մակերեսը՝ 600 հա, որից ցամաքայինը՝ 350 հա, իսկ ջրայինը՝ 250 հա), ինչպես նաև «Ծակքար», «Լիճք» և «Արգիչի» արգելավայրերի գետաբերանային տարածքները:
   - գ/ ***«Գիլլի» արգելոց.*** Տարածքը զբաղեցնում է 1 810 հա մակերես, որից ցամաքայինը կազմում է 1 325 հա, իսկ ջրայինը՝ 485 հա: Ընդգրկում է գոյություն ունեցող «Գիլլի» արգելոցի (1 000 հա միայն ցամաքային տարածք) տարածքը:
   - դ/ ***«Արտանիշի» արգելոց.*** Այն զբաղեցնում է 3 640 հա մակերես, որից ցամաքայինը կազմում է 2 142 հա, իսկ ջրայինը՝ 1 498 հա: Ընդգրկում է գոյություն ունեցող «Արտանիշի» արգելոցի (ընդհանուր մակերեսը՝ 6 420 հա, որից ցամաքայինը՝ 2 220 հա, իսկ ջրայինը՝ 4 200 հա) մեծ մասը:

   Գոյություն ունեցող «Կարճաղբյուր» (ընդհանուր մակերեսը՝ 3 750 հա, որից ցամաքայինը՝ 200 հա, իսկ ջրայինը՝ 3 550 հա) և «Նորատուս» (ընդհանուր մակերեսը՝ 3 600 հա, որից ցամաքայինը՝ 150 հա, իսկ ջրայինը՝ 3450 հա) արգելոցային գոտիների տարածքներն ընդգրկվել են «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ տարիների ընթացքում դրանք ըստ էության որպես արգելոցային գոտիներ չեն գործել և վերջին 15 տարիներին Գեղարքունիքի մարզում ձևավորվել են հասարակական նոր հարաբերություններ:

2. <u>Արգելավայրային գոտիներ.</u> ՀՍՍՀ Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների Խորհրդի վերը նշված որոշմամբ Սևանա լիճ թափվող գետերի գետաբերանային երկայնքով ստեղծվել էին 10 արգելավայրեր: Հարկ է նշել, որ անցած ժամանակահատվածում այդ արգելավայրերը գործնականում ձևական բնույթ են կրել: «Սևան» ազգային պարկի կառավարման պլանով առաջարկվում են 2 արգելավայրեր, որոնց ընդհանուր

մակերեսը կազմում է 2 652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2 359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Այդ արգելավայրերն են.

ա/ ***«Գավառագետ» արգելավայր.*** Տարածքը զբաղեցնում է 845 հա մակերես, որից ցամաքային տարածքը - 552 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Ընդգրկում է «Գավառագետ» արգելավայրի գետաբերանային և «Նորատուս» արգելոցի (ընդհանուր մակերեսը՝ 3 600 հա, որից ցամաքայինը՝ 150 հա, իսկ ջրայինը՝ 3 450 հա) մի մասը:

բ/ ***«Գիհի-կաղնուտային» ա րգելավայր.*** Նախկինում գոյություն չի ունեցել: Տարածքը զբաղեցնում է 1807 հա մակերես:

3. Ռեկրեացիոն գոտիներ. Մինչ այժմ գործել է 7 270 հա տարածքով հանգստյան գոտի, որից ցամաքայինը՝  4 250 հա, իսկ ջրայինը՝ 3 020 հա: Սույն կառավարման պլանով առաջարկվող ռեկրեացիոն գոտիների ընդհանուր մակերեսը 4 753 հա է, որն ընդգրկում է միայն ցամաքային տարածք:

4. Տնտեսական գոտիներ. «Սևան» ազգային պարկի սույն կառավարման պլանով առաջարկվող տնտեսական գոտիների տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 11296 հա:

## 4.2. «Սևան» ազգային պարկի արգելոցային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները

### 4.2.1. «Նորաշենի» արգելոց

Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 839 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 341 հա, իսկ ջրայինը՝ 498 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 12.7 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 4.1 կմ երկարությամբ և 3.5 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է պահպանել թռչունների (մասնավորապես հայկական որորի, քանի որ այստեղ բնադրող միակ էնդեմիկ թռչունն է) բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը:

***Սահմանի նկարագրությունը.***

Արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է 2-րդ ռեկրեացիոն և 6-րդ տնտեսական գոտիների հատման կետից (տես՝ 4.4. և 4.5. կետերը)՝ Սևան-Մարտունի ավտոճանապարհի Նորաշեն գյուղ մտնող խաչմերուկից 600 մետր դեպի Գավառ տանող ճանապարհի և 110 մետր դեպի լիճ՝ լճախորշի ***Ա1*** կետից (X=502765, Y=4485974): Այստեղից սահմանը 110 մ անցնում է հարավ-արևելյան ուղղությամբ, այնուհետև շրջանցում լճախորշին մոտ գտնվող լճակը, որից հետո անցնում ավտոճանապարհին զուգահեռ հարավ-արևելյան ուղղությամբ, հասնում Ծովազարդ գյուղ մտնող ճանապարհի խաչմերուկից 100 մետր դեպի լճափ ***Բ1*** կետին (X=504225, Y=4483907): ***Ա1-Բ1*** սահմանակցում է 6-րդ տնտեսական գոտուն: ***Բ1*** կետից սահմանը թեքվում է դեպի արևելք, հյուսիս և հյուսիս-արևելք ուղղությամբ, անցնում 500 մ և հասնում է լճափ՝ ***Գ1*** կետին (X=504610, Y=4484131): ***Բ1-Գ1*** սահմանակցում է 3-րդ ռեկրեացիոն գոտուն: ***Գ1-Ա1*** ցամաքային սահմանը անցնում է լճափով՝ ընդգրկելով որորների 2 կղզյակները, իսկ ***Գ1 - Ա1*** ջրային սահմանը անցնում է լճափից 0.4-1.0 կմ լայնությամբ և 8.5 կմ շրջագծով:

***Տեղանքի նկարագրությունը.***

Արգելոցի տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1916 մետր բարձրությունը: Ափերը կտրտված են: Արգելոցի տարածքում առանձնացվում են երկու կղզյակներ՝ 6.53 հա և 4.07 հա տարածքներով, և երեք լճակներ, համապատասխանաբար՝ 16.7 հա, 2.9 հա և 1.3 հա տարածքներով: Արգելոցի ցամաքային տարածքի արևելյան մասը անտառազուրկ է: Կղզիները քարապատ են: Անտառային տնկարկներից հիմնականում հանդես են գալիս չիչխանի, թեղու և սոճու ծառուտները:

***Ենթակառուցվածքները.*** Արգելոցի ցամաքային տարածքին հարող Սևան-Մարտունի ավտոճանապարհի երկարությունը կազմում է 6.4 կմ, իսկ գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը 21 կմ է:

### 4.2.2. «Լիճք-Արգիչի» արգելոց

Գտնվում է ազգային պարկի հարավ-արևմտյան հատվածում՝ Ծակքար, Լիճք և Արգիճի գետերի գետաբերանային հատվածներում, և զբաղեցնում է 1175 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 482 հա, իսկ ջրայինը՝ 693 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 13.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.8 կմ երկարությամբ և 3.7 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Լիճքի հանքային աղբյուրների, Արգիչի և Լիճք գետերի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների ջրաճահճային և ջրային բուսականության, թռչունների բնադրավայրի պահպանությունը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների՝ Սևանի իշխանի, Սևանի կողակ և Սևանի բեղլուի ձվադրումն ու զարգացումը:

***Սահմանի նկարագրությունը.***

Արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ծակքար գետի գետաբերանից 430 մ հոսանքն ի վար և 50 մ դեպի հյուսիս ***Ա1*** կետից (X=520489, Y=4450708): ***Ա1*** կետից սահմանը Ծակքար գետին զուգահեռ, 50 մ հեռավորությունից, անցնում է հոսանքն ի վեր ուղղությամբ և 50 մ չհասած գազամուղին թեքվում է հարավ-արևելք: Գազամուղից 50 մ հեռավորությամբ, դրան զուգահեռ, 50 մ կտրում անցնում է Արգիչի գետը և թեքվում է հյուսիս-արևելք՝ հասնում ***Բ1*** կետին (X=524125, Y=4448936): ***Ա1-Բ1*** հատվածի երկարությունը 5.3 կմ է: ***Ա1-Բ1*** հատվածում սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն: ***Բ1*** կետից սահմանը 330 մ շարունակվելով հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ հասնում է լճափ՝ ***Գ1*** կետին (X=524645, Y=4448584): ***Բ1-Գ1*** հատվածում սահմանակցում է 5-րդ ռեկրեացիոն գոտուն: ***Գ1*** կետից՝ ափից, ցամաքային սահմանը անցնում է լճի ափագծով մինչև ***Դ1*** կետը (X=520869, Y=4450821): ***Գ1-Դ1*** հատվածում սահմանը ջրային տարածքով անցնում է մոտ 2.0 կմ խորությամբ և 6.9 կմ շրջագծով: ***Դ1*** կետից՝ ափից, սահմանը անցնում է 400 մետր հարավ-արևմտյան ուղղությամբ հասնում ***Ա1*** կետին: ***Բ1-Ա1*** հատվածում սահմանակցում է 4-րդ ռեկրեացիոն գոտուն:

***Տեղանքի նկարագրությունը.***

Արգելոցի տարածքի ռելիեֆը հարթ է: Ընկած է լճի ափից մինչև 1908 մետր բարձրության սահմաններում: Արգելոցի տարածքն ընդգրկում է Արգիչի, Լիճք, Բախտակ և Ծակքար գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի ջրի մակարդակի իջեցման և գետերի էրոզիայի բազիսի իջեցման պատճառով գետերը ստեղծել են 10-6 մետր խորությամբ ձորակներ: Լիճք գետի հատվածում դուրս են գալիս Լիճքի հանքային աղբյուրները և կան 3 փոքր լճակներ՝ 9.8, 3.1 և 1.3 հա մակերեսներով:

Տարածքը գրեթե ամբողջությամբ պատված է անտառային տնկարկներով, որոնք հիմնականում կազմված են սոճու, բարդու, թխկու և ուռենու ծառուտներից:

***Ենթակառուցվածքները.*** Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 15.6 կմ:

### 4.2.3. «Գիլլի» արգելոց

Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում՝ Գիլլի ջրանցքի, Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածներում և զբաղեցնում է 1810 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 1325 հա, իսկ ջրայինը՝ 485 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 23.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 10.4 կմ երկարությամբ և 1.8 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածների պահպանությունը՝ արժեքավոր և հազվագյուտ

ձկնատեսակների ձվադրման և զարգացման համար, ինչպես նաև հարակից ճահճուտների պահպանությունը, որպես թռչունների բնադրավայր:

***Սահմանի նկարագրությունը.***

Արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ծովակ-Վարդենիս ավտոճանապարհից դեպի Գիլլի ջրանցք 600 մ հեռավորությունից՝ ***Ա1*** կետից (X=555249, Y=4451778): ***Ա1*** կետից անցնում է Ազգային պարկի սահմանով (Ծովակ-Նորակերտ ավտոճանապարհով) հյուսիսային ուղղությամբ, կտրում անցնում է Գեղամասար գետը 550 մ և հասնում է ***Բ1*** կետին (X=524024, Y=4462238): ***Բ1*** կետից սահմանը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնելով 950 մետր հասնում է լճափ ***Գ1*** կետին (X=553328, Y=4461635): ***Բ1-Գ1*** հատվածում սահմանակցում է 8-րդ ռեկրեացիոն գոտուն: ***Գ1*** կետից արգելոցի ցամաքային սահմանը անցնում է ափազծով մինչև ***Դ1*** կետը (X=553733, Y=4452443), իսկ ջրային տարածքով անցնում է մոտ 9.7 կմ շրջագծով, 500 մետր լայնությամբ և 9.3 կմ երկարությամբ: ***Դ1*** կետից սահմանը 1.7 կմ անցնում է հարավ-արևելյան ուղղությամբ և հասնում ***Ա1*** կետին: Այս հատվածում արգելոցը սահմանակից է 12-րդ տնտեսական գոտուն:

***Տեղանքի նկարագրությունը.***

Արգելոցի տարածքի ռելիեֆը հարթ է: Ամբողջությամբ ընկած է լճի նախկին ջրի մակարդակի (1916 մետր) սահմաններում: Արգելոցի տարածքն ընդգրկում է Գեղամասար և Մասրիկ գետերի ու վերջինիցս դուրս եկող ջրանցքի գետաբերանային հատվածները:

Արգելոցի ցամաքային տարածքն ամբողջությամբ պատված է անտառային տնկարկներով, որոնք հիմնականում կազմված են սոճու, բարդու և ուռենու ծառուտներից:

***Ենթակառուցվածքները.*** Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 31 կմ, իսկ 1.6 կմ՝ Գիլլի ջրանցքը:

### 4.2.4. «Արտանիշի» արգելոց

Գտնվում է ազգային պարկի արևելյան մասում՝ ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիկտային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզոարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

***Սահմանի նկարագրությունը.***

Արտանիշի արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է ***Ա1*** կետից (X=528625, Y=4483303), 900 մ անցնում հարավ-արևելյան ուղղությամբ և հասնում է լճախորշի ափին՝ ***Բ1*** կետին (X=529282, Y=4482722): ***Ա1-Բ1*** հատվածում սահմանակցում է 8-րդ ռեկրեացիոն գոտուն: ***Բ1*** կետից ցամաքային սահմանն անցնում է ափազծով մինչև ***Գ1*** կետը (X=526454, Y=4480856), իսկ ջրային սահմանն անցնում է ափագծին զուգահեռ 1.5 կմ հեռավորությունից: ***Գ1*** կետից սահմանն անցնում է հյուսիսային ուղղությամբ 350 մ, որից հետո թեքվում է դեպի արևմուտք՝ անցնելով 950 մ հասնում է ***Դ1*** կետին (X=525492, Y=4481375): ***Գ1-Դ1*** հատվածում սահմանակցում է 1-ին ռեկրեացիոն գոտուն: ***Դ1*** կետից սահմանը անցնում է Շորժա համայնքային հողերի սահմանով, շրջանցելով Արտանիշ թերակղզու լեռների հյուսիսային լանջերը, անցնում մոտ 9.2 կմ, որից 1.3 կմ սահմանակից է Արտանիշի համայնքային հողերին, և հասնում է ***Ա1*** կետին:

***Տեղանքի նկարագրությունը.***

Արտանիշի արգելոցի տարածքն ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ արևմտյան մասի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի մի մասը: Արտանիշի լճախորշից հյուսիս ընկած ցամաքային հատվածը հարթ է, գտնվում է 1906 -1915 մ բարձրությունների միջև, իսկ թերակղզու կենտրոնական և արևելյան հատվածները պատված են լեռնազանգվածով, որի առավելագույն բարձրությունը Աղաքափա լեռն է՝ 2460.8 մ բարձրությամբ (գտնվում է թերակղզու կենտրոնական մասում): Արտանիշի թերակղզու կենտրոնական մասից լեռնաբազուկները ձգվում են ճառագայթաձև: Արգելոցի ցամաքային տարածքում մշտական հոսող գետեր չկան, միայն ժամանակավոր հոսող գետակներ են: Արգելոցի տարածքը գրեթե անտառազուրկ է: Միայն թերակղզու կենտրոնական լեռնազանգվածի հյուսիսային մասում փոքր հատվածներով հանդես են գալիս անտառային տարածքներ՝ գիհու գերակշռությամբ և լճի ափի երկայնքով մոտ 200 մ լայնությամբ ձգվում են թեղու և չիչխանի տնկարկներ:

***Ենթակառուցվածքները.*** Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 51 կմ: Այստեղ կան նաև լքված և ավերված շինություններ:

## 4.3. «Սևան» ազգային պարկի արգելավայրային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները

### 4.3.1. «Գավառագետի» արգելավայր

Գտնվում է ազգային պարկի Նորատուս թերակղզու ափամերձ և Գավառագետի գետաբերանային հատվածում, զբաղեցնում է 845 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 552 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 26.4 կմ է: Արգելավայրի տարածքը ձգվում է մոտ 7.5կմ երկարությամբ և 0.5-3.5 կմ լայնությամբ:

Արգելավայրի նպատակն է ապահովել Գավառագետի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների պահպանությունը և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածի թռչունների բնադրավայրերը, ինչպես նաև արժեքավոր և հազվագույտ ձկնատեսակների ձվադրումն ու զարգացումը:

***Սահմանի նկարագրությունը.***

Արգելավայրի սահմանը սկսվում է Նորատուս-Մարտունի ավտոճանապարհից՝ լճափից 2.0 կմ դեպի արևելք՝ ***Ա1*** կետից (X=511213, Y=4476644): ***Ա1*** կետից սահմանը անցնում է նախ հարավային, ապա հարավ-արևելյան ուղղությամբ, շրջանցում է Նարատուս թերակղզու Ռաղիոլոկացիոն կայանը և հասնում ***Բ1*** կետին (X=518191, Y=4475080): ***Ա1-Բ1*** հատվածում սահմանակից է 11-րդ տնտեսական գոտուն: ***Բ1*** կետից սահմանը անցնում է 300 մ արևելյան ուղղությամբ, հասնում ***Գ1*** կետին (X=518191, Y=4475080): ***Բ1-Գ1*** հատվածում սահմանակից է 4-րդ ռեկրեացիոն գոտուն: ***Գ1-Ա1*** հատվածում ցամաքային սահմանը անցնում է ափագծով, իսկ ջրայինը՝ 300 մետր լայնությամբ:

***Տեղանքի նկարագրությունը.***

Արգելավայրի տարածքի ռելիեֆը հարթ է: Ամենաբարձր նիշը հասնում է մինչև 1915 մ բարձրությունը, հիմնական տարածքը ընկած է մինչև 1910 մ բարձրությունը: Արգելավայրի ցամաքային տարածքը Գավառագետի գետաբերանային և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածներն են: Այստեղ Գավառագետը, մինչև լիճ թափվելը, ունի մեծ գալարայնություն (ռելիեֆի հարթության պատճառով), որի պատճառով էլ այս տարածքում առաջացել են մի քանի հնահունային փոքր լճակներ: Արգելավայրի ցամաքային տարածքը գրեթե ամբողջովին անտառապատ է: Անտառային տնկարկներից հանդես են գալիս հիմնականում բարդու, ուռենու և սոճու ծառուտները:

***Ենթակառուցվածքները.*** Արգելավայրի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 25 կմ: Արգելավայրի տարածքով անցնում են 1.4 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր:

### 4.3.2. «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայր

Գտնվում է ազգային պարկի արևելյան մասում և տարածվում է Դարանակ գյուղից մինչև Ջիլ գյուղ՝ մոտ 18 կմ երկարությամբ և 1.5-3.8 կմ լայնությամբ: Արգելավայրը զբաղեցնում է 1807 հա մակերես: Տարածքը կտրտված է, հանդես են գալիս տարբեր չափերի 5 հատվածներ, որոնց սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 55.0 կմ:

Արգելավայրի նպատակն է ապահովել Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի վրա տարածվող գիհու և կաղնու ռելիկտային բնական նոսր անտառների պահպանությունը:

***Սահմանի նկարագրությունը.***

- Առաջին հատվածը ձգվում է Դարանակ գյուղի վերջից՝ գետի աջ և ձախ ափերով դեպի հյուսիս-արևելք 1.3 կմ լայնությամբ և դեպի հյուսիս-արևմուտք 2.8-4.0 կմ երկարությամբ:
- Երկրորդ հատվածը սկսում է 2.4 կմ չհասած Դարանակ գետ և ձգվում է երկաթգծի երկայնքով մոտ 1.7 կմ երկարությամբ և մոտ 800 մ դեպի հյուսիս՝ լանջն ի վեր:
- Երրորդ հատվածն ընկած է Փամբակ գյուղից 800 մետր դեպի հյուսիս և ձգվում է Փամբակ գետի ձախ ափից 370 մ լայնությամբ և լանջն ի վեր 700 մետր երկարությամբ:
- Չորրորդ հատվածի սահմանը սկսում է 2.0 կմ չհասած Շամպիր գետ, ձգվում է երկաթգծից դեպի լանջն ի վեր մոտ 4.7 կմ երկարությամբ: Շամպիր գետի գետաբերանից մոտ 2.1 կմ հեռավորությունից ձգվում է գետի երկու ափերով մոտ 1.0-1.6 կմ լայնությամբ:
- Հինգերորդ հատվածն ընկած է Ծափաթաղ և Ջիլ գյուղերի մինչև: Սահմանը սկսվում է Ջիլ գետից 1.5 կմ ներքևից, ձգվում հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ 5.2 կմ լայնությամբ մինչև Ծափաթաղ գետ և երկաթգծից դեպի լանջն ի վեր՝ հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ 3.2 կմ երկարությամբ:

***Տեղանքի նկարագրությունը.***

Գիհի կաղնուտային ռելիկտային արգելոցը ընկած է Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին: Տարածքն իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ՝ թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Ամենախորը ձորերով հոսում են մշտական գետերը՝ Դարանակ, Փամբակ, Շամպիր, Ծափաթաղ և Ջիլ: Արգելավայրի տարածքը սկսվում է մոտ 1950 մ բարձրությունից և տեղ-տեղ հասնում մինչև 2500 մ բարձրությունները:

***Ենթակառուցվածքները.*** Արգելավայրի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 25 կմ: Արգելավայրի տարածքով անցնում է 7.2 կմ բարձրավոլտ հոսանքի գծեր:

## 4.4. «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները

«Սևան» ազգային պարկի առաջարկվող ռեկրեացիոն գոտիների ընդհանուր տարածքը կազմում է 4753 հա, որոնք առանձին հատվածներով տարածվում են լճի ափամերձ երկայնքով (Քարտեզ 4):

### 4.4.1. Առաջին ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 1501 հա, սահմանի ընդհանուր երկարությունը՝ 119.8 կմ:

***Սահմանի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապահի Լճաշեն գյուղ մտնող ճանապահի խաչմերուկից դեպի արևելք լճի ափից՝ ***Ա2*** կետից (X=495906, Y=4487597): ***Ա2*** կետից սահմանը ձգվում է 600 մետր մինչև Լճաշեն գյուղ մտնող ճանապահի խաչմերուկ՝ ***Բ2*** կետը (X=49551, Y=4487916): ***Ա2-Բ2*** հատվածում սահմանակից է 4-րդ տնտեսական գոտուն: Որից հետո անցնում է հյուսիս-անելյան ուղղությամբ 1.3 կմ մինչև Սևան-Դիլիջան ավտոմայրուղու հատումը (Սևան քաղաք մտնող խաչմերուկից 1.0 կմ ավտոմայրուղով դեպի Դիլիջանի կողմը)՝ ***Գ2*** կետը (X=495528, Y=4489063): Այստեղից սահմանը անցնում է Սևան-Դիլիջան ավտոմայրուղով 10.9 կմ մինչև (չհասած 1.2 կմ Ծավագյուղ թեքվող ճանապարհի խաչմերուկ) ***Դ2*** կետը (X=496779, Y=4496236): Այս հատվածում ռեկրացիոն գոտին ամբողջությամբ իր մեջ ներառում է Սևան թերակղզին: ***Դ2*** կետից սահմանը թեքվում է դեպի հյուսիս-արևելք անցնում 3.5 կմ դուրս գալիս Ծովագյուղ-Շորժա ավտոճանապարհ՝ ***Ե2*** կետը (X=497549, Y=4498965): ***Գ2-Ե2*** հատվածում սահմանակից է 1-ին և 2-րդ տնտեսական գոտիներին: Մինչև Շորժա գյուղ սահմանը անցնում է Ծովագյուղ-Շորժա ավտոճանապարհով (այս հատվածում սահմանակից է 13-րդ տնտեսական գոտուն): Այստեղից ռեկրացիոն գոտու սահմանը մինչև վերջ անցնում է Շորժա գյուղի համայնքային սահմանով: Շորժա գյուղի ճանապարհի խաչմերուկից սահմանը անցնում է 650 մետր թեքվում դեպի հարավ մտնում է Արտանիշ թերակղզի, անցնում գրունտային ճանապարհով 3.7 կմ: Որից հետո անցնում է 2.1 կմ գրունտային ճանապարհով արևելյան ուղղությամբ և հասնում է Արտանիշի արգելոցի ***Դ1*** սահմանակետին: Այստեղից արգելոցի սահմանով իջնում է լճափ հասնում Արտանիշի արգելոցի ***Գ*** 1 սահմանակետին:

***Տեղանքի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու հիմնական տարածքի ռելիեֆը (բացի Սևանա թերակղզուց) հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1910 մետր բարձրությունը: Սևանա թերակղզու արևելյան մասը մի ժայռապատ բարձունք է, որի ամենաբարձր կետը հասնում է 1982.3 մետր բարձրության: Ռեկրեացիոն գոտու հյուսիս-արևմտյան ափերը քիչ են կտրտված, մեղմաթեք են, որը հարմար է լողափերի համար, իսկ արևելյան ափերը (Արեգունու լեռնաշղթայի) կտրուկ խորանում են և լողափերի համար այնքան էլ հարմար չեն: Այստեղով անցնում է նաև տեկտոնական խզվածքային գոտին:

Տարածքը հիմնականում պատված է անտառային տնկարկներով, որոնցում գերակշռում են սոճու, բարդու, թեղու և չիչխան ծառուտները:

Ռեկրեացիոն գոտին ընդգրկում է Ձկնագետ, Դրախտիկ, Գեղամաբակ և Աղբերք գետերի գետաբերանային հատվածները:

***Ենթակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9.4 կմ, իսկ գրունտայինը՝ 57 կմ: Տարածքով անցնում է 7.7 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր: Արեգունու ափամերձ հատվածում՝ Դրախտիկ-Շորժա, անցնում է գազատարի 12.8 կմ հատվածը:

Սևանա թերակղզու բարձրունքում է գտնվում X-XI դարի Սևանի վանքը, ինչպես նաև ՀՀ նախագահի, Գրողների միության, Կապույտաչյա Սևան, Արևիկ և այլ հանգստյան տները: Գոտու տարածքում շատ են սպասարկման ոլորտի օբյեկտներ՝ Հյուրանոցներ-7, ռեստորաններ և սրճարաններ՝ 200-ից ավելի, առևտրի խանութներ և կրպակներ՝ 250-ից ավելի և այլն: Գոտու Արտանիշ թերակղզու տարածքում է գտնվում Նկարիչների միության հանգստյան տունը:

### 4.4.2. Երկրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 144 հա: Սահմանի երկարությունը 18.4 կմ է:

***Սահմանի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապահի Լճաշեն գյուղ մտնող ճանապահի խաչմերուկից դեպի Գավառ ավտոճանապարհի 1.9 կմ-ից՝ Լճաշենի ***Ա2*** կետից (X=496359, Y=4486589): Անցնում է 150 մետր հարավային

ուղղությամբ դուրս գալիս Սևան-Գավառ ավտոճանապահ: Այստեղից սկզբում ավտոճանապարհով անցում է 4.5 կմ, հետո ազգային պարկի սահմանով 1.2 կմ մինչև ***Բ2*** կետը (X=501470, Y=4486591): ***Բ2*** կետից սահմանը անցնում է հարավ-արևելյան ուղղությանբ 750 մետր հասնում ***Գ2*** կետին (X=502139, Y=4486282): ***Գ2*** կետից անցնում է ազգային պարկի սահմանով հարավ-արևելյան ուղղությանբ հասնում ***Դ2*** կետին (X=502671, Y=4485889): Այստեղից սահմանը թեքվում է դեպի լճի ափ ձգվում 120 մետր հասնում Նորաշենի արգելոցի ***Ա1*** սահմանակետը: Ռեկրեացիոն գոտին սահմանակից է 4-րդ և 5-րդ տնտեսական գոտիներին:

***Տեղանքի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է և ընկած է լճի ափից մինչև 1916 մ բարձրությունը: Ռեկրեացիոն գոտու ափերը կտրտված են: Տարածքի զգալի մասը քարաժայռերով են պատված: Անտառային տնկարկներ քիչ կան, հիմնականում հանդես է գալիս չիչխանը:

***Ենքակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 5.9 կմ:

### 4.4.3.Երրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 147 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 24.3 կմ է:

***Սահմանի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապահի Ծովազարդ գյուղ մտնող ճանապահի խաչմերուկից դեպի Գավառ ավտոճանապարհի ***Ա2*** կետից (X=504022, Y=4483822): Այստեղից անցնում է 3.3 կմ ազգային պարկի սահմանով մինչև ***Բ2*** կետը (X=505342, Y=4482203): ***Բ2*** կետից սահմանը անցնում է, լճափին զուգահեռ 200-250 մետր հեռավորությունից, 2.4 կմ հասնում ***Գ2*** կետին (X=506872, Y=4480921): ***Բ2-Գ2*** հատվածում սահմանակցում է 7-րդ տնտեսական գոտուն: ***Գ2*** կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև ***Դ2*** կետը (X=507303, Y=4480992): ***Դ2*** կետից ***Ե2*** կետ (X=507303, Y=4480992) 3.4 կմ հիմնականում անցնում է Սևան-Գավառ ավտոճանապահով (սահմանը մոտենալով ***Ե2*** կետին ճանապարհից հեռանում է դեպի լճափ 100 մետր): ***Դ2 -Ե2*** հատվածում սահմանակցում է 8-րդ և 9-րդ տնտեսական գոտիներին: ***Ե2*** կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև ***Զ2*** կետը (X=509355, Y=4478362): ***Զ2*** կետից 450 մետր անցնում է հարավ-արևմտյան ուղղությամբ լճափին զուգահեռ և հասնում ***Է2*** կետը (X=509173, Y=4477996): ***Զ2-Է2*** հատվածում սահմանակցում է 10-րդ տնտեսական գոտուն: ***Է*** կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև ***Ը2*** կետը (X=509169, Y=4477632): ***Ը2*** կետից սահմանը անցնում է սկզբում 110 մետր հարավային ուղղությամբ հետո թեքվում դեպի արևելք անցնում 240 մետր և հասնում է լճափ ***Թ2*** կետին (X=509279, Y=4477489): ***Ը2-Թ2*** հատվածում սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

***Տեղանքի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է և ընկած է 1916 մետր բարձրությունից ցածր: Առկա են ռելիեֆի մեծ թեքություններ և քարաժայռեր: Ռեկրեացիոն գոտու ափերը շատ չեն կտրտված: Անտառային տնկարկները քիչ են, հիմնականում հանդես են գալիս չիչխանի, ուռենու և թեղու ծառուտներ:

***Ենքակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհները քիչ են՝ ընդհանուր երկարությունը կազմում է 1.2 կմ:

### 4.4.4. Չորրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 624 հա, սահմանի ընդհանուր երկարությունը՝ 52.0 կմ:

***Սահմանի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Գավառագետի արգելավայրի ***Գ1*** սահմանակետից և հասնում արգելավայրի ***Բ1*** սահմանակետը: Այստեղից շարունակում է հարավային ուղղությամբ, լճափին զուգահեռ 100-400 մետր հեռավորությամբ, իջնում մինչև գոտու ***Ա2*** կետը (X=518422, Y=4465664): ***Ա2*** կետից սահմանը անցնում է Գավառ – Մարտունի ավտոճանապարհով 3.4 կմ հասնում ***Բ2*** կետին (X=518641, Y=4462469): ***Բ2*** կետից շարունակելով հարավային ուղղությամբ, լճափին զուգահեռ 100-400 մետր հեռավորությամբ, իջնում է մինչև «Լիճք-Արգիճի» արգելոցի ***Ա1*** սահմանակետը, որից հետո շարունակում է սահմանով հասնում արգելոցի ***Դ1*** սահմանակետին: Ռեկրեացիոն գոտին արևմուտքից սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

***Տեղանքի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է: Միայն Կարմիր ամառանոցների մոտ բարձր է և ժայռապատ, որտեղ առկա են ռելիեֆի մեծ թեքություն և քարաժայռեր: Ռեկրեացիոն գոտու ափերը քիչ են կտրտված: Տարածքը պատված է անտառային տնկարկներով, հիմնականում հանդես են գալիս չիչխանի, ուռենու և բարդու ծառատեսակները: Ռեկրեացիոն գոտու մեջ է Երանոս, Ձորագյուղ և այլ փոքր գետերի գետաբերանային հատվածները:

***Ենթակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 4.2 կմ:

### 4.4.5. Հինգերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 680 հա, սահմանի ընդհանուր երկարությունը՝ 44.3 կմ:

***Սահմանի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Արգիճի գետի գետաբերանային հատվածից՝ «Լիճք-Արգիճի» արգելոցի ***Գ1*** սահմանակետից, այստեղից շարունակում է մինչև արգելոցի ***Բ1*** սահմանակետը: ***Բ1*** կետից սահմանը անցնում է լճափին զուգահեռ մոտ 400-300 մետր հեռավորությունից 21 կմ և հասնում մինչև Արփա-Սևան ջրանցքի պահպանական գոտին՝ ռեկրեացիոն գոտու ***Ա2*** կետը (X=542112, Y=4447622): ***Ա2*** կետից շարունակում է հյուսիսային ուղղությամբ 210 մետր մինչև լճափ՝ գոտու ***Բ2*** կետը (X=542123, Y=4447821): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

***Տեղանքի նկարագրությունը.***

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է: Ռեկրեացիոն գոտու ափերը քիչ են կտրտված: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում գիհու և բարդու ծառուտներով: Ռեկրեացիոն գոտու մեջ են Մարտունի, Աստղաձոր և Վարդենիկ գետերի գետաբերանային հատվածները:

***Ենթակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 31.0 կմ:

### 4.4.6. Վեցերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 163 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 12.2 կմ է:

***Սահմանի նկարագրությունը.***

Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Արփա-Սևան ջրանցքի և Կարճաղբյուր գյուղի միջև՝ լճահայաց մասում: Սահմանը սկսում է Արփա-Սևան ջրանցքի աջակողմյան մասի լճափի ***Ա2*** կետից (X=542302, Y=4447742): Այստեղից ջրանցքին զուգահեռ հոսանք ի վեր բարձրանում է 270 մետր, դուրս է գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ և հասնում ***Բ2*** կետին (X=542344, Y=4447480): ***Բ2*** կետից անցնում է Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհով 5.7 կմ մինչև ***Գ2*** կետը (X=547592, Y=4449297): ***Գ2*** կետից

շարունակում է հյուսիսային ուղղությամբ 100 մետր մինչև լճափ՝ գտնու **Դ2** կետը (X=547562, Y=4449403): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 11-րդ և 12-րդ տնտեսական գոտիներին:

***Տեղանքի նկարագրությունը.***
Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հարթ է: Ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու և բարդու ծառուտներով:

***Ենթակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2.7 կմ:

### 4.4.7. Յոթերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 52.7 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 3.8 կմ է:

***Սահմանի նկարագրությունը.***
Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Ծավակ գյուղի լճահայաց մասում: Սահմանը սկսում է լճափի **Ա2** կետից (X=551301, Y=4450227): **Ա2** կետից սահմանը անցնում է հարավային ուղղությամբ 260 մետր և դուրս գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ՝ **Բ2** կետը (X=551433, Y=4450003): Այստեղից սահմանը անցնում է Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհով 1.3 կմ և հասնում **Գ2** կետը (X=552799, Y=4450794):
**Գ2** կետից՝ Ծովակ գյուղի մոտ, թեքվում դեպի հյուսիս, անցնում 330 մետր և դուրս է գալիս լճափ՝ **Դ2** կետ (X=552673, Y=4451097): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 12-րդ տնտեսական գոտուն:

***Տեղանքի նկարագրությունը.***
Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հարթ է: Ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու և բարդու ծառուտներով:

***Ենթակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1.7 կմ:

### 4.4.8. Ութերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 1442 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 72.8 կմ է:

***Սահմանի նկարագրությունը.***
Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Գեղամասար գետի և Արտանիշ գյուղի միջև: Սահմանը սկսում է Գիլլի արգելոցի **Բ1-Գ1** սահմանային հատվածից ձգվում 35 կմ Ծովակ-Արտանիշ ավտոճանապարհով և հասնում է Արտանիշի արգելոցի **Ա1-Բ1** սահմանային հատվածը:

***Տեղանքի նկարագրությունը.***
Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է: Տարածքը հիմնականում ընկած է մինչև 1915 մետր բարձրությունը: Ռեկրացիոն գոտու ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու, չիչխանի և թեղու ծառուտներով:

***Ենթակառուցվածքները.*** Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 12.4 կմ:

4.5. «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտու նկարագրությունը

«Սևան» ազգային պարկի տնտեսական գոտու տարածքները ընկած են հետևյալ հատվածներում՝ Սևան քաղաքից Ծովագյուղ, Լճաշենից Հայրավանք, Նորատուս թերակղզուց Ծակքար գետ, Արգիչի գետից Ծովակ գյուղ և Գեղամասար գետից Արտանիշ թերակղզի, ինչպես նաև Արեգունու հարավ-արևմտյան լեռնալանջերի վրա: Այս հատվածներում տնտեսական գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 11 296 հա (Քարտեզ 4):

**1-ին հատվածի տարածքը կազմում է 388 հա:** Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի հյուսիս-արևմտյան մասում՝ ազգային պարկի սահմանի և 1-ին ռեկրեացիոն գոտու միջև (Փամբակի լեռնաշղթայի Արջուտ լեռնաբազուկի հարավ-արևելյան լանջից մինչև Ծովագյուղ): Տնտեսական գոտու 1-ին հատվածի սահմանի նկարագրությունը համապատասխանում է այս հատվածում ազգային պարկի և 1-ին ռեկրեացիոն գոտու սահմանների նկարագրությանը:

Տնտեսական գոտու այս հատվածի ռելիեֆը, թերակղզուց մինչև Սևան-Դիլիջան հին ճանապարհի վերջը թեք է, իսկ մնացած մասը՝ հարթ: Տարածքը պատված է անտառային տնկարկներով, որտեղ ծառատեսակներից գերակշռում են սոճին, բարդին, ակացիան և թեղին: Հատվածի միջնամասով, 5.3 կմ երկարությամբ, անցնում է երկաթգիծը, իսկ եզրամասով 5.5 կմ երկարությամբ՝ Դիլիջան-Սևան ավտոմայրուղին: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 11.3 կմ: Հատվածի տարածքով անցնում է 4.0 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր և 700 մետր երկարությամբ անցնում է Չկնագետ գետը:

**2-րդ հատվածի տարածքը կազմում է 60.2 հա:** Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի հյուսիս-արևմտյան մասում՝ ազգային պարկի սահմանի և 1-ին ռեկրեացիոն գոտու միջև (Հրազդան գետի և Ցամաքաբերդ գյուղի միջև): Տնտեսական գոտու 2-րդ հատվածի սահմանի նկարագրությունը համապատասխանում է ազգային պարկի և 1-ին ռեկրեացիոն գոտու սահմանների նկարագրությանը:

Տարածքի ռելիեֆը հարթ է, պատված նոսր անտառային տնկարկներով, որտեղ ծառատեսակներից գերակշռում են չիչխանը, թեղին և ուռին:

Հատվածի հարավային եզրամասով 1.3 կմ երկարությամբ անցնում է երկաթգիծը: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2.6 կմ:

**3-ին հատվածի տարածքը կազմում է 79.5 հա:** Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի հյուսիս-արևմտյան մասում՝ Երևան-Սևան ավտոմայրուղու երկու կողմերին:

Սահմանը սկսվում է Երևան-Սևան ավտոմայրուղու Գագարին բնակավայր մտնող խաչմերուկից՝ կամուրջի մոտից, և ավտոմայրուղու աջ և ձախ կողմերով ձգվում 50 մետր լայնությամբ և 4.7 կմ երկարությամբ՝ չհասած 150 մետր Սևան քաղաք մտնող խաչմերուկին: Տնտեսական գոտու 3-րդ հատվածի սահմանի նկարագրությունը համապատասխանում է ազգային պարկի սահմանի նկարագրությանը:

Տարածքի ռելիեֆը մեղմաթեք է, պատված նոսր անտառային տնկարկներով, որտեղ ծառատեսակներից գերակշռում են թեղին և սպիտակ ակացիան:

Հատվածի միջնամասում ուղղահայաց կտրում անցնում է 400 մետր երկարությամբ գազամուղը:

**4-րդ հատվածի տարածքը կազմում է 159 հա:** Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի հյուսիս-արևմտյան մասում՝ 1-ին և 2-րդ ռեկրեացիոն գոտիների, Լճաշեն և Չկալովկա գյուղերի միջև: Տնտեսական գոտու 4-րդ հատվածի սահմանի նկարագրությունը համապատասխանում է ազգային պարկի, 1-ին և 2-րդ ռեկրեացիոն գոտիների սահմանների նկարագրությանը:

Տնտեսական գոտու այս հատվածի ռելիեֆը գրեթե հարթ է: Անտառային տնկարկներով պատված է միայն հատվածի հյուսիս-արևելյան մասը, որտեղ ծառատեսակներից գերակշռում են բարդին, չիչխանը և թեղին: Հատվածի միջնամասով 3.2 կմ երկարությամբ անցնում է Սևան-Գավառ ավտոճանապարհի հատվածը: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9.1 կմ: Հատվածի տարածքով անցնում են 4.8 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր:

**5-10-րդ հատվածների տարածքները կազմում են 179 հա:** Դրանք գտնվում են «Սևան» ազգային պարկի արևմտյան մասում՝ Նորաշեն-Հայրավանք գյուղերի միջև: 5-րդ և 6-րդ հատվածներն ընկած են 2-րդ ռեկրեացիոն գոտու, Նորաշենի արգելոցի և ազգային պարկի սահմանների միջև: 7-րդից 10-րդ հատվածներն ընկած են 3-րդ ռեկրեացիոն գոտու և ազգային պարկի սահմանների միջև: Տնտեսական գոտու 5-ից 10-րդ հատվածների սահմանների նկարագրությունը համապատասխանում է ազգային պարկի, Նորաշենի արգելոցի, 2-րդ և 3-րդ ռեկրեացիոն գոտիների սահմանների նկարագրությանը:

Տնտեսական գոտու այս հատվածների գերակշռող մասերում ռելիեֆը ժայռոտ է և պատված է քարերով: Անտառային տնկարկներ քիչ կան, ծառատեսակներից հանդես են գալիս չիչխանը և թփանման ուռին:

Հատվածների եզրամասով անցնում է Սևան-Գավառ ավտոճանապարհի 9.3 կմ հատվածը: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 11.5 կմ:

**11-րդ հատվածի տարածքը կազմում է 6158 հա:** Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի արևմտյան և հարավային մասերում՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ռեկրեացիոն գոտիների, «Գավառագետ» արգելավայրի և «Լիճք-Արգիչի» արգելոցի միջև: Տնտեսական գոտու 11-րդ հատվածի սահմանների նկարագրությունը համապատասխանում է ազգային պարկի, «Գավառագետ» արգելավայրի, «Լիճք-Արգիչի» արգելոցի, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ռեկրեացիոն գոտիների սահմանների նկարագրությանը:

Տնտեսական գոտու այս հատվածի ռելիեֆը հարթ է: Տարածքը պատված է անտառային տնկարկներով, հիմնական ծառատեսակներից հանդես են գալիս սոճին, բարդին, չիչխանը, գիհին և թփանման ուռին:

Հատվածի եզրամասով անցնում է Սևան-Վարդենիս ավտոճանապարհի 21.2 կմ հատվածը: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 239 կմ: Հատվածի տարածքով անցնում են 7.2 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր և 18.9 կմ գազամուղ: Տնտեսական գոտու այս հատվածում են Գավառագետ, Երանոս, Ձորագյուղ, Ծակքար, Բախտակ, Լիճք, Արգիճի, Մարտունի, Աստղաձոր, Ձոլաքար և Վարդենիկ գետերի գետաբերանային հատվածները:

**12-րդ հատվածի տարածքը կազմում է 947 հա:** Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի հարավային մասում՝ Արփա-Սևան ջրանցքի և «Գիլլի» արգելոցի միջև: Հատվածի սահմանը անցնում է ազգային պարկի, «Գիլլի» արգելոցի, 6-րդ և 7-րդ ռեկրեացիոն գոտիների սահմաններով: Տնտեսական գոտու այս հատվածի ռելիեֆը հարթ է: Տարածքը պատված է անտառային տնկարկներով, ծառատեսակներից հանդես են գալիս սոճին, բարդին, և գիհին:

Հատվածի եզրամասով անցնում է Սևան-Վարդենիս ավտոճանապարհի 6.2 կմ և միջնամասով՝ 5.5 կմ հատվածը: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 21.3 կմ: Հատվածի տարածքով անցնում է 6.7 կմ գազամուղ, հոսում են Արծվանիստ և Կարճաղբյուր գետերը:

**13-րդ հատվածի տարածքը կազմում է 3325 հա:** Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի հյուսիս-արևելյան մասում՝ Արեգունու լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի վրա: Հատվածի սահմանն անցնում է ազգային պարկի և 1-ին ռեկրեացիոն գոտու սահմանների միջև: Տնտեսական գոտու 13-րդ հատվածի սահմանի

նկարագրությունը համապատասխանում է ազգային պարկի և 1-ին ռեկրեացիոն գոտու սահմանների նկարագրությանը:

Տնտեսական գոտու այս հատվածի ռելիեֆը կտրտված է բազմաթիվ ձորերով և ձորակներով: Այս հատվածում Արեգունու լեռնաշղթայի լանջերը ունեն մեծ թեքություններ:

Հատվածում անտառային տարածքները հանդես են գալիս հատվածներով, ձորերում և ձորակներում, հիմնականում կազմված են սոճու, կաղնու և գիհու ծառուտներից: Հատվածը հարուստ է խոտաբույսերով:

Հատվածի եզրամասով անցնում է Շորժա-Ծովագյուղ ավտոճանապարհի 15.5 կմ հատվածը, որով սահմանակցում է 1-ին ռեկրեացիոն գոտուն: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 34 կմ: Հատվածի տարածքով անցնում են 12.1 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր: Տարածքում գետերը հոսում են Արեգունու լեռնաշղթայի լանջերից և մշտական հոսք չունեն:

## 4.6. «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների արդյունավետ կառավարմանն ուղղված գործողություններ

«Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է, որպեսզի դրանցից յուրաքանչյուրի համար, այդ թվում՝ առանձին վերցրած յուրաքանչյուր արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական գոտիների, մշակվեն և իրականացվեն համապատասխան կանոնակարգեր (Հավելված 1): Բացի այդ, արգելոցային գոտիների համար պետք է սահմանել հստակ մուտքավճարներ՝ գիտա-ճանաչողական էքսկուրսիաների անցկացման նպատակով (համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի):

Հաշվի առնելով ազգային պարկի տարածքա-գործառնական նոր գոտևորման և «Վարդենիսի» մասնաճյուղի առանձնահատկությունները՝ նպատակահարմար է այդ մասնաճյուղում ստեղծել նոր տեղամաս Ծափաքաղում կամ Դարանակում (Հավելված 1):

## Բ Ա Ժ Ի Ն 5. «Սևան» ազգային պարկի կառավարման ներկա առանձնահատկությունները և դրա բարելավմանն ուղղված գործողությունների պլանը

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ՊՈԱԿ-ի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա: Կանոնադրության համաձայն՝ ՊՈԱԿ-ը իրականացնում է բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական գործունեություն: «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գործունեության առարկան և նպատակը պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է: Այդ նպատակով կազմակերպության կարևոր կանոնադրական գործառույթներից են.

- ապահովել Սևանա լճում ու դրա ավազանում ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանությունը, կազմակերպել և իրականացնել դրանց գիտական ուսումնասիրությունները,
- կազմակերպել և իրականացնել բնական էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների բուսական ու կենդանական աշխարհի հաշվառումը և նախապատրաստել կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերը,
- իրականացնել էկոլոգիական դիտանց, վարել բնության տարեգրություն, կազմակերպել բնության թանգարանի գործունեությունը,
- կանխարգելել մարդու գործունեության հետևանքով պարկի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացները և իրականացնել խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ,
- կազմակերպել զբոսաշրջություն,
- իր իրավասության սահմաններում իրականացնել բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ:

«Սևան» ազգային պարկ հիմնարկին պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ տալով՝ ստեղծվեց հնարավորություն պարկի տարածքում ներդաշնակելու բնօգտագործման (հատկապես ռեկրեացիոն ինդուստրիայի) և բնապահպանական գործառույթները: Այս կարգավիճակը հնարավորություն է տալիս պարկին զբաղվելու օրենքով թույլատրված որոշակի ձեռնարկատիրական գործունեությամբ և իրականացնել վճարովի ծառայություններ, այդ թվում՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կենսառեսուրսների, այդ թվում՝ բույսերի ու կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում,
- բնափայտի մթերում, վերամշակում և իրացում,
- երկրորդական անտառանյութի (կոճղերի) մթերում, վերամշակում և իրացում,
- կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում և իրացում,
- գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում,
- հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում,
- գիտական, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրապարակում:

Վերոգրյալ գործունեությունից ստացված հասույթը, ըստ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրության, օգտագործվում է պարկի կանոնադրական խնդիրների՝ գործառույթների իրականացման նպատակով (հիմնականում պահպանական):

Թվարկած կանոնադրական գործառույթների և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ու իրականցման համար «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը ունի համապատասխան կառավարման համակարգ (կառուցվածքը) և աշխատողների անձնակազմ: Համաձայն ՊՈԱԿ-ի 2006 թվականի հաստիքացուցակի այդ համակարգը ներառում է՝ անմիջական կառավարումն իրականացնող ղեկավարությունից (7 հաստիք – տնօրեն, տնօրենի տեղակալ պահպանության գծով, տնօրենի տեղակալ գիտության գծով, տնօրենի տեղակալ վարչատնտեսական և ռեկրեացիայի գծով, գլխավոր անտառապետ, առաջատար մասնագետ կադրերի գծով և մասնագետ-իրավախորհրդատու), գիտության բաժնից (10 հաստիք), պահպանության բաժնից (7 հաստիք), ֆինանսահաշվապահական բաժնից (5 հաստիք), վարչատնտեսական և ռեկրեացիոն բաժնից (25 հաստիք): «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից են նաև հետևյալ 4 մասնաճյուղերը իրենց տեղամասերով.

- Սևանի մասնաճյուղ (36 հաստիք) - Սևանի, Ախթամարի, Արտանիշի տեղամասեր,
- Նորատուսի մասնաճյուղ (27 հաստիք) - Նորատուսի, Հայրիվանի և Գավառի տեղամասեր,
- Մարտունու մասնաճյուղ (49 հաստիք) - Մարտունու, Երանոսի, Վարդենիկի, Ծովինարի տեղամասեր,
- Վարդենիսի մասնաճյուղ (32 հաստիք) - Արևիկի, Ծովակի, Վարդենիսի տեղամասեր:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառուցվածքում են ընդգրկված նաև Բնության թանգարանը՝ Սևան քաղաքում, և Ծովինարի տնկարանը, որը չի գործում և դրա հետ կապված գործողությունների պլանը ներկայացված է սույն կառավարման պլանի 7.4.4. կետում:

Աշխատողների թվաքանակի և միջին ամսական աշխատավարձի չափերի դինամիկան վերջին տարիներին բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով՝

| | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---|---|---|---|---|---|
| Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը (մարդ) | 247 | 209 | 202 | 202 | 200 |
| Աշխատողների միջին ամսական աշխատավարձը (հազ.դրամ) | 12.1 | 15.8 | 19.1 | 19.5 | 37.6 |

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովման համար պետական բյուջեից կատարված հատկացումների և ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների ծավալների դինամիկան հետևյալն է՝

| Տարիները | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ եկամուտները/հասույթը / հազ.դրամ / | | |
|---|---|---|---|
| | Պետությանը մատուցված ծառայություններից | Ձեռնարկատիրական գործունեությունից | ԸՆԴԱՄԵՆԸ |
| 2003 թվական փաստացի | 80 000.0 | 14 733.1 | 94 733.1 |
| 2004 թվական փաստացի | 80 000.0 | 49 192.9 | 129 192.9 |
| 2005 թվական փաստացի | 78 400.0 | 52 147.2 | 130 547.2 |
| 2006 թվական ծրագիր | 151 607.0 | 80 846.0 | 232 453.0 |

ՀՀ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի պայմաններում զգալիորեն ավելացել է բնակչության տեխնածին և այլ ներգործությունը բնության, այդ թվում՝ ազգային պարկի

վրա: Ներկայումս ազգային պարկի տարածքների պատշաճ պահպանությունը ենթադրվում է իրականացնել շուրջօրյա՝ 3-4 հերթափոխով, իսկ ազգային պարկում գործում են աշխատողների թվաքանակի նախկին՝ խորհրդային ժամանակահատվածից կիրառվող սահմանաքանակները, որոնցով լավագույն դեպքում նախատեսված է 1.5 հերթափոխով աշխատանք: Այս առումով, եթե նույնիսկ հաշվի չառնվի ազգային պարկի պահպանությունն իրականացնող անձնակազմի տեխնիկական թույլ զինվածությունը, ապա աշխատողների ներկայիս գործող թվաքանակը 2-ից 2.5 անգամ պակաս է անհրաժեշտ թվաքանակից:

Վերջին տարիներին, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բյուջետային ֆինանսավորման ծավալներն աճել են ավելի քան 2.5 անգամ, սակայն դրանք դեռևս բավարար չեն ազգային պարկի պահպանությունն արդյունավետ կազմակերպելու համար: Հսկիչները վարձատրություն են ստանում 8 ժամվա աշխատանքի համար, իսկ պատասխանատվություն կրում ամբողջ օրվա (24 ժամվա) համար:

Ազգային պարկի տարածքների պահպանության որակի և իրականացման արդյունավետության բարձրացումը ներկայումս զգալիորեն պայմանավորված է պահպանությունն իրականացնող անձնակազմի նյութատեխնիկական զինվածությամբ և, հատկապես, աշխատանքի վարձատրության օպտիմալ չափերով (2006 թվ. հաստքացուցակով հսկիչի ամսական աշխատավարձը կազմում է 35.0 հազ.դրամ): Գաղտնիք չէ, որ վարձատրության ոչ բավարար չափերը չեն ապահովում պարկերի պահպանության գծով աշխատանքների պահանջվող մակարդակը:

Կառավարման մասով առկա մյուս հիմնախնդիրներն են՝

1. հստակ չեն սահմանված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության նպատակների իրականացումը բնութագրող չափորոշիչները, բյուջետային ֆինանսավորման նախապայման հանդիսացող ծրագրային ցուցանիշները.
2. հստակ չեն սահմանված նաև բյուջետային ֆինանսավորում ստանալու չափորոշիչները, այդ թվում՝ ՊՈԱԿ-ների կանոնադրական խնդիրների կատարման շրջանակներում պետությանը մատուցվող ծառայությունների արժեքների գնագոյացման նորմատիվները՝ աշխատավարձի գծով (առավելագույն, միջին), ինչպես նաև նյութական և այլ ծախսերի գծով.
3. բացակայում են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բնականոն գործունեության և տեխնիկական անվտանգության չափորոշիչները (կիրառվող չափանիշները ժառանգված են խորհրդային ժամանակաշրջանից և չեն համապատասխանում այսօրվա պահանջներին), օրինակ՝ 1 հսկիչին ընկնող պահպանվող տարածքը՝ հեկտարներով և 1 հսկիչի տեխնիկական զինվածության չափորոշիչները.
4. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունով չի նախատեսված կառավարման կոլեգիալ մարմին (խորհուրդ), որը, մեր կարծիքով, թուլացնում է ազգային պարկի կառավարման մասով վարչարարության արդյունավետությունը.
5. թույլ է ծրագրային ցուցանիշների կապը ֆինանսական ցուցանիշների հետ, հատկապես՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների գծով, որը շատ հաճախ հանգեցնում է դրանց ոչ նպատակային և ոչ արդյունավետ օգտագործմանը.
6. ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությանը խանգարում է «կառավարման լիազոր մարմին»-«ՊՈԱԿ-ի գործադիր մարմին» կապ-հանգույցում առկա մի շարք չլուծված հիմնախնդիրները, մասնավորապես՝
   - պայմանագրային պարտականությունների ոչ հստակ ձևակերպումներ, դրանց վերահսկման հարցերին ոչ բավարար վերաբերմունք,
   - խրախուսման, ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների աճը խթանող, համակարգի բացակայություն.
7. համապատասխան ֆինանսական մեխանիզմի բացակայության պատճառով ազգային պարկի տարածքներում բնօգտագործման արդյունքում ստացվող տնտեսական և ֆինանսական այլ օգուտների հիմնական (բնօգտագործման վճարներ, բնապահպանական տուգանքներ, բնությանը պատճառված վնասի հատուցման

գումարներ և այլն) մասը չի վերադառնում բնապահպանության ոլորտ (նույն ազգային պարկի համար գերակա բնապահպանական միջոցառումների ֆինանսավորմանը):

Վայրի բնության պահպանության հիմնադրամի (WWF) և Համաշխարհային բանկի մշակած մեթոդիկայով 2005-2006 թ.թ. իրականացվել է «Սևան» ազգային պարկի կառավարման գնահատում, որի արդյունքները հետևյալն են.

1. Համատեքստային փուլ - չնայած «Սևան» ազգային պարկն ունի լիարժեք իրավական կարգավիճակ, այնուամենայնիվ հաճախ խնդիրներ են ծագում բնօգտագործման, հատկապես՝ հողօգտագործման բնագավառում, և հաստատված մեխանիզմներով համարժեք հոկողություն իրականացնելիս, որը պայմանավորված է համապատասխան կադրերի մասնագիտական որակավորմամբ (օրենքների, իրավական նորմերի վերաբերյալ և մասնագիտական թերի գիտելիքներ), բարձր որակավորում ունեցող մասնագետների, ինչպես նաև հաստիքների ընդհանուր քանակի սակավությամբ: Վերջինս հատկապես վերաբերվում է անտառապահների և տեսուչների քանակությանը, որն աշխատանքի դժվարության և ցածր վարձատրության հետևանք է: Դա էլ, իր հերթին, դրդապատճառ է հանդիսանում հսկիչների կողմից չարաշահումներ կատարելու համար:
2. Պլանավորման փուլ - պլանավորման գործընթացը պատշաճ կերպով է կատարվում, քանի որ դրված են այնպիսի հստակ խնդիրներ, որոնք լուծվում են աշխատակիցների տարեկան աշխատանքային պլանների հաստատման և իրականացման շնորհիվ, ենթակա են կանոնավոր մոնիտորինգի ու վերլուծության: Այնուամենայնիվ ոչ բոլոր նպատակներն են իրականացվում, քանի որ պլանավորման գործընթացն առայժմ ընթանում է համարյա առանց շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության, որոնք գրեթե ազդեցություն չունեն որոշումների կայացման գործընթացի վրա: Մոնիտորինգի արդյունքները ևս համակարգված կերպով չեն օգտագործվում պատշաճ կառավարման գործում:
3. Ներդրումային փուլ - ազգային պարկի արդյունավետության բարձրացման հիմնական գործոններն են՝ ռեսուրսների (ներդրումների) առկայությունը, հատկացումները և դրանց ներուժը: Սա հատկապես վերաբերվում է կադրային քաղաքականությանը, որն, ընդհանուր առմամբ, ինչպես քանակական, այնպես էլ մասնագիտական պատրաստվածության առումով անբավարար է կառավարման առանցքային գործողությունների իրականացման համար: Ավելին, բացակայում է հաստատված վերապատրաստման երկարաժամկետ ծրագիր: Չնայած ընդհանուր առումով թվում է, որ ֆինանսական հատկացումները բավարար են, սակայն, ամբողջապես վերցրած, բավարար չեն արդյունավետ կառավարումն ապահովելու համար: Վերջապես, հետազոտական աշխատանքներն ու ուսումնասիրությունները չափազանց սահմանափակ են և կապված չեն ազգային պարկի կառավարման որոշակի կարիքների հետ:
4. Գործընթացային փուլ - Չնայած առանցքային էկոհամակարգերի, դրանց բաղադրիչների և մշակութային արժեքների արդյունավետ կառավարման խնդիրները հստակ ներկայացված են ազգային պարկի կանոնադրությունում, սակայն էկոհամակարգերի ընդհանուր պահպանության տեսակետից դրանք ամբողջական լուծում չեն ստանում: Աշխատակիցների տարեկան աշխատանքային պլանները մշակվում, իրականացվում և կանոնավոր կերպով մոնիտորինգի ու գնահատման են ենթարկվում, սակայն կառավարման որոշակի գործողությունների հաջող իրականացման համար խոչընդոտ է հանդիսանում համապատասխան որակյալ մասնագետների բացակայությունը, հատկապես գիտաշխատողների և տեսուչների պակասը: Կառավարման գործընթացի իրականացման համար առկա բյուջեն բավարար է համարվում, սակայն այն պետք է սահմանվի կառավարման պլաններից ելնելով: Կանոնավոր կապեր կան ազգային պարկի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և հողօգտագործողների միջև, սակայն չափազանց սահմանափակ է որոշումների կայացման գործում նրանց համագործակցությունը: Նույնը կարելի է ասել պարկի և այլ շահագրգիռ կողմերի

համագործակցության վերաբերյալ: Օրինակ՝ գործնականում ոչ մի կապ չկա ազգային պարկի և տուրօպերատորների միջև՝ ազգային պարկի տարածքների օգտագործման հարցում: Հետևաբար բացակայում է տուրիստական գործունեությունից ստացվող հասույթների մասնահանման հնարավորությունը: Մասնակցային կառավարումը և զարգացումը խոչընդոտվում է նաև այն հանգամանքով, որ ազգային պարկը թերարժեք տեղեկատվություն է տրամադրվում շահագրգիռ կողմերին իր գործունեության վերաբերյալ: Սա կրթական և հասարակության իրազեկության բարձրացման սահմանափակ գործընթացների հետևանք է:

5. <u>Արդյունավետության փուլ -</u> Կառավարման արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունեն համապատասխան կադրային և նյութական ռեսուրսների բացակայությունը: Ազգային պարկի կողմից մատուցվող ծառայություններն ինչպես քանակապես, այնպես էլ որակապես սահմանափակ են: Օրինակ՝ ազգային պարկում չի գործում այցելուների կենտրոն և սակավաթիվ բացատրական նյութեր ու ցուցատախտակներ կան: Դա վերաբերվում է հատկապես այն տարածքներին, որոնք իրենցից լուրջ տուրիստական հետաքրքրություն են ներկայացնում: Սահմանափակ գործողությունները ազգային պարկին հնարավորություն չեն տալիս նման ծառայությունների դիմաց այցելուներից վճարներ գանձելու մեխանիզմ կիրառել: Ընթացիկ գործողությունների տեսանկյունից ևս արդյունավետությունը թույլ է, որն արդյունք է պարկի և տեղական շահագրգիռ կողմերի միջև թույլ վստահության և հաղորդակցության: Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում դեգրադացված տարածքների վերականգնման ծրագրի բացակայությունը ևս խոչընդոտում է կառավարման արդյունավետությանը:

6. <u>Հետևանքների փուլ -</u> Չնայած ազգային պարկի կառավարման նպատակն է պահպանել էկոհամակարգերի բնականոն վիճակը, կենսաբազմազանությունն ու մշակութային հուշարձանները, սակայն շարունակվում են կարևոր նշանակություն ունեցող բնական պաշարների (ձկնային, անտառային) կրճատման գործընթացները, խախտվում են աճելավայրերն ու բնադրավայրերը, որոնք հետևանք են գործառույթների անկանոն իրականացման (որպես փաստ՝ ապօրինի բնօգտագործման և չկարգավորված տուրիզմի առկայությունը): Ըստ որում՝ կադրային և նյութական ռեսուրսների անբավարարության պատճառով ազգային պարկի պահպանության համակարգը միջին արդյունավետություն ունի:

Ընդհանրացնելով սույն գնահատման արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը արդյունավետ կառավարումն ապահովելու և իր առջև դրված խնդիրները լիարժեք իրականացնելու համար ունի թույլ կարողություններ, որը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.

- ազգային պարկի տարածքում գոյություն ունեցող արժեքների և դրանց սպառնացող վտանգների վերաբերյալ թերի տեղեկացվածություն.
- որակյալ կադրերի բացակայություն.
- կառավարման գործողությունների թերի իրականացում.
- կառավարման և որոշումների կայացման գործընթացին մասնակցային մոտեցման բացակայություն:

Բացի վերը նշվածից, ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ «Սևան» ազգային պարկին հարակից և պահպանական գոտու համայնքները չեն մասնակցում կենսաբանական ռեսուրսների օգտագործումից ստացված օգուտների բաշխման գործընթացին: Բացի դրանից, բնօգտագործման ոլորտը կարգավորող իրավական ակտերը, թույլտվությունների և սահմանափակումների ոչ օպտիմալ համակարգը, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման չարդարացված բարդ ընթացակարգը բնակչության համար ստեղծում են հիմքեր կենսառեսուրսների ապօրինի օգտագործման համար: Ազգային պարկը սահմանափակ հնարավորություններ ունի նաև տնտեսական մեխանիզմների և խթանման լծակների կիրառման առումով:

Դեռևս հստակեցված չէ ազգային պարկի մասնաճյուղերի դերը կառավարման գործընթացում: Դրանց գործունեության օպտիմալ պլանավորման բացակայությունը կապված է կառավարման իրական խնդիրների և երկարաժամկետ նպատակների թերագնահատման հետ և որոշակի խոչընդոտներ է առաջացնում ազգային պարկի արդյունավետ կառավարման համար: Մասնաճյուղերի և դրանց տեղամասերի անձնակազմը հիմնականում իրականացնում է տեսչական գործառույթներ: Ընդ որում՝ ազգային պարկի ռեժիմը խախտող ապօրինի գործողությունները հիմնականում տեղի են ունենում գիշերային ժամերին կամ շաբաթ ու կիրակի օրերին, երբ հսկողությունը սահմանափակ է կամ ընդհանրապես չի իրականացվում: Հետևաբար արդիական է դարձել վերանայել և ուժեղացնել մասնաճյուղերի դերը և գործառույթները՝ սահմանելով դրանք յուրաքանչյուրի կանոնադրությամբ և մշակելով արդյունավետ հսկողության համակարգի իրատեսական մեխանիզմներ:

### 5.1. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողություններ

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունները նպատակաուղղված են դրա կառուցվածքային և կադրային բարեփոխումներին, որոնցով հնարավոր կդառնա կանոնադրական գործառույթների արդյունավետ իրականացումը: Ընդ որում՝ կառուցվածքային բարեփոխումներում անհրաժեշտ է նկատի ունենալ այնպիսի ստորաբաժանումների առկայությունը, ինչպիսիք են՝ տարածքագործառնական և պահպանական գոտիների պահպանության, մոնիտորինգի և կադաստրի վարման, տնտեսական գործունեության պլանավորման, ռեկրեացիոն գործունեության պլանավորման բաժինները և տեղեկատվական կենտրոնը: Բացի այդ, անհրաժեշտ է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում ստեղծել խորհրդատվական մարմին, որում ընդգրկված կլինեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, բնօգտագործողների, տեղական հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ, որի շնորհիվ կապահովվի որոշումների կայացման գործընթացում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ թափանցիկությունը և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը: Կառուցվածքային բարեփոխումների մյուս ուղղությունը դա «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերին առավել ինքնուրույնություն տալն է, որն հնարավոր է իրականացնել դրանց կանոնադրությունների մշակմամբ և հաստատմամբ: Բացի այդ, անհրաժեշտ է յուրաքանչյուր մասնաճյուղում ստեղծել այցելուների կենտրոններ (տես նաև՝ սույն կառավարման պլանի 8.6. կետը): Այցելուների կենտրոնի ստեղծմամբ կապահովվի զբոսաշրջիկների/այցելուների համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը, ինչպես պարկի գործունեության, այնպես էլ բնության և մշակույթի արժեքների մասին:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացմանը և ազգային պարկի օրենսդրությամբ սահմանված ռեժիմի ապահովմանը նպաստող գործողություններից են՝ տեսչական անձնակազմի աշխատավարձերի վերանայումը և խրախուսման համակարգի ստեղծումը, շուրջօրյա հսկողության համակարգի ներդրումը:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացման առանցքային խնդիրներից են կադրերի վերապատրաստման հստակ ծրագրերի առկայությունը, հաստիքային միավորների ծառայողական պարտականությունների սահմանումը, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ պլանավորումը և թեմաների մշակման ու դրանց հաստատման գործընթացների կատարելագործումը:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացումը զգալիորեն պայմանավորված է նաև ազգային պարկի նշանակության և գործունեության մասին ազգաբնակչության իրազեկության մակարդակից: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել շարունակական գործունեություն, որն հնարավոր է իրազեկության բարձրացման ծրագրի առկայության դեպքում:

## ԲԱԺԻՆ 6. «Սևան» ազգային պարկին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագիրը և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման գործողությունների պլանը

### 6.1. Համայնքների սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը

«Սևան» ազգային պարկին հարակից համայնքների լեռնային վայրում գտնվելը, ջրային ռեսուրսների մատչելիությունը, ինչպես նաև աշխարհագրական լայն ցրվածությունը որոշակիորեն ազդում է այս շրջանում ապրելակերպի և զբաղվածության վրա: Աշխատատեղերի բացակայությունը հիմնականում պայմանավորված է՝ գյուղատնտեսության, որպես գյուղական համայնքների հիմնական զբաղվածության աղբյուրի, ոչ ձեռնտու լինելով, լճում ձկան արդյունագործական պաշարների նվազումով, արդար մրցակցության բացակայությամբ (Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում 2005 թվ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը տրամադրվել է ՀՀ Բնապահպանության նախարարությանը և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին):

1988-1991 թթ. Գեղարքունիքի մարզը մեծ թվով փախստականներ է ընդունել: Դա իր ազդեցությունն է թողել մարզում ընդհանուր սոցիալական պայմանների վրա՝ ավելացնելով խոցելի բնակչության թվաքանակը: Մարզում փախստականների թիվը կազմում է 12 400 մարդ կամ ընդհանուր բնակչության մոտ 5.2 %-ը: 2001 թ. աղքատության շեմից ցածր բնակչության տեսակարար կշիռը կազմում էր 62.2 %, 2002 և 2003 թվականներին այն կազմել է համապատասխանաբար՝ 47.2 % և 59.9 %, իսկ 2004 թ.՝ 46.4 %: Ներկայումս զբաղված բնակչության միայն 12.6 %-ն է աշխատում պետական կազմակերպություններում և հիմնարկներում, շուրջ 77 %-ը զբաղված է գյուղատնտեսությամբ, ընդհանուր բնակչության մոտ 56 %-ը կախված է պետական աջակցությունից, որից 16.9 %-ը պետությունից ստանում է թոշակներ կամ այլ նպաստներ, իսկ 39.4 %-ը՝ պետության պաշտպանության ներքո է (անչափահաս երեխաներ):

Համայնքներում բնակչության եկամտի հիմնական աղբյուրներից է գյուղատնտեսությունը, որի ճյուղերից հողագործությունը, որպես եկամտի աղբյուր, վերջին տարիների ընթացքում զգալիորեն նվազել է՝ հնացած սարքավորումների անարդյունավետության, պարարտանյութերի, սերմնացուի և նոր գյուղտեխնիկայի թանկ լինելու, գյուղատնտեսական ապրանքների շուկայի բացակայության և մարզից հեռու լինելու պատճառով: Փոխարենը նկատվում է եղջերավոր անասունների բուծման նշանակալի աճ, որի պատճառը մսամթերքների նկատմամբ համեմատաբար բարձր պահանջարկն է (ազգային պարկին հարակից համայնքներում հաշվվում է շուրջ 200 000 գլուխ եղջերավոր անասուն): Գեղարքունիքի մարզի պետական հաստատություններում աշխատում է բնակչության 10-15 %-ը՝ 20000-30000 դրամ ամսական միջին աշխատավարձով, որոնց վճարումը երբեմն ուշանում է մի քանի ամսով: Մարզի տարածքում գործում են մի շարք մասնավոր ձեռնարկություններ, որոնցից հիշատակման են արժանի Նորատուսի ձկնամշակման գործարանը, Արտանիշում ՄԻԿԱ-ի ցեմենտի գործարանի մասնաճյուղը, Շորժայի կաթի գործարանը, Սևանի «Անուշ» լիմոնադի գործարանը, Ծովազարդի գորգագործական արհեստանոցը և այլն:

### 6.2. Համայնքների կողմից «Սևան» ազգային պարկի բնական պաշարների օգտագործումը

Համայնքների կողմից «Սևան» ազգային պարկի բնական պաշարների օգտագործման առանձնահատկությունները պայմանավորված են ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակով, որի հետևանքով այն հաճախ ուղեկցվում է օրինախախտումներով՝ բացասաբար ներգործելով էկոհամակարգերի հավասարակշռության վրա:

### 6.2.1. Ջրային ռեսուրսների օգտագործումը

Համայնքների զգալի մասում լուծվել է ոռոգման և կենդանիներին ջրի մատակարարման խնդիրները, սակայն դրանք դեռևս գոյություն ունեն բազմաթիվ համայնքներում (օրինակ՝ Ծովազարդում, Չկալովկայում), որտեղ, արոտավայրերում ջրարբիացման կետերի բացակայության պատճառով, տեղի է ունենում աղտոտված ջրերի ներհոսք հատկապես այնպիսի գետերից, ինչպիսիք են Արգիչին և Գավառագետը, որոնք անցնում են բազմաթիվ համայնքներով մինչև Սևանա լիճ հասնելը: Ընտանի կենդանիների ջրումը բնապահպանական լուրջ խնդիրներ է առաջացնում նաև լճի ափամերձ երկայնքով: Բացի այդ, ոռոգման նպատակով հիմնականում օգտագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը: Անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով գետերի մեծ մասը ամառային ամիսներին ցամաքում են, որով զգալի վնաս է հասցվում մայիս-հուլիս ամիսներին Սևանի կողակի, ամառային բախտակի և Սևանի բեղլուի ձվադրմանը (ջրային էկոհամակարգերի վիճակը ներկայացված է սույն կառավարման պլանի 7.1. կետում):

### 6.2.2. Ձկան և խեցգետնի պաշարների օգտագործումը

Չնայած ձկան պաշարները զգալիորեն նվազել են, սակայն որոշ համայնքներում (Նորատուս, Ծովագյուղ) այն հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուր: Ձկնագողության բարձր մակարդակը հանգեցրել է ձկնային պաշարների կտրուկ նվազեցման և դրան համապատասխան՝ գնի բարձրացման: Բացի ձկնորսությունից, լայն տարածված գործունեություն է խեցգետնի որսը: Վերջին տարիներին այն մեծ պահանջարկ ունի և դրա որսով զբաղվողների թիվը աստիճանաբար ավելանում է (ձկնային և խեցգետնի պաշարների վիճակը ներկայացված է սույն կառավարման պլանի 7.2. կետում): Կատարվում է նաև խեցգետնի վերամշակում՝ Ծովազարդ համայնքին մոտ՝ ազգային պարկի տարածքում և ապահովում է շուրջ 60 աշխատատեղ:

### 6.2.3. Ռեկրեացիոն նպատակներով տարածքների օգտագործումը

Ռեկրեացիոն նպատակով տարածքների օգտագործման հիմնական ձևերն են՝ լողափերի կազմակերպումը և դրա հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցումը և քաղաքացիների կարճատև ու երկարատև հանգստի կազմակերպումը հյուրանոցային պայմաններում («Սևան» ազգային պարկում ռեկրեացիայի առանձնահատկությունները տրված են սույն կառավարման պլանի Բաժին 8-ում): Այն հիմնականում սեզոնային բնույթ ունի և առավելապես զարգացած է Սևանի ավազանի հյուսիս-արևմտյան հատվածում: Վարդենիսի և Մարտունու համայնքների անդամները այս գործունեությամբ գրեթե չեն զբաղվում՝ Երևանից ունեցած հեռավորության, վատ ճանապարհների և տուրիստական ենթակառուցվածքների բացակայության պատճառով:

### 6.2.4. Արածեցումը

Չնայած ազգային պարկի տարածքում արածեցումն օրենսդրությամբ արգելվում է, սակայն այն բավականին տարածված է՝ հատկապես Նորատուսին և Մարտունու համայնքներին հարող տարածքներում: Համայնքների ներկայացուցիչների պատճառաբանությամբ ամառային արոտավայրերը գտնվում են գյուղերից 20-30 կմ հեռավորության վրա, և դրանցից օգտվում են միայն այն ֆերմերները, որոնք ունեն 10-15-ից ավել գլուխ կենդանիներ: Հաճախ արածեցումն իրականացվում է նաև ազգային պարկի անտառային և ռեկրեացիոն տարածքներում: Արածեցման բացասական հետևանքներից են բուսածածկի տրորումը, վերանի կրճատումը, շրջակա միջավայրի աղտոտումը:

### 6.2.5. Բուսական և կենդանական պաշարների օգտագործումը

«Սևան» ազգային պարկին հարակից համայնքների ջեռուցման հիմնական աղբյուրը շարունակում է մնալ փայտը, որն ազգային պարկի տարածքից ձեռք է բերվում հիմնականում ապօրինի ճանապարհով: Հաճախ այն ներկրվում է Տավուշի մարզից՝ 11-

12000 դրամ/մ$^{3}$-ով: Ձմռանը յուրաքանչյուր ընտանիք սպառում է միջինը 7-12 մ$^{3}$ փայտ: Ազգային պարկի տարածքից փայտամթերումը նվազել է այն համայնքներում, որոնք գազաֆիկացվել են, սակայն այստեղ շատերը նախընտրում են փայտը, քանի որ այն պօրինի ճանապարհով և անվճար ձեռք է բերվում մոտակա անտառներից: Ազգային պարկին հարակից համայնքների բնակչության մի մասը (հիմնականում Սևանի և Վարդենիսի տարածքներից) հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին զբաղվում է չիչխանի մթերումով (յուրաքանչյուր ընտանիք վաճառքի նպատակով օրեկան մթերում է մինչև 15 կգ): Բնակչության որոշ մասը զբաղվում է նաև ուտելի բույսերի և դեղաբույսերի հավաքով, որոնք հիմնականում օգտագործում են անձնական կարիքները հոգալու համար: Հարկ է նշել, որ հատապտուղների, ուտելի բույսերի և դեղաբույսերի հավաքն իրականացվում է տարերայնորեն՝ առանց «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համաձայնեցման:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում որսորդությունը քիչ է տարածված: Հիմնականում այն իրականացվում է հայտարարված որսատեղոններին:

## 6.3. Բնական պաշարների օգտագործման բնագավառում բնակչության իրազեկությունը, «Սևան» ազգային պարկի և շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը

Չնայած բնակիչները իրազեկ են «Սևան» ազգային պարկի և դրա բնական պաշարների, ինչպես նաև դրանց ձեռք բերման վայրերի ու ուղիների մասին, սակայն հստակ և գիտականորեն հիմնավորված տեղեկատվության բացակայության պատճառով նրանք տեղյակ չեն բնական պաշարների շարունակական օգտագործման և վայրի բնության պահպանության ու կառավարման հարցերին: Այս հանգամանքը զգալիորեն խոչընդոտում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության հաստատմանը: Տնտեսավարող սուբյեկտների, ֆիզիկական անձանց և այլ սուբյեկտների հարաբերությունները «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ բազմաբնույթ են և պայմանավորված են հետևյալ գործոններով.

- Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական վիճակով.
- «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների և հասարակական կազմակերպությունների սահմանափակ և թույլ համագործակցությամբ (առանձին դեպքերում դրա բացակայությամբ).
- առևտրային/կոմերցիոն (շահույթ ստանալու) նպատակներով կամ ցանկություններով:

Կոնֆլիկտային բնույթի փոխհարաբերությունները (դրանց բարդությունը, ազդեցությունը խոցելի համայնքների և շրջակա միջավայրի վրա) պայմանավորված են ազգային պարկի արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց կողմից «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ չհամաձայնեցված գործողությունների իրականացմամբ: Կոնֆլիկտների հիմնական պատճառներն են՝

1. ազգային պարկի ռեժիմի խախտումները,
2. թույլատրվող բնօգտագործման տեսակների գծով դրանց օգտագործման կարգերի, կանոնների, ընթացակարգերի, քվոտաների, նորմաների, նորմատիվների և սահմանափակումների չպահպանումը, չկատարումը,
3. թույլատրվող բնօգտագործման տեսակների գծով ՀՀ օրենսդրության համաձայն պահանջվող փաստաթղթեր (լիցենզիաներ, արտոնագրեր, թույլտվություններ, պայմանգրեր, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում) չունենալը,
4. քաղաքաշինական գործունեության և բնապահպանական օրենսդրության այլ պահանջների չկատարման/չպահպանման հետ կապված և այլ խախտումները,
5. երբեմն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեսչական գործառույթներ իրականացնող անձի կողմից պաշտոնական պարտականությունների ոչ պատշաճ կատարումը,

հսկողական գործառույթների ոչ արդյունավետ և ոչ գործուն մեխանիզմների կիրառումը,

6. առանձին դեպքերում ապօրինի բնօգտագործման գործընթացներին անմիջական և հանցավոր մասնակցության կամ հանցավոր անգործության ցուցաբերումները:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ Գեղարքունիքի մարզում գործող շատ հասարակական կազմակերպություններ շահագրգռված են բնապահպանական խնդիրների լուծմամբ, բնական պաշարների պահպանությամբ, հանրային վերահսկողությամբ և տեղեկատվության տարածման գործընթացով: Սակայն դրանցից միայն քչերն են, որ նշված գործընթացներում կարևորում են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի դերը և պատրաստ են համագործակցել: Ընդհանուր առմամբ «Սևան» ազգային պարկի կառավարման գործընթացին համայնքների մասնակցության ակտիվացմանը խոչընդոտող հիմնական պատճառը հասարակական կազմակերպությունների և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ոչ համարժեք գործունեությունն է: Հասարակական կազմակերպությունների կողմից բնակչության իրազեկությանը նպատակաուղղված գործողությունները հաճախ իրականացվում են առանց «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին տեղեկացնելու: Արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որպես տեղեկատվական և կարգավորող կառույց, գնահատվում է անարդյունավետ, որն հանգեցնում է դրա նկատմամբ համայնքների անվստահությանը: Հարկ է նշել նաև, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ն իր հերթին գտնում է, որ հասարակական կազմակերպությունները գործում են սեփական շահերից ելնելով՝ գործունեություն իրականացնելով ստացված դրամաշնորհային միջոցներով, որոնք նրանց տրամադրվում են բնապահպանական խնդիրներն ուռճացնելու արդյունքում:

Օբյեկտիվորեն գնահատելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ մյուս կողմերի փոխհարաբերությունների բնույթը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ առողջ համագործակցություն հաստատելու գործում, հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև, հիմնական դերը պետք է պատկանի հասարակական կազմակերպություններին, քանի որ նրանք ներկայացնում են համայնքների շահերը և գործում են որպես բնապահպանական գործունեություն իրականացնող հիմնական կառույցներ:

### 6.4. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տարածքներում կենսաբանական պաշարների օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման առանձնահատկությունները

«Սևան» ազգային պարկի պահպանման գոտու տարածքների բնակչության գերակշռող մասը, տեղական ինքնակառավարման մարմինները, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, չեն մասնակցում կենսաբանական պաշարների օգտագործումից ստացվող շահույթի բաշխման գործընթացին: Սակայն այս ուղղությամբ առաջին քայլն արդեն կատարվել է, ՀՀ կառավարության 2006 թվ. հունիսի 29-ի թիվ 907-Ն որոշմամբ պարկի կանոնադրությունում ամրագրվել է, որ ազգային պարկի տնօրինմանը հանձնված՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների վարչական տարածքներում ընդգրկված հողամասերի վարձակալության պայմանագրերով նախատեսված վարձավճարների 30 %-ը համամասնորեն՝ մինչև յուրաքանչյուր բյուջետային տարվա ավարտը փոխանցվում են համայնքների բյուջեներ:

Բնօգտագործման ոլորտը կարգավորող իրավական դաշտում առկա թերությունները, մեխանիզմների, թույլտվությունների և սահմանափակումների ոչ օպտիմալ համակարգը, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օրինական օգտագործման, այդ թվում՝ լիցենզավորման համակարգի ազգաբնակչության համար ոչ դյուրին լինելը, նրանց համար ընդունելի ու հասկանալի ընթացակարգերի բացակայությունը ստեղծում են նպաստավոր պայմաններ կենսաբանական պաշարների ապօրինի օգտագործման համար, որի արդյունքում այդ պաշարների օգտագործումից ստացվող շահույթը դուրս է մնում հաշվառման և հարկման դաշտից: Ապօրինի

օգտագործման պայմաններում կենսապաշարների հիմնական մասը իրացվում է «ստվերային» կարգով՝ շուկայական գնից բավականին ցածր, որի արդյունքում կենսառեսուրսների օգտագործումից ստացվող շահույթների հիմնական մասի ձևավորվումը (գեներացիան), այդ ռեսուրսի իրական շուկայական գնին համարժեք չափով, իրականացվում է իրացման շղթայի վերջին փուլում, ազգային պարկի և պահպանական գոտուց բավականին հեռու: Գործող հարկային դաշտը և տնտեսական այլ մեխանիզմները, ինչպես վկայում է վերջին տարիների փորձը, չեն նպաստում կենսապաշարների ապօրինի օգտագործման ծավալների նվազմանը: Դա հատկապես վերաբերվում է հատապտուղների, սնկերի, ուտելի բույսերի և դեղաբույսերի օգտագործմանը, որն առավելագույն չափով կրում է «ստվերային» բնույթ և դրանց օգտագործումից ստացվող շահույթները շրջանցում են ՀՀ պետական և «Սևան» ազգային պարկի բյուջեները: Ապօրինի ձկնորսության արդյունքում «ստվերային» շահույթները կարելի է գնահատել մոտավորապես (1500 տ ձուկ x 100 դրամ x 1000) 150 .0 մլն. դրամ: Արդյունքում պետության կորուստները կարելի է գնահատել մոտավորապես (1500 տ ձուկ x 40 դրամ x 1000) 60 .0 մլն. դրամ:

Վարչարարության/վերահսկողության նույնիսկ ուժեղացումը՝ բնօգտագործման նոր, տեղական բնակչության առավել ընդգրկուն և ակտիվ մասնակցությունն ապահովող/մասնակցության վրա հենված տեսակների (ներառյալ դրանց ներդրումը խթանող տնտեսական մեխանիզմները) չկիրառման կամ չներդրման պարագայում, չի տալիս ցանկալի արդյունքներ, տարածաշրջանում չի ստեղծում աղքատության հաղթահարման իրատեսական հնարավորություններ: Բացի այդ, հողի և անշարժ գույքի գնահատման գործող համակարգերը և կադաստրային գները (արժեքները), դրանց հաշվարկման հիմքում դրվող գոտիականության գործակիցները հիմնականում հաշվի չեն առնում անտառային հողերի բնապահպանական և ռեկրեացիոն արժեքները, որի արդյունքում դրանց հաշվին ստեղծվող օգուտների հիմնական մասը դուրս է մնում հարկման դաշտից՝ չբաշխվելով, նույնիսկ այն տարածքում, որտեղ դրանք ստեղծվել և գեներացիայի են ենթարկվել: Կենսաբանական ռեսուրսների օգտագործումից ստացվող շահույթների հիմնական մասը, նույնիսկ բնապահպանական ծագում և նշանակություն ունեցող, համապատասխան կուտակող և նպատակային օգտագործումն ապահովող ֆինանսական մեխանիզմների բացակայության պայմաններում, տարբեր հարկերի և վճարների տեսքով դուրս են գալիս տարածաշրջանից և հետ չեն վերադառնում՝ զրկելով տարածաշրջանն առաջնահերթ և կարևոր նշանակության սոցիալ-տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրներ լուծելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներից:

Կատարված ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում կարելի է ամրագրել, որ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում կենսաբանական պաշարների օգտագործումից ստացվող շահույթի բաշխման առանձնահատկությունները բնորոշվում են հետևյալով՝

- կենսաբանական պաշարների օգտագործումից ստացվող շահույթի գերակշռող (խեցգետնի դեպքում՝ նույնիսկ առավելագույն) մասը վերջնական տեսքով և ծավալային առումով ձևավորվում ու բաշխվում է ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներից դուրս՝ հիմնականում Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանի վրա.
- հողի և անշարժ գույքի գնահատման գործող համակարգերը և կադաստրային գները (արժեքները), դրանց հաշվարկման հիմքում դրվող գոտիականության գործակիցները հիմնականում հաշվի չեն առնում Սևանա լճի առափնյա տարածքների և անտառային հողերի բնապահպանական և ռեկրեացիոն արժեքները, որի արդյունքում դրանց հաշվին ստեղծվող շահույթի հիմնական մասը դուրս է մնում հարկման դաշտից՝ չբաշխվելով, նույնիսկ մասնակիորեն, այն տարածքում, որտեղ դրանք ստեղծվել և գեներացիայի են ենթարկվել.
- կենսաբանական պաշարների օգտագործումից ստացվող շահույթի հիմնական մասը, նպատակային օգտագործումն ապահովող ֆինանսական մեխանիզմների

բացակայության պայմաններում, տարբեր հարկերի և վճարների տեսքով դուրս են գալիս Գեղարքունիքի մարզի սահմաններից՝ զրկելով տարածաշրջանն առաջնահերթ և կարևոր նշանակության սոցիալ-տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրներ լուծելու լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներից:

### 6.5. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բնական պաշարների պահպանումը և օգտագործման կարգավորումը

Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բնական պաշարների պահպանությունը և դրանց օգտագործման կարգավորման լուծումները հեռու են բավարար լինելուց: Դա հատկապես վերաբերվում է ձկնային և խեցգետնի պաշարների օգտագործման հսկողությանը, անտառների պահպանությանը, ազգային պարկի տարածքում արածեցման կանխարգելմանը, ռեկրեացիոն նշանակության տարածքների արդյունավետ օգտագործմանը: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների մեկնաբանությամբ բնական պաշարների օգտագործման նկատմամբ անբավարար հսկողությունը հիմնականում պայմանավորված է որակյալ մշտական աշխատողների անբավարար քանակով, և գիշերային հերթափոխի բացակայությամբ: Բացի այդ, տեսուչները չունեն տրանսպորտային միջոցներ, զենք: Լուրջ խոչընդոտող գործոններից է ցածր աշխատավարձը, ինչը նվազեցնում է աշխատանքի արդյունավետության նկատմամբ աշխատակիցների շահագրգռվածությունը, որի արդյունքում հաճախ խախտումներ հայտնաբերելիս չեն կիրառվում գործող օրենքներն ու պատժամիջոցները: Արդյունքում՝ որոշ համայնքների անդամների կողմից «Սևան» ազգային պարկի օրենսդրությամբ սահմանված ռեժիմի խախտումները մշտական բնույթ են կրում և անհրաժեշտություն կա, որպեսզի «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը համապատասխան գործողություններ իրականացնի: Այդ խախտումների բնույթը, կարևորության աստիճանը և խախտումներն իրականացնող համայնքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1**

| Խախտումների բնույթը | Կարևորության աստիճանը | Համայնքները |
|---|---|---|
| Ապօրինի ձկնորսություն | Բարձր | Նորատուս, Ծովագյուղ, Ծովակ, Արծվանիստ |
| | Միջին | Ծովինար, Կարճաղբյուր, Շորժա |
| Ապօրինի անտառահատում | Բարձր | Կարճաղբյուր, Ծովակ, Ծովագյուղ, Նորատուս |
| | Միջին | Փամբակ, Լճափ |
| Արածեցում և կենդանիների ջրում լճի առափնյա տարածքներում | Բարձր | Արեգունի, Ծակքար, Ծովազարդ, Չկալովկա, Շորժա, Նորատուս, Լճափ |
| | Միջին | Կարճաղբյուր, Հայրավանք |

### 6.6. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի մասնակցային կառավարման գործողություններ

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի մասնակցային կառավարման գործողությունները նախ և առաջ պայմանավորված են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունների իրականացմամբ, մասնավորապես՝ կառուցվածքային և կադրային բարեփոխումներով (Հավելված 1): Մասնակցային կառավարման գործողությունները պետք է ընդգրկեն նաև «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բնական էկոհամակարգերի բարելավմանն ուղղված, ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների կառավարման, ինչպես նաև տուրիզմի և ռեկրեացիայի կարգավորման և կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման ու իրականացման սույն կառավարման պլաններով նախատեսված գործողությունների իրականացումը (Հավելված 1):

# Բ Ա Ժ Ի Ն 7. «Սևան» ազգային պարկի բնական էկոհամակարգերի ներկա վիճակը և դրանց բարելավմանն ուղղված գործողությունների պլանը

## 7.1. ՋՐԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐ

### 7.1.1. Սևանա լճի էկոլոգիական վիճակը

Հայաստանի տնտեսության և էներգետիկայի զարգացման նպատակներով մեծաքանակ ջրբացթողումների, ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հետևանքով, Սևանա լճում տեղի ունեցան մեծամասշտաբ փոփոխություններ, որոնք հանգեցրին լճային էկոհամակարգի և դրա կենսաբազմազանության խորը վերակառուցմանը: Սևանա լճի մակարդակի մոտ 20,2 մ իջեցման հետևանքով մակերեսը կրճատվել է մոտ 13 %-ով և 1416 քառ. կմ-ից հասել 1238 քառ. կմ, իսկ ծավալը՝ 44,5 %-ով և 58.4 խոր. կմ-ից հասել 32.4 խոր. կմ: Ջրագրական փոփոխությունների պատճառով անհետացավ 900 քառ. կմ մակերես և 18 խոր. կմ ծավալ ունեցող, թթվածնի մեծ խտությամբ հատակային սառը ջրաշերտը - հիպոլիմնիոնը: Լճի միջին տարեկան ջերմաստիճանը բարձրացել է մոտ $2^{0}$C-ով, լուսաթափանցելիությունը նվազել է 5 անգամ (16.0-ից - 3.0 մ), թթվածնի կոնցենտրացիան փոքրացել է 8.0-ից մինչև 3.0 մգ 1 լիտրում, իսկ ջրի հատակային շերտերում հավասարվել է անալիտիկ 0-ի, ազոտի կոնցենտրացիան մեծացել է 30 անգամ (0.01-ից 0.32 գ/$մ^{3}$): Ազոտի քանակության մեծացման, ինչպես նաև բարձրակարգ ջրային բույսերի կենսազանգվածի 930.400 տ-ից մինչև 35.000 տ կրճատման (26.6 անգամ) հետևանքով, միաբջիջ ջրիմուռների կենսազանգվածը մեծացավ մոտ 20 անգամ՝ 0.3 գ/$մ^{3}$ - ից հասնելով մինչև 6 գ/$մ^{3}$: Լճի հատակային և միջին ջրաշերտերում, անաէրոբ պայմաններում, սկսել է առաջանալ ջրային օրգանիզմների համար թունավոր ամոնիակ և ծծմբաջրածին, որոնք նպաստում են լճի ճահճացմանը և արագացնում լճի ծերացումը հազարամյակներով: Սևանա լճում նշված փոփոխությունները պատճառ հանդիսացան ջրային մանրէների, միաբջիջ և բազմաբջիջ անողնաշարավոր կենդանիների, ձկների տարբեր տեսակների կամ դրանց համակեցությունների խորը փոխկապակցված որակական և քանակական փոփոխությունների: Սևանա լճի մակարդակի իջեցմանը զուգահեռ, ջրհավաք ավազանում տնտեսու-թյան տարբեր ճյուղերի ինտենսիվացման հետևանքով, զգալիորեն աճեց կենսածին տարրերով, ծանր մետաղներով և թունաքիմիկատներով հարուստ հոսքային ջրերի քանակը, որոնք թափվում են լիճ: Միջին հաշվով տարեկան լիճ է թափվել 7000 տ ազոտ, 400 տ ֆոսֆոր, մոտ 13 տ թունաքիմիկատներ և 135 տ ծանր մետաղներ: Ընդ որում՝ բնակչությունից և արդյունաբերությունից լիճ թափվող ազոտի քանակը կազմել է 7 %, անասնապահությունից 24 % և բուսաբուծությունից 40 %, այսինքն՝ ընդհանուր աղտոտվածության գերակշռող մասը գյուղատնտեսական ոլորտինն է, որը կազմում է 64%:

Ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սևանա լճում խորության մեծացման հետ ինտենսիվանում է օրգանական նյութի քայքայումը: Ծանր մետաղների քանակությունը լճում ՍԹԿ-ի սահմաններում է: Լճում նավթամթերքների պարունակությունը մակերևույթից և մինչև 10 մ խորության վրա գերազանցում է ՍԹԿ-ն: Սա հիմնականում կապված է մոտորանավակների ինտենսիվ օգտագործման հետ: Լիճ թափվող կենսածին տարրերի և թունավոր նյութերի այդպիսի մեծ քանակությունների պատճառը բնապահպանական նորմերի կոպիտ խախտումն է: Այս հարցում մեծ դեր ունի նաև ջրահավաք ավազանի հողերի զանգվածային էրոզիան, անտառային տարածքների կրճատումը, բնակավայրերի և լճի միջև գտնվող տարածքներում բազմաթիվ անօրինական ճանապարհային ցանցերը, հանգստավայրերի, ամառանոցների պարիսպների շինարարությունը և այլն:

Սևանա լիճ թափվող գետերի ջրերի գումարային տարեկան հոսքը, առանց Արփա-Սևան ջրատարի ջրերի, կազմում է 740.5 մլն. $մ^{3}$, իսկ վերջինիս հետ միասին՝ 990.1 (աղյուսակ 2): Ներկայումս Սևանա լճից ոռոգման և էներգետիկ նպատակներով Հրազդան ոռոգման ջրատարով բաց է թողնվում տարեկան 80-150 մլն $մ^{3}$ ջուր (միայն ոռոգման սեզոնին): Մինչ Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցումը գետերի ջրերի

գումարային հոսքի մեծությունը կազմել է լճի ջրածավալի 1.32 % (0.770 կմ$^3$ - գետերում, 58.5 կմ$^3$- լճում), իսկ մակարդակի իջեցումից հետո այն կազմում է 2.24 % (0. 741 կմ$^3$- գետերում, 33.1 կմ$^3$-լճում): Բնական հոսքի հարաբերական մեծությունը (լճի ջրերի ծավալի համեմատությամբ) աճել է 1.73 անգամ՝ շնորհիվ լճի ջրածավալի փոքրացման (58.5 կմ$^3$-ից իջել է 33.1 կմ$^3$), իսկ Արփա-Սևան ջրատարի ջրերի հոսքի հետ միասին այն կազմում է լճի ծավալի 3 տոկոսը:

Աղյուսակ 2. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 1933 թ. և 2005 թ. դրությամբ

| | | | |
|---|---|---|---|
| **1933թ.** | | | |
| Մուտք | մլն. մ$^3$ | Ելք | մլն. մ$^3$ |
| Ներհոսք գետերով | 770 | Գոլորշիացում | 1210 |
| Տեղումներ լճի մակերեսին | 550 | Մակերևութային հոսք | 50 |
| | | Ստորերկրյա հոսք | 60 |
| **Ընդամենը** | 1320 | **Ընդամենը** | 1320 |
| **2005թ.** | | | |
| Ներհոսք գետերով | 740.5 | Գոլորշիացում | 1370.9 |
| Ստորերկրյա ներհոսք | 94.2 | Ստորերկրյա արտահոսք | 14.4 |
| Տեղումներ լճի մակերեսին | 388.0 | Ջրթող | 190.0 |
| Հոսքի տեղափոխում Արփա գետից | 311.1 | Կուտակում (+), նվազում (-) | - 61.3 |
| **Ընդամենը** | 1533.8 | **Ընդամենը** | 1575.3 |
| Կուտակում (+), նվազում (-) | - 41.5 | | |

Հետազոտված ժամանակահատվածի ընթացքում ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների համաձայն՝ Սևանա լճի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 2 (մաքուր): Մոնիտորինգային տվյալների անբավարարության պատճառով դժվար է տարեկան և սեզոնային կտրվածքով եզրակացություններ կատարել: Անհրաժեշտ է Սևանա լճի, այն սնող գետային ամբողջ համակարգի, աղբյուրների, հանքային և ստորգետնյա ջրերի, ինչպես նաև Հրազդան գետի ռեժիմային էկոլոգիական մոնիտորինգի ծրագրի մշակումն ու իրականացումը: Այն հնարավորություն կտա տվյալների բանկի բազայի վրա կատարել կանխատեսումներ, որը էկոհամակարգերի արդյունավետ կառավարման հիմնական գործիքն է:

### 7.1.2. Գետերի էկոլոգիական վիճակը

Ստորև բերվում են Սևանա լիճ թափվող հիմնական գետերի ջրաֆիզիկական և ջրաքիմիական բնութագրերը, որոնք սահմանվել են 2005 թվ. իրականացված ուսումնասիրությունների արդյունքում:

1. <u>Գավառագետ</u> - Առավելագույն ջերմաստիճանը, 15$^o$C, գրանցվել է օգոստոսին: Ջրածնային ցուցիչի՝ pH-ի արժեքը տատանվում է 6.08-7.09 սահմաններում: Կախված մասնիկների առավելագույն արժեքը գրանցվել է հոկտեմբերին՝ 34.5 գ/մ$^3$: Լուծված թթվածնով հագեցվածությունը տատանվել է 71-95 % սահմաններում: Հանքային ազոտի պարունակությունը ամռան ամիսներին աճում է, օգոստոսին գրանցվել է 2.59 գ/մ$^3$, իսկ հանքային ֆոսֆորի պարունակությունը նվազում է՝ նույն ամսին գրանցվել է 0.086 գ/մ$^3$: Օրգանական նյութի պարունակությունը մեծանում է հոկտեմբեր ամսին՝ պերմանգանատային օքսիդացումը՝ՊՕ - 5.44 գՕ/մ$^3$, բիքրոմատային օքսիդացումը՝ ԲՕ - 14.6 գՕ/մ$^3$, թթվածնի կենսաքիմիական պահանջարկը՝ ԹԿՊ$_5$ - 2.24 գ$O_2$/մ$^3$ արժեքների մեծացմանը համապատասխան:
   Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա Գավառագետի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 3 (բավականին մաքուր):
2. <u>Մասրիկ -</u> Առավելագույն ջերմաստիճանը, 16$^o$C, գրանցվել է հուլիսին: Ջրածնային ցուցիչի՝ pH-ի արժեքը տատանվում է 7.35-8.01 սահմաններում: Կախված մասնիկների կտրուկ աճ նկատվում է ամռան և աշնան սկզբին, որը պայմանավորված է սեզոնային

վարարումներով: Լուծված թթվածնով գերհագեցած է՝ 105.48 % հունիսին: Հանքային ազոտի և ֆոսֆորի առավելագույն արժեքները, համապատասխանաբար՝ 1.42 գ/մ$^3$ և 0.13 գ/մ$^3$ գրանցվել են հուլիսին: Հունիս ամսին օրգանական նյութի պարունակությունը մնացած ամիսների համեմատությամբ մեծ է՝ ՊՕ - 11.2 գՕ/մ$^3$, ԲՕ – 28 գՕ/մ$^3$, ԹԿՊ$_5$ - 3.6 գ$O_2$/մ$^3$ հետագա ամիսներին այն աննշան է փոփոխվում:

Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա Մասրիկի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 3 (բավականին մաքուր):

3. Մակենիս - Առավելագույն ջերմաստիճանը, 14$^o$C, գրանցվել է հուլիսին: Ջրածնային ցուցիչի՝ pH-ի արժեքը տատանվում է 7.11-7.43 սահմաններում: Կախված մասնիկների առավելագույնը՝ 24 գ/մ$^3$ արժեքը գրանցվել է հունիսին: Լուծված թթվածնի պարունակությունը փոփոխվում է 8.6-9.4 գ/մ$^3$ սահմաններում: Հանքային ազոտի և ֆոսֆորի նվազագույն արժեքները, համապատասխանաբար՝ 0.45 գ/մ$^3$ և 0.04 գ/մ$^3$ գրանցվել են հունիսին: Հունիսին օրգանական նյութի պարունակությունը մյուս ամիսների համեմատությամբ ավելի մեծ է՝ ՊՕ - 4.64 գՕ/մ$^3$, ԲՕ –12 գՕ/մ$^3$, ԹԿՊ$_5$ -1.45 գ$O_2$/մ$^3$ հետագա ամիսներին այն աննշան է փոփոխվում:

Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա Մակենիսի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 2 (մաքուր):

4. Վարդենիկ - Առավելագույն ջերմաստիճանը, 22$^o$C, գրանցվել է օգոստոսին: Ջրածնային ցուցիչի՝ pH-ի արժեքը տատանվում է 6.84-7.94 սահմաններում: Կախված մասնիկների պարունակությունը տատանվում է 3.6-19.0 գ/մ$^3$ տիրույթում: Լուծված թթվածնով գերհագեցում՝ 106.21% գրանցվել է հունիսին: Հուլիսից նկատվում է հանքային ազոտի և ֆոսֆորի պարունակության աճ, որը պահպանվում է մինչև հոկտեմբեր: Օրգանական նյութի պարունակությունը մեծ է հունիս (ՊՕ - 4.8 գՕ/մ$^3$, ԲՕ - 12.95 գՕ/մ$^3$, ԹԿՊ$_5$ -1.5 գ$O_2$/մ$^3$) և հոկտեմբեր (ՊՕ- 4.76 գՕ/մ$^3$, ԲՕ-12.78 գՕ/մ$^3$, ԹԿՊ$_5$-2.0 գ$O_2$/մ$^3$) ամիսներին:

Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա Վարդենիկի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 3 (բավականին մաքուր):

5. Արգիչի - Առավելագույն ջերմաստիճանը, 20$^o$C, գրանցվել է օգոստոսին: Ջրածնային ցուցիչի՝ pH-ի արժեքը տատանվում է 6.38-7.1 սահմաններում: Կախված մասնիկների առավելագույն պարունակությունը, 41.2 գ/մ$^3$, գրանցվել է օգոստոսին: Լուծված թթվածնով գերհագեցում, 103-104 %, գրանցվել է հունիս-հուլիս ամիսներին: Հուլիս-օգոստոս ամսիներին նկատվում է հանքային ազոտի և ֆոսֆորի պարունակության աճ: Օրգանական նյութի պարունակությունը հետազոտված ժամանակահատվածում գրեթե անփոփոխ է՝ ՊՕ-3.04-4.96 գՕ/մ$^3$, ԲՕ-8.76-12.0 գՕ/մ$^3$, ԹԿՊ$_5$-1.28-1.75 գ$O_2$/մ$^3$:

Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա Արգիչիի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 2 (մաքուր):

6. Լիճք - Առավելագույն ջերմաստիճանը, 11$^o$C, գրանցվել է հուլիսին: Ջրածնային ցուցիչի՝ pH-ի արժեքը տատանվում է 6.42-6.65 սահմաններում: Կախված մասնիկների առավելագույն պարունակությունը, 6.8 գ/մ$^3$ , գրանցվել է օգոստոս-սեպտեմբեր ամսիներին: Ուսումնասիրության բոլոր ամիսներին լուծված թթվածնի պարունակությունը գրեթե անփոփոխ է՝ 9.87-10.17 գ/մ$^3$ սահմաններում: Հանքային ազոտի պարունակությունը տատանվում է 2.11-0.13 գ/մ$^3$ , իսկ հանքային ֆոսֆորը՝ 0.15-0.06գ/մ$^3$ տիրույթներում: Օրգանական նյութի պարունակությունը հետազոտված ժամանակահատվածում գրեթե անփոփոխ է ՝ ՊՕ1.92-2.08 գՕ/մ$^3$, ԲՕ-5.0-6.4 գՕ/մ$^3$, ԹԿՊ$_5$-0.6-1.0 գ$O_2$/մ$^3$):

Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա Լիճքի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 2 (մաքուր):

Այսպիսով՝ Սևանա լիճ թափվող գետերի հանքայնացումը տատանվում է 52.5 (Վարդենիկ) -208.21(Լիճք) գ/մ$^3$ տիրույթում: Առավել հանքայնացված է Լիճք գետը, որը սնվում է աղբյուրներից: Լուծված թթվածնի պարունակությունը 7.8 (Գավառագետ)-11.97 (Վարդենիկ) գ/մ$^3$ սահմաններում է փոփոխվում: Հանքային ազոտի համեմատաբար բարձր պարունակություն գրանցված է Գավառագետում՝ 2.46 գ/մ$^3$, իսկ հանքային ֆոսֆոր՝ Լիճք և Արգիչի գետերում: Օրգանական նյութի առկայությունը, ըստ ՊՕ-ի արժեքի, բարձր է Գավառագետում (5.44 գO/մ$^3$) և Արգիչի գետում (4.96 գO/մ$^3$): Թթվածնի կենսաքիմիական պահանջարկի արժեքը ուսումնասիրված գետերում տատանվում է 0.6-3.6 գ$O_2$/մ սահմաններում: Գետերի ջրերում ծանր մետաղների քանակությունները ՍԹԿ-ի սահմաններում են: Նավթամթերքներ չեն հայտնաբերված միայն Լիճք գետում: Մնացած գետերում նավթամթերքները գերազանցում են ՍԹԿ-ի արժեքը (ՍԹԿ-ն՝ 0.05 գ/մ$^3$)՝ հատկապես Վարդենիկ գետի ջրերում՝ 4.4 գ/մ$^3$: Սա հետևանք է ավտոմայրուղու ինտենսիվ շահագործման և բազմաթիվ բենզալցակայանների առկայության: Սևանա լիճ թափվող գետերի միջոցով 2002–2005 թթ. տարեկան լիճ է թափվել 3088.5 տոննա ընդհանուր ազոտ և 183.5 տոննա ընդհանուր ֆոսֆոր, որոնց հանքային ձևերի քանակությունը կազմել է 1852.8 և 119.2 տոննա համապատասխանաբար: Կենսածինների հաշվարկված քանակները կարևոր են լճի ջրհավաք ավազանում պլանավորելու և կառավարելու տնտեսական գործունեությունը:

Սևանա լճի ջրհավաք ավազանում տնտեսության ինտենսիվացման և ռեկրեացիոն ծանրաբեռնվածության մեծացման պայմաններում լճի բնական ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման խնդիրների լուծումն անհնար է առանց «ջրհավաք ավազան ⇔ լիճ» համակարգում հիդրոբիոնտների քանակական և կառուցվածքաֆունկցիոնալ փոխհարաբերությունների, ինչպես նաև էվտրոֆացնող և թունավոր նյութերի հաշվեկշռի հաշվառման: Լճային էկոհամակարգի վերականգնումը ղեկավարող միակ ռադիկալ ազդեցությունը՝ լճի մակարդակի արհեստական բարձրացումն է Բալթիկ ծովի մակերևույթից մինչև 1903.5 մ բարձրության վրա, քանի որ այն մեխանիզմները, որոնք լճի մակարդակի իջեցման պրոցեսում գործում էին դրական, մակարդակի բարձրացման ժամանակ կգործեն բացասական ուղղությամբ: 2005 թ. լճի մակարդակի բարձրացումը չի կարող ունենալ էական հիդրոէկոլոգիական նշանակություն լճի համար, այդ պատճառով տալ էկոհամակարգի զարգացման որոշակի կանխատեսումներ անհնար է: Դա պահանջում է տասնամյակների կանոնավոր հետազոտություններ:

### 7.1.3. «Սևան» ազգային պարկի ջրային էկոհամակարգերի բարելավման գործողություններ

«Սևան» ազգային պարկի ջրային էկոհամակարգերի կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ, ինչպես նաև Բաժին 5-ի 5.1. կետում ներկայացված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունների կատարմամբ:

Սևանա լճի և դրա ավազանի ջրային էկոհամակարգերի կառավարման արդյունավետությանը զգալիորեն կնպաստի նաև տոքսիկ, աղտոտող և էվտրոֆացնող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (ՍԹԽ), նորմաների, ԱԹՆ) և սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) չափերի որոշված լինելը, ջրային պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման կանոնների ու մեթոդական ցուցումների առկայությունը (Հավելված 1): Ընդ որում՝ նշված նորմատիվային ակտերի մշակումը և սահմանված կարգով դրանց հաստատումը ունի ոչ միայն Սևանա լճի ջրային էկոհամակարգերի պահպանության համար նշանակություն, այլև ողջ հանրապետության: Կարևոր նշանակություն ունեն նաև գետերի, լճերի և ջրամբարների ափերի երկարությամբ սանիտարաջրապահպան գոտիների ստեղծումը, քաղաքների տեղական կոյուղացումը և

քաղաքների ելքերում ժամանակակից մաքրման համալիրների տեղադրումը, ինչպես նաև խախտված և էրոզացված հողերի ռեկուլտիվացիան:

## 7.2. ՋՐԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

### 7.2.1. Ձկներ

Մինչև լճի մակարդակի իջեցումը ձկան տարեկան որսը գրեթե հավասարապես կազմված էր իշխանից և կողակից (համապատասխանաբար՝ 50 % և 40 %): Այս շրջանում սիգի բաժինը տարեկան որսաբաժնում կազմում էր 0.29 %: Լճի մակարդակի իջեցման սկզբնական շրջանում (1939-1962 թթ.), ի հաշիվ Հրազդան գետի հոսքի արհեստական մեծացման, փոխվեցին Սևանա լճի ձևաչափական և հիդրոդինամիկ ցուցանիշները, ջերմաստիճանային ռեժիմը:

1940-ականների սկզբից սկսեց նվազել իշխանի թվաքանակը, իսկ 1960-ականների կեսերին, լճային ձվադրավայրերի չորացման հետևանքով, կտրուկ վատացան դրանց վերարտադրման պայմանները: Այս շրջանում համապատասխան վերարտադրման պայմաններ են ստեղծվում սիգի համար և 1960 թ.-ից սկսած դրա պաշարները աճում են՝ 1965 թ.-ին կազմելով ձկան տարեկան որսի 40 %-ը: Իշխանի բաժինը կրճատվում է մինչև 27.5 %, կողակինը՝ 32 %: Քանի որ Սևանի կողակը ձվադրում է ինչպես լճում, այնպես էլ դրա մեջ թափվող գետերում, լճային ձվադրավայրերի կրճատման արդյունքում խախտվում են նաև կողակի բազմացման պայմանները, որի արդյունքում կրճատվում են պաշարները:

Լճի տրոֆայնության աճի շրջանում իշխանի պաշարները շարունակում են նվազել, որի արդյունքում նախ 1976 թ.-ից արգելվում է դրա արդյունահանումը, իսկ 1978 թ. այն ընդգրկվում է ՍՍՀՄ Կարմիր գրքի մեջ, իսկ 1987 թվ. Սևանի բեղլուի հետ միասին գրանցվում են նաև Հայաստանի Կարմիր գրքում: Սիգի քանակը այս ընթացքում շարունակում է աճել և 1970-ական թվականներին դրա արդյունագործական կենսազանգվածը հասնում է 12000-13000 տ: 1980-ական թվականների վերջին և 1990-ականների սկզբին սիգի պաշարները հասան առավելագույն քանակի՝ կազմելով 16000-18000 տ:

1980-ական թվականների սկզբից լճում սկսեց արագորեն աճել ծածանի քանակը:

Այսպիսվ, ներկայումս լճում արդյունահանվում են սիգը և ծածանը: Ընդ որում՝ սիգը կազմում է ընդհանուր որսի 80 %-ից ավելին: Իշխանի 4 ենթատեսակներից լճում մնացել են գետում ձվադրող ձևերը՝ գեղարքունին և ամառային բախտակը: Ամառային բախտակի պոպուլյացիան ներկայումս գտնվում է անհետացման եզրին: Ստորև բերվում են ձկնատեսակների էկոլոգիական բնութագրերը և տնտեսական նշանակությունը:

1. <u>Սևանի իշխան.</u> Այս էնդեմիկ, անհետացող տեսակի կանոնավոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պոպուլյացիան գտնվում է ծայրահեղ վատ վիճակում: 4 ենթատեսակներից լճում մնացել են երկուսը, որոնք նույնպես գտնվում են անհետացման եզրին: Իշխանի անհետացման հիմնական պատճառներն են՝ լճային ձվադրավայրերի չորացումը, ձվադրավայր հանդիսացող գետերի աղտոտումը և ձկնագողությունը: Վերջին տարիներին այս տեսակի արհեստական վերարտադրության վերաբերյալ ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ներկայումս լճում մնացել է միայն Գեղարքունի ենթատեսակը, որի բնական վերարտադրությունը լճում նույնպես տեղի չի ունենում: Այդ նպատակով Բնապահպանության նախարարության «Հայաստանում ձկան էնդեմիկ տեսակների պաշարների համալրում» ծրագրով 2005 թ. մասնավոր տնտեսությունից պայմանագրային հիմունքներով գնվել և Սևանա լիճ է բաց թողնվել ամառային բախտակի 40 հազար (780 կգ) կենսունակ, 19,5 գրամ միջին քաշ ունեցող ձկնիկներ: Այս ծրագիրը շարունակվում է նաև 2006 թ.՝ պետական պատվերի շրջանակներում:
2. <u>Սևանի կողակ և Սևանի բեղլու.</u> Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ շարունակվում է կրճատվել այս տեսակների պոպուլյացիաների թվաքանակը: Ընդ որում՝ կողակի պաշարների նվազումը լճային ձվադրավայրերի չորացման և

ձվադրման շրջանում արդյունահանման հետևանք է: 2005 թ. իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ կողակի աճի տեմպերը, 1980-ական թվականների համեմատ, արագացել են, տեղի է ունեցել նաև կողակի պոպուլյացիայի երիտասարդացում և միջին չափերի փոքրացում՝ 30.0-ից 22,9 սմ, ինչը ինտենսիվ որսի արդյունք է: Ընդ որում՝ առավել ինտենսիվ է ընթանում փոքր տարիքային խմբերի աճը, որը առատ կերային բազայի առկայության ապացույց է:

3. Սիգ. Սիգի պոպուլյացիայի միջին տարիքը 3.1-ից (1991թ.) նվազել է մինչև 1.1՝ 2004 թ. և 1.6՝ 2005 թ.: Ընդ որում՝ 1990-ական թվականներին որսաբաժնում մողալ տարիքային խմբերը 2-3 տարեկան ձկներն էին, իսկ 1999 թ.-ին՝ 1+ և 2+ տարիքային խմբերը: 2004-2005 թթ. սնվող վտառի գերակշռող մասը կազմել են 1+ ձկները (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սիգի սնվող վտառի տարիքային կառուցվածքը (%) ըստ տարիների

| ՏԱՐԻՆԵՐ | 1+ | 2+ | 3+ | 4+ | 5+ | 6+ | ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1991 | 2.5 | 15.4 | 49.7 | 32.4 | - | - | 3.1 |
| 1998 | 9.1 | 70.1 | 20.6 | 0.2 | - | - | 2.1 |
| 1999 | 41.7 | 40.4 | 16.8 | 1.1 | - | - | 1.8 |
| 2004 | 93.5 | 4.9 | 0.7 | 0.4 | 0.3 | 0.2 | 1.1 |
| 2005 | 65.0 | 20.2 | 10.4 | 3.3 | 0.9 | 0.2 | 1.6 |

Պոպուլյացիայի առանձնյակների մանրացումը պայմանավորված է նաև օգտագործվող որսամիջոցներով, որոնցով կատարվում է սելեկցիոն որս: Նախկինում հիմնականում օգտագործվել են համեմատաբար խոշոր խորշ ունեցող (45 մմ և ավելի) ցանցեր, ներկայումս առավելապես օգտագործվում են մանր խորշերով ցանցեր (40 մմ և ցածր), որի արդյունքում որսաբաժնում աճում է ոչ արդյունագործական ձկների բաժինը՝ միաժամանակ քչացնելով պոպուլյացիայի համալրման քանակները: Լճում ձկնային պաշարների նվազման պատճառով մեկ որսամիջոցի (քսակավոր և ձգովի ուռկան) արդյունագործական հզորությունը ընկել է 6-7 անգամ: Այս պարագայում 1+ տարեկան ձկների հետագա չվերահսկվող արդյունահանումը կհանգեցնի ընդհանուր ձկնային պաշարների վերջնական խզման, որի վերականգնման համար կպահանջվեն երկար տարիներ: Ակնհայտ է սիգի պոպուլյացիայի կտրուկ նոսրացումը: 1980-ական թվականների համեմատ՝ լճի ձկնարդյունավետությունը 2005 թ. կրճատվել է 17 անգամ: Դա իր բացասական ազդեցությունն է թողնում լճի լիմնոհամակարգի սննդային շղթաների հավասարակշռության վրա, ինչն էլ իր հերթին հանգեցնում է լճում լրացուցիչ օրգանական նյութի կուտակմանը, որով ավելի է խորացվում էվտրոֆացման պրոցեսը:

Սիգը ձվադրում է Սևանա լճի ափամերձ գոտու ամբողջ երկայնքով, հիմնականում 0.5-11 մ խորությունների վրա, գրեթե բոլոր գրունտներում՝ բացառությամբ տիղմի և մակրոֆիտների: Առանձին վայրերում սիգը կարող է ձվադրել մինչև 32 մ խորություններում: Ձվադրավայրերի ընդհանուր մակերեսը կազմում է լճի մակերեսի մոտ 16 %-ը: Վերջինս վկայում է սիգի բնական վերարտադրության մեծ հնարավորությունների առկայության մասին: Ձվադրումը կատարվում է նոյեմբերի վերջից մինչև հունվարի կեսերը: 2005 թ. սիգի միջին բեղունությունը կազմել է 14500 ձկնկիթ, որը մոտ 25-30 %-ով ցածր է 1980-ական թվականների սկզբի նույն ցուցանիշներից: Վերջինս պայմանավորված է սիգի պոպուլյացիայի չափատարիքային կազմի փոփոխություններով:

Սիգի պոպուլյացիայի բոլոր այս նեգատիվ փոփոխությունները պաշարների անխնա շահագործման հետևանք են: Չնայած, յուրաքանչյուր տարի որոշվել են սիգի որսաչափերը, այնուամենայնիվ արդյունագործական ծանրաբեռնվածությունը պոպուլյացիայի վրա մի քանի անգամ գերազանցել է թույլատրելի որսի սահմանները:

4. Լճածածան. Արծաթափայլ լճածածանը (Crucian carp) լիճ է ներթափանցել 1980-ական թվականների սկզբին: Սևանա լճում աճում է լճածածանի մեկ պոպուլյացիա, որն այստեղ առաջացնում է բազմաթիվ սնվող և բազմացող վտառներ: Արդեն 1990 թվին Արծաթափայլ լճածածանի արդյունագործական որսաչափը կազմել է մոտ 200 տ: Այն զանգվածաբար հանդիպում է Սևանա լճի ամբողջ ափամերձ հատվածում, հասուն զոնաղներով մտնում է Լիճք, Ծակքար, Մասրիկ, Արգիչի և այլ գետեր: Ձվադրում է նաև լճում: Պոպուլյացիայի հիմնական մասը բազմանում է 4-րդ տարում: Ձվադրությունը սկսվում է մայիսի վերջին և շարունակվում մինչև օգոստոս: Պոպուլյացիան ներկայացված է հիմնականում էգերից, արուները կազմում են մոտ 1 %: Լճածածանի բացարձակ պտղաբերությունը տատանվում է 14.8-168.9 հազար ձկնկիթ՝ միջին հաշվով կազմելով 74.5 հազար ձկնկիթ:

Լճածածանը, իր սննդառության բնույթով պոլիֆագ է (ամենակեր), կարող է խորացնել սաղմոնազգի և ծածանազգի ձկնատեսակների կերային բազայի այն բացասական հետևանքները, որոնք նկատվել են դեռևս 1980-ականների կեսերին: Լճածածանը սննդառության առումով համարվում է մրցակից տեղի ձկնատեսակների համար: 2005 թ. ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ լճածածանը աստիճանաբար տարածվում է ոչ միայն ափամերձ գոտիներում, այլև լճի խորքերում՝ սնվելով սիգի հիմնական կեր հանդիսացող զոոպլանկտոնով:

Սևանա լճում լճածածանի սննդառության և վերարտադրման առանձնահատկությունների ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ, Սևանի սակավատեսակ իխտիոֆաունայի պայմաններում, այս նոր տեսակը ընդունակ է ավելացնել իր թվաքանակը, ինչը հաստատվում է 2000-2005 թ. որսաչափի մեծացմամբ: Կարելի է ենթադրել, որ անսահմանափակ որսի արդյունքում, լճի մակարդակի բարձրացման և օլիգոտրոֆացման պայմաններում լճածածանի տարածումը կսահմանափակվի, քանի որ վերջինս նախընտրում է օրգանական նյութով հարուստ ջրերը: Սևանա լճում լճածածանի թվաքանակի մեծացումը կարող է բացասաբար ազդել Սևանի էնդեմիկ ձկնատեսակների վրա:

### 7.2.2. Սևանա լճի մակարդակի բարձրացման պայմաններում լճի հնարավոր ձկնարդյունաբերության գնահատում

Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ Սևանա լճի մակարդակի բարձրացումը ձկնարդյունաբերության վրա կունենա հետևյալ ազդեցությունը:

1. Սևանի իշխանի լճում բազմացող ձևերի ոչնչացման պատճառով դրանց արդյունագործական պաշարների վերականգնումը անհնարին է: Գեղարքունի և Ամառային բախտակ ենթատեսակների պահպանումը հնարավոր է ձկնաբուծարաններում արհեստական վերարտադրության աշխատանքների իրականացմամբ և ձկնագողության կանխարգելմամբ:
2. Սևանի կողակի արդյունագործական պաշարները կարող են վերականգնվել, քանի որ պոպուլյացիայի 2/3-ը ձվադրում է լճային ձվադրավայրերում, որոնք այսօր ջրի մակարդակի իջեցման պատճառով հայտնվել են ցամաքում:
3. Սիգի վերարտադրմանը խոչընդոտում են ինչպես աբիոտիկ գործոնների փոփոխությունները, ինչպիսիք են՝ լճի հիպոլիմնիոնում անաէրոբ պայմանների զարգացումը, այնտեղ ծծբաջրածնի և մեթանի առկայությունը, որոնք զգալիորեն կրճատել են բնակեցման և վերարտադրման գոտին, այնպես էլ ձկնագողությունը: Ունենալով սիգի արդյունագործական պաշարների բազմամյա դինամիկան (հաշվի առնելով նաև ձկնագողությունը) և լճի ջրի մակարդակի համապատասխան ցուցանիշները, մենք կարող ենք ենթադրել, որ լճի մակարդակի բարձրացման դեպքում կստեղծվեն ձկների համար վերարտադրության և սննդառության համարժեք պայմաններ:

Հարկ է նշել, որ միջին հաշվով տարեկան 20 սմ լճի մակարդակի բարձրացման դեպքում ձկնարդունավետության զգալի փոփոխություններ չպետք է սպասել, քանի որ, նախ՝ ձկների պոպուլյացիան օժտված է միջավայրի պայմանների փոփոխությանը

արձագանքելու որոշակի իներտությամբ, երկրորդ՝ լճի մակարդակի 1 մ բարձրացման դեպքում լճային ձվադրավայրերի ընդլայնում կամ կենսապայմանների զգալի փոփոխություն չի լինի: Այդ պատճառով սիգի և կողակի արդյունահանման կանխագուշակումը տրվում է 2010թ.-ից՝ 5 տարվա ընդմիջումներով: Ենթադրվում է, որ այդ 5 տարիների ընթացքում նկատելի կլինեն ձկան արդյունագործական պաշարների աստիճանական համաչափ փոփոխություններ: Այսպիսով, եղած տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին 15 տարիների ընթացքում հնարավոր է Սևանա լճի ձկնարդյունավետության աճ՝ հիմնականում սիգի և կողակի կենսազանգվածի հաշվին: Այդ ընթացքում ծածանի պոպուլյացիայի թվաքանակը զգալի փոփոխություններ չի կրի:

Լճի մակարդակի հետագա բարձրացման պայմաններում, որը կհանգեցնի լճի տրոֆայնության նվազեցմանը, հնարավոր է ձկնարդյունավետության անկում՝ կապված սիգի հիմնական կերի, զոոպլանկտոնի, քանակի կրճատման հետ: Կողակի համար սահմանափակող գործոն կհանդիսանա միայն որսը և դրա քանակը, արդյունահանման արդյունավետ կառավարման պայմաններում, կմնա շատ թե քիչ կայուն:

### 7.2.3. Խեցգետին

Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարների որոշումը կատարվել է 2004 թ.-ից: Թույլատրելի որսաչափը 2004 թ. կազմել է 450-500 տ, 2005թ.՝ 520-550 տ: Թույլատրելի որսաչափը, համաձայն գոյություն ունեցող մեթոդների, կազմում է լճում ապրող արդյունագործական չափի խեցգետնի 25 %-ը: Որսը կատարվում է հիմնականում խեցգետնի թակարդներով, որոնց որսունակությունը 2005 թ.կազմել է 4-5 կենդանի: 2005թ. Սևանա լճի խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտու-թյունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին չափերը Փոքր Սևանում տատանվում են 9.6-12.2 սմ-ի, Մեծ Սևանում՝ 10.3-12.4 սմ-ի սահմաններում: Էգերը Փոքր Սևանում 9-11.7 սմ են, Մեծ Սևանում՝ 9.2-12.4 սմ: Արուների առավելագույն երկարությունը գրանցվել է Փոքր Սևանի Հայրիվանի տարածքում՝ 18 սմ, Մեծ Սևանի Վարդենիկի տարածքում՝ 18.2 սմ, իսկ էգերինը՝ Մեծ Սևանի Արդանիշի տարածքում 15.5 սմ: Հետազոտությունները ցույց են տվել, որ կենդանիները համեմատաբար խոշոր են արգելոցային գոտիների մերձակայքում, լճախորշերում, լճի մակրոֆիտներով հարուստ մասերում: 2004 թ. համեմատ՝ 2005 թ. խեցգետնի պոպուլյացիայի չափատարիքային շարքերը կրճատվել են, որը հետևանք է արդյունագործական ծանրաբեռնվածության:

Խեցգետնի չափատարիքային միջին ցուցանիշները համեմատաբար մեծ են Փոքր Սևանում, քանի որ կենդանիները հնարավորություն ունեն մեծ խորություններում միգրացիա կատարել, որտեղ որսամիջոցներ գրեթե չեն օգտագործվում:

Խեցգետնի պոպուլյացիայի սեռական կառուցվածքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Մեծ Սևանում ընդհանուր առմամբ պահպանվել է արուների և էգերի 1:1 հարաբերակցությունը, մինչդեռ Փոքր Սևանում արուների մասնաբաժինը զարնանը համեմատաբար մեծացել է:

Խեցգետնի առավելագույն քանակները հանդիպում են 8-18 մ խորություններում: Կենդանիների թվաքանակը խիստ կրճատվում է 22 մ-ից սկսած, որը հավանաբար պայմանավորված է գրունտի փոփոխությամբ: Մեծ խորություններում գերակշռում է փափուկ տիղմը, որը խեցգետնի համար նախընտրելի բիոտոպ չի հանդիսանում:

Խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճում կենդանու բազմացման պրոցեսը սկսվում է ապրիլից: Վերարտադրման ժամանակաշրջանի համար առավել որոշիչ գործոններն են ջրի ջերմաստիճանի բարձրացումը և հատակում թթվածնային պայմանների լավացումը:

2004 թ. խեցգետնի միջին ֆիզիոլոգիական պտղաբերությունը կազմել է 174 ձկնկիթ, 2005 թ. պտղաբերության միջին ցուցանիշը Մեծ Սևանում կազմել է 350, իսկ Փոքր Սևանում՝ 160 ձկնկիթ: Այսինքն՝ 2005 թ. պտղաբերության միջին ցուցանիշը գերազանցում է 2004 թ. ցուցանիշին, ինչը վկայում է կենդանու կենսապայմանների լավացման մասին: Հնարավոր պատճառ կարող է լինել լճի ջրի մակարդակի բարձրացումը, որի արդյունքում մեծանում են խեցգետնի նախընտրած բիոտոպերի սահմանները:

Այսպիսով, ստացված տվյալների համաձայն Սևանա լճում խեցգետնի աճի և զարգացման պայմանները բարենպաստ են: Խեցգետնի բազմացման և աճի նման տեմպերի դեպքում, բնական պաշարների արդյունավետ կառավարման պայմաններում, լիճը կարող է դառնալ բարձ կենսարդյունավետության ջրամբար: Որսաչափի մեծությունը փոփոխական է և կախված է լճում առկա խեցգետնի պաշարներից: Թույլատրելի որսաչափը, համաձայն գոյություն ունեցող մեթոդների, պետք է կազմի լճում ապրող արդյունագործական չափի խեցգետնի 25 %-ը: Սևանա լճում խեցգետնի պաշարների արդյունավետ կառավարման նպատակով ցանկալի է վերարտադրման և զանգվածային մաշկափոխանակության շրջանում (մայիս-հունիս ամիսների) լճում հայտարարել որսի արգելք:

Խեցգետինը, որպես դետրիտոֆագ, կարևոր նշանակություն ունի Սևանա լճի համար ոչ միայն որպես կենսառեսուրս, այլև որպես լճի սանիտար, հետևաբար պոպուլյացիայի հետազոտությունները պետք է կատարվեն յուրաքանչյուր տարի՝ պետական պատվերի շրջանակներում: Խեցգետնի որսի սահմանափակում սեզոնային արգելքի առումով չկա: Սակայն գոյություն ունի որսի սահմանափակում քանակային առումով, այսինքն գոյություն ունի որսի թույլատրելի չափ, որը չպետք է գերազանցվի: Խեցգետնի որսը պետք է կառավարվի միայն պաշարների գիտական գնահատման հիման վրա: Ջրային էկոհամակարգերի բնական ռեսուրսների վրա ճնշումը փոքրացնելու համար ՀՀ Բնապահպանության նախարարությունը պետք է աջակցի խեցգետնային տնտեսությունների զարգացմանը՝ գործարարների համար կազմակերպելով գիտական խորհրդատվություն: Ցանկալի է նաև ունենալ խեցգետնաբուծական ձեռնարկներ ազգային լեզվով:

### 7.2.4. «Սևան» ազգային պարկի ջրային կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ

«Սևան» ազգային պարկի ջրային կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ: Ինչ վերաբերվում է արդյունագործական նշանակություն ունեցող ձկնատեսակների և խեցգետնի պաշարների ամենամյա հաշվառումներին, ապա այս աշխատանքները «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրական գործառույթներից են և ավանդաբար իրականացվում են սահմանված կարգով: Առավել ուշադրության է արժանի արժեքավոր և Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների վերարտադրության աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, որի կապակցությամբ ՀՀ կառավարության 2006 թվ. սեպտեմբերի 14-ի թիվ 10 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված «Սևանի էնդեմիկ ձկնատեսակների (իշխան, կողակ, բեղլու) պոպուլյացիաների վերականգնման նպատակով արհեստական վերարտադրության նոր կենսատեխնոլոգիաների ներդրման հայեցակարգը»:

## 7.3. ՑԱՄԱՔԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐ

### 7.3.1. Բուսական աշխարհի հաշվառումը, վիճակը և գործողությունների պլանը

<u>7.3.1.1.Նոր տեսակներ և պոպուլյացիաներ «Սևան» ազգային պարկի տարածքից.</u>

2005 թ. դաշտային հետազոտությունների ընթացքում Սևանա լճի ափամերձ ավազուտներում, Ծովազարդ գյուղի շրջակայքից, հայտնաբերվել է Հայաստանի համար հազվագյուտ տեսակ հիմենոլոբուս փռված (Hymenolobus procumbens), որը հայտնի էր միայն Արարատյան դաշտից: Պոպուլյացիայի վիճակը բավարար է, տեսակն ակնհայտորեն ինտենսիվ տարածվում է մերձափնյա գոտում:

Արտանիշ թերակղզու լեռնատափաստանային գոտուց հայտնաբերվել է հազվագյուտ տեսակ բարակոտնուկ քրդական (Koeleria kurdica), որի պոպուլյացիայի

վիճակը նույնպես բավարար է: Բացի այդ, ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հայտնաբերվել են մի շարք նոր և չգրանցված բուսատեսակների պոպուլյացիաներ (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Նոր պոպուլացիաներ

| Ցեղ, տեսակ | Ազգային պարկ | Պահպանա կան գոտի | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| Կատվալեզու խոնարհված (Bidens cernua) | x | | Հազվագյուտ տեսակ է: Հայտնաբերվել է մեկ նոր պոպուլյացիա Մարտունու մոտակայքում, Սևանի ափամերձ ճահճատներում: Լավ վիճակում է: |
| Խոզանափուշ Ֆյոդորովի (Cousinia fedorovii) | x | | Սևանի ավազանի էնդեմիկ է: Հայտնաբերվել է Արեգունու տափաստանային գոտուց, մոտ 50 բույս: Պոպուլյացիայի վիճակը լավ է: |
| Ջրասոճի սովորական (Hippuris vulgaris) | x | | Հազվագյուտ տեսակ է: Պոպուլյացիան հայտնաբերվել է Լիճք գ. մոտ՝ ճահճակալվող ձկնաբուծական նախկին ջրավազանների տեղում: |
| Ջրապզուկ սովորական (Utricularia vulgaris) | x | | Հազվագյուտ տեսակ է: Պոպուլյացիան հայտնաբերվել է Լիճք գ. մոտ՝ ճահճակալվող ձկնաբուծական նախկին ջրավազանների տեղում: |
| Զանգակ հայկական (Campanula armena) | | x | Հայաստանի էնդեմիկ է: Նոր, ոչ մեծ (մոտ 20 բույս) պոպուլյացիան հայտնաբերվել է Փամբակ գ. մոտակայքում՝ ժայռերի վրա: |
| Ալատնի (Elatine alsinastrum) | | x | Հազվագյուտ տեսակ է: Հունիսին հայտնաբերվեցին բույսի 2-3 նմուշներ Դիլիջան-Ճամբարակ խաչմերուկի մոտ ճահճացած հատվածում: Անհրաժեշտ են նոր հետազոտություններ: |
| Մորալերդուկ ճահճային (Parnassia palustris) | x | | Հազվագյուտ տեսակ է: Հայտնաբերվել է նախկին Գիլլի լճի տարածքից: Պոպուլյացիան լավ վիճակում է: |
| Ակնախոտ սևանյան (Euphrasia sevanensis) | | x | Հազվագյուտ տեսակ է: Հայտնաբերվել է Սևանի լեռնանցքի մոտակայքում: Պոպուլյացիան լավ վիճակում է: |

7.3.1.2. Էնդեմիկ տեսակներ.

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 23 էնդեմիկ տեսակներից առավել ուշադրության են արժանի 18-ը (Քարտեզ 5), որոնց պոպուլյացիաների ընդհանուր վիճակը հետևյալն է: Խոզանափուշ Ֆյոդորովի (Cousinia fedorovii), խլածաղիկ Օլգայի (Scrophularia olgae) և խռնդատ սևանյան (Verbascum sevanense) տեսակների պոպուլյացիաների վիճակը ամենուրեք կարելի է գնահատել բավարար՝ առանձնյակները հանդես են գալիս բավական բարձր խտությամբ և առկա են հասակային բոլոր կազմերը: Գազ երկնագույն (Astragalus coelestis) տեսակի պոպուլյացիաներում առանձնյակները հանդես են գալիս ցածր խտությամբ՝ առավելագույնը 11 բույս: Դա հիմք է տալիս եզրակացնելու, որ պոպուլյացիաների վիճակը գնահատվի անբավարար: Անհրաժեշտ է իրականացնել մշտական մոնիտորինգ՝ վիճակի վրա ազդող գործոնները բացահայտելու համար:

Մյուս էնդեմիկ տեսակները հանդիպում են միայն պարկի պահպանական գոտում: Դրանցից սինձ հերկի (Tragopogon segetus), քարխոտ հայաստանյան (Symphytum hajastanum), զանգակ Խոզյատովսկու (Campanula bayerniana ssp. choziatowskyi), զիվան հայկական (Cephalaria armeniaca), թրաշուշան հայաստանյան (Gladiolus hajastanicus), թրաշուշան Կոչիի (Gladiolus kotschyanus ssp. distichus), ոզնաթուփ Գաբրիելյանի (Acantholimon gabrielianae), պսեֆելուս գեղամյան (Psephellus geghamensis) տեսակների պոպուլյացիաները, առանձնյակների բարձր խտության և հասակային տարբեր կազմերի առկայության չափանիշներով, գտնվում են բավարար վիճակում:

Ինչ վերաբերվում է պարկի պահպանական գոտում հայտնի մյուս էնդեմիկ տեսակներից հետևյալներին՝ կաթնբեկ Սոսնովսկու (Sonchus sosnovskyi) (Դարանակ գյուղի մոտ), անմոռուկ դարալագյազի (Myosotis daralaghezica) (Աղբերք գյուղի մոտ), լոշուն Առնոլդի (Isatis arnoldiana) (Կոնկրետ տեղը հայտնի չէ), լոշուն Սևանի (Isatis

sevangensis) (Արտանիշ, Ծափաթաղ, Դարանակ գյուղերի մոտ), կատվադաղձ Ալագյազի (Nepeta alaghezi) (Վարդենիսի լեռաշղթա, Գեղահովիտ գյուղից վերև), ապա հաշվառման ժամանակահատվածում դրանք չեն հայտնաբերվել և անհրաժեշտ են որոնողական կրկնակի հետազոտություններ՝ վեգետացիոն շրջանի տարբեր փուլերում:

7.3.1.3. Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված տեսակներ.

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորայի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված 48 տեսակներից իրոք հազվագյուտ են և արժանի են ուշադրության միայն 13-ը (Քարտեզ 5), ընդ որում՝ 6-ը համարվում են անհետացած տեսակներ: Դրանց վերաբերյալ համապատասխան տվյալները բերված են աղյուսակ 5–ում:

**Աղյուսակ 5. Կարմիր գրքում գրանցված տեսակներ, որոնք ունեն ուշադրության կարիք**

| Ցեղ, տեսակ | Ազգային պարկ | Պահպանական գոտի | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| Մարգացնցնուղ Ձեդելմեյերի (Peucedanum zedelmeyeranum) | - | Գիլի լիճ | Հավանաբար անհետացած տեսակ է: Վերջին հավաքը՝ 1945 թ: ERE*-ում նյութեր չկան: Անհրաժեշտ է շարունակել որոնումները: |
| Ճարտարուկ կոշտ (Draba rigida) | - | Շիշկայա գյուղի մոտ | Հավանաբար անհետացած տեսակ է: Վերջին հավաքը՝ 1923 թ: Անհրաժեշտ է շարունակել որոնումները: |
| Լոշուն Առնոլդի (Isatis arnoldiana) | - | Կոնկրետ տեղը հայտնի չէ | Հավանաբար անհետացած տեսակ է: ERE-ում նյութեր չկան: Վերջին հավաքը՝ 1930 թ: Անհրաժեշտ է շարունակել որոնումները: |
| Լոշուն սևանի (Isatis sevangensis) | - | Արտանիշ, Ծափաթաղ, Դարանակ գյուղերի մոտ | Հավանաբար անհետացած տեսակ է: Վերջին հավաքը՝ 1970 թ: Անհրաժեշտ է շարունակել որոնումները: |
| Ճահճախոտ միաթեփուկ (Eleocharis uniglumis) | Ծովակ գյուղի մոտ | Նորատուս, Հայրիվանք, Սոթք գյուղերի, Սևան, Գավառ քաղաքների մոտ, Այրիջա | Հավանաբար անհետացած տեսակ է: Վերջին հավաքը՝ 1966 թ: Անհրաժեշտ է շարունակել որոնումները: |
| Անողնուցուկ Գրոսսհեյմի (Puccinellia grossheimiana) | Կոնկրետ տեղը հայտնի չէ | - | Հավանաբար անհետացած տեսակ է: ERE-ում նյութեր չկան: Անհրաժեշտ է շարունակել որոնումները: |
| Սիբեխ սիբեխանման (Falcaria falcarioides) | - | Գիլի լիճ | Հավանաբար անհետացած տեսակ է: Վերջին հավաքը՝ 1966 թ: Հայտնի է պոպուլյացիա Արարատյան դաշտում: Անհրաժեշտ է շարունակել որոնումները : |
| Պրանգոս բերդաթումբ (Prangos arcis-romanae) | - | Գոմաձոր, Ցամաքաբերդ, Արեգունի գյուղերի, Սևան քաղաքի մոտ | Վիճակն անբավարար է: Նկատվում է արածեցման բացասական ազդեցությունը: Պահպանության ռեժիմի կիրառման դեպքում հնարավոր կլինի պահպանել պոպուլյացիայի մի մասը: |
| Պատատուկ Կալվերի (Convolvulus calvertii) | - | Դարանակ գյուղի մոտ | Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Անհետացման վտանգ չկա, սակայն անհրաժեշտ է վիճակի հսկողության մոնիտորինգ: |
| Ոզնաթուփ Գաբրիելյանի (Acantholimon gabrielianae) | - | Ջիլ և Ծափաթաղ գյուղերի մոտ | Պոպուլյացիաների վիճակը բավարար է: |
| Ջրառվույտ եռատերև (Menyanthes trifoliata) | - | Գիլի լիճ | Հետազոտված պոպուլյացիաների վիճակը բավարար է: |
| Ողկուզապտեր լուսնանման (Botrychium lunaria) | - | Դարանակ գյուղի մոտ, Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթաներ | Պոպուլյացիաների վիճակը բավարար է: |
| Զարմանազան երկնագույն (Polemonium caeruleum) | - | Սեմյոնովկա գյուղի մոտ | Պոպուլյացիաների վիճակը բավարար է: |

***ERE – ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում:***

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են ևս 5 հազվագյուտ տեսակներ, որոնք առանձնակի ուսումնասիրման կարիք ունեն: Դրանցից են՝

1. Զանգակ կովկասյան (Campanula caucasica) - պահպանական գոտում հայտնի է միայն մեկ պոպուլյացիա Սոթք գյուղի մոտակայքում, որը լավ վիճակում է.
2. Պալլոր դժգույն (Muscari pallens) - պահպանական գոտում հայտնի է միայն մեկ պոպուլյացիա Սոթք գյուղի մոտակայքում, որը շատ փոքր է, բայց լավ վիճակում.
3. Վիշապագլուխ ավստրիական (Dracocephalum austriacum) - հայտնի են այս տեսակի երեք պոպուլյացիաներ՝ Լճաշեն, Ծովժա և Բաբաջան գյուղերի մոտակայքերում: Դրանց պոպուլյացիաների վիճակը բավարար է.
4. Գրենլանդիա խիտ (Groenlandia densa) - Հայաստանի համար շատ հազվագյուտ տեսակ է: Հանդիպում է Արգիչի գետի վերին հատվածում: Պոպուլյացիան լավ վիճակում է.
5. Լակտուցելա ալիքաձև (Lactucella undulata) – նախկինում հավաքվել է մեկ անգամ Նորատուս գյուղի մոտից: Անհրաժեշտ են որոնողական ուսումնասիրություններ:

7.3.1.4. Դեղաբույսեր.

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տարածված 60 տեսակի դեղաբույսերից օգտագործման տեսակետից առավել հեռանկարային են 27-ը, որոնց և էկոհամակարգերին առանց վնաս պատճառելու հավաքի տվյալները բերված են աղյուսակ 6-ում (տեղաբաշխումը, տես՝ քարտեզ 6): Մնացած տեսակները, մարկետինգային հետազոտությունների դրական արդյունքի դեպքում, կարող են աճեցվել պլանտացիաներում:

Աղյուսակ 6. Տնտեսապես արժեքավոր դեղաբույսեր

| Տեսակ | Տարածման վայրերը | Հետազոտված պոպուլյացիաների թիվը | Միջին պաշարը, կգ/հա | Հնարավոր հավաք, կգ/հա | Հնարավոր հավաք, կգ/տարում |
|---|---|---|---|---|---|
| Հազարատերևուկ սովորական (Achillea millefolium) | Արտանիշի և Սևանի թերակղզիներ, Լիճք, պահպանական գոտի | 4 | 80 (վերգետնյա մաս) | 60 | 2000 |
| Կռատուկ Պալադինի (Arctium palladinii) | Պահպանական գոտի | 6 | 40 (արմատներ) | 20 | 800 |
| Անթառամ ծալքավոր (Helichrysum plicatum)* | Արտանիշի և Սևանի թերակղզիներ, պահպանական գոտի | 4 | 80 (վերգետնյա մաս) | 60 | 3000 |
| Լոշտակ սպիտակ (Bryonia alba)* | Պահպանական գոտի | 3 | 100 (կոճղարմատ) | 40 | 1000 |
| Ձիվան հսկայական (Cephalaria gigantea)* | Պահպանական գոտի | 3 | 10 (վերգետնյա մաս) | 6 | 800 |
| Չիչխան դժնիկանման (Hippophae rhamnoides)* | Ազգային պարկում ամենուրեք | 5 | 100 (պտուղներ) | 80 | 300000 |
| Իշառվույտ դեղատու (Melilotus officinalis) | Ազգային պարկում և պահպանական գոտում ամենուրեք | 4 | 40 (վերգետնյա մաս) | 30 | 200 |
| Սրոհունդ խոցված (Hypericum perforatum)* | Պահպանական գոտի | 4 | 70 (վերգետնյա մաս) | 35 | 2000 |
| Առյուծագի սովորական (Leonurus cardiaca) | Պահպանական գոտի | 4 | 50 (վերգետնյա մաս) | 30 | 300 |
| Խնկածաղիկ սովորական (Origanum vulgare)* | Արտանիշի և Սևանի թերակղզիներ, պահպանական գոտի | 4 | 30 (վերգետնյա մաս) | 15 | 600 |
| Լերդախոտ ալեհեր (Teucrium polium)* | Արտանիշի թերակղզի, պահպանական գոտի | 4 | 40 (վերգետնյա մաս) | 20 | 600 |
| Ուրց Կոչիի (Thymus kotschyanus)* | Արտանիշի թերակղզի, պահպանական գոտի | 6 | 100 (վերգետնյա մաս) | 60 | 3000 |
| Մատիտեղ ճճնդուկի | Արտանիշի և Սևանի | 4 | 30 | 20 | 300 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| (Polygonum aviculare) | թերակղզիներ, Մարտունի, պահպանական գոտի | | (վերգետնյա մաս) | | |
| Սզնենի Մեյերի, Ս. արևելյան, Ս. կեղծ տարատերև (Crataegus meyeri, C. orientalis, C. pseudohetero-phylla)* | Պահպանական գոտի | 3 | 60 (պտուղներ) | 50 | 1000 |
| Մասրենի (9 տեսակ) (Rosa) * | Պահպանական գոտի | 3 | 100 (պտուղներ) | 70 | 3000 |
| Խլածաղիկ ժայռային (Scrophularia rupestris) | Պահպանական գոտի | 2 | 20 (վերգետնյա մաս) | 10 | 300 |
| Կատվախոտ դեղատու (Valeriana officinalis) | Պահպանական գոտի | 2 | 20 (արմատներ) | 10 | 200 |

**** Ներկայումս օգտագործվում են տեղի բնակչության կողմից անձնական կարիքների և ոչ մեծ ծավալներով վաճառքի նպատակով:***

Նշված դեղաբույսերի արդյունագործական հավաքը և մշակումը պետք է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան մարկետինգային հետազոտությունների իրականացումից հետո:

7.3.1.5. Ուտելի բույսեր.

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տարածված 100 տեսակի ուտելի բույսերից օգտագործման տեսակետից առավել հեռանկարային են 21-ը, որոնց և էկոհամակարգերին առանց վնաս պատճառելու հավաքի տվյալները բերված են աղյուսակ 7-ում (տեղաբաշխումը, տես՝ քարտեզ 7): Մնացած տեսակները, մարկետինգային հետազոտությունների դրական արդյունքի դեպքում, կարող են աճեցվել պլանտացիաներում:

Աղյուսակ 7. Տնտեսապես արժեքավոր ուտելի տեսակներ

| Տեսակ | Տարածման վայրերը | Հետազոտված պոպուլյացիա-ների թիվը | Միջին պաշարը, կգ/հա | Հնարավոր հավաք, կգ/հա | Հնարավոր հավաք, կգ/տարում |
|---|---|---|---|---|---|
| Շուշանբանջար սոխուկավոր (Chaerophyllum bulbosum)* | Արտանիշի և Սևանի թերակղզիներ, պահպանական գոտի | 3 | 40 (երիտասարդ ցողուններ) | 30 | 1000 |
| Սիբեխ սովորական (Falcaria vulgaris)* | Արտանիշի թերակղզի, պահպանական գոտի | 5 | 10 (երիտասարդ տերևներ) | 8 | 500 |
| Բոխի մանրապտուղ (Hippomarathrum microcarpum)* | Արտանիշի թերակղզի, պահպանական գոտի | 5 | 40 (երիտասարդ ցողուններ) | 30 | 1000 |
| Ծնեբակ դեղատու, Ծ. օղակավոր (Asparagus officinalis, A. verticillatus) | Արտանիշի թերակղզի, պահպանական գոտի | 3 | 8 (երիտասարդ ցողուններ) | 5 | 400 |
| Չիչխան դժնիկանման (Hippophae rhamnoides)** | Ազգային պարկում ամենուրեք | 5 | 100 (պտուղներ) | 80 | 300000 |
| Ուրց Կոչիի (Thymus kotschyanus)* | Արտանիշի թերակղզի, պահպանական գոտի | 6 | 100 (ցողուններ) | 60 | 3000 |
| Ավելուկ վահանաձև (Rumex scutatus)* | Պահպանական գոտի | 4 | 50 (ցողուններ) | 40 | 1000 |
| Մասրենի (9 տեսակ) (Rosa sp.) * | Պահպանական գոտի | 3 | 100 (պտուղներ) | 70 | 3000 |
| Ծոփխնձոր արոսի (Sorbus aucuparia) | Պահպանական գոտի | 2 | 100 (պտուղներ) | 80 | 1000 |
| Սզնենի Մեյերի, Ս. արևելյան, Ս. կեղծ տարատերև (Crataegus meyeri, C. orientalis, C. pseudohetero- | Պահպանական գոտի | 3 | 60 (պտուղներ) | 50 | 1000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| phylla)* | | | | | | |

* *Տեղի բնակչության կողմից օգտագործվում են սեփական կարիքների համար.*

** *Կատարվում է հավաք հյութերի և այլ մթերքների արտադրության համար:*

Նշված ուտելի բույսերի արդյունագործական հավաքը և մշակումը պետք է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան մարկետինգային հետազոտությունների իրականացումից հետո:

7.3.1.6. Բույսերի ինվազիվ և էքսպանսիվ տեսակներ.

Հաշվառման աշխատանքների ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել ազգային պարկի էկոհամակարգերի վրա ինվազիվ (օտար) և էքսպանսիվ (տեղական) անցանկալի տեսակների դրսևորումներին: Կարևորագույն ինվազիվ տեսակներից են՝ զարնանաթարամ կծու (Erigeron acer), դեսկուրենիա Սոֆիայի (Descurainia Sophia), կարդարիա վայրի (Cardaria draba), կարդարիա Բուասյեի (Cardaria boissieri), տատաշ փռվող (Tribulus terrestris), տատասկ ալեհեր (Cirsium incanum), տատասկ դաշտային (Cirsium arvense), փակախոտ սիրիական (Euclidium syriacum), կոտեմ լայնատերև (Lepidium latifolium), թելուկ հոտավետ (Chenopodium botrys) և այլն: Թվարկված տեսակները հիմնականում հարմարված են գյուղատնտեսական նշանակության հողերին և էրոզացված ու խախտված տեղավայրերին: Առայժմ չի նկատվում դրանց ներխուժման միտումներ դեպի բնական էկոհամակարգեր: Առանձին տեսակներ, որոնք այնուամենայնիվ հանդիպում են բնական էկոհամակարգերում, սովորաբար զբաղեցնում են խիստ սահմանափակ տարածքներ խոնավ վայրերում: Ներկայումս դրանք բնական էկոհամակարգերի համար վտանգ չեն ներկայացնում, սակայն մոնիտորինգի իրականացման ժամանակ չպետք է անտեսվեն: Այդ ընթացքում անհրաժեշտ է նախատեսել ազգային պարկի տարածքում առայժմ չհանդիպող նոր ինվազիվ տեսակների հայտնաբերման հնարավորությունը:

Մեծ անհանգստություն են պատճառում էքսպանսիվ տեսակները (տեղական տեսակներ, որոնք ունեն նոր տարածքների նվաճման, արեալի ընդարձակման և բնական էկոհամակարգերից մյուս տեսակներին դուրս մղման հակում): Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում այդպիսի տեսակներն առայժմ շատ չեն, սակայն վերջին տարիներին դրանցից որոշները բավականին ինտենսիվ տարածվում են: Դրանցից են՝ եռակողասերմիկ անդրկովկասյանը (Tripleurospermum transcaucasicum), եռակողասերմիկ կովկասյանը (Tripleurospermum caucasicum), կտուցախոտ արևելյանը (Rhynchocorys orientalis), որոնք իրենց թվաքանակի զգալի աճ են ցուցաբերել պահպանական գոտու մարգագետնատափաստանային և մարգագետնային համակեցություններում: Մոնիտորինգի իրականացման ընթացքում անհրաժեշտ է մշտական հսկողություն սահմանել այս տեսակների թվաքանակի և տարածման վրա: Վտանգավոր էքսպանսիվ տեսակներից են նաև կռատուկ Պալադինի (Arctium palladinii), խիժաճարճատուկ կնյունանման (Chondrilla juncea), դառնիճ ճուռկախոտանման (Picris hieracioides), լվածաղիկ կուսատերև (Tanacetum parthenium), իշակաթնուկ Սեգիերի (Euphorbia seguieriana), Խռնդատ վրացական (Verbascum georgicum) և այլն, որոնք լայն տարածում ունեն պարկի և դրա պահպանական գոտու խոնավ վայրերում, մարգագետիններում, տափաստաններում, խախտված տեղանքներում և լքված գյուղատնտեսական նշանակության հողերում:

7.3.1.7. Հազվագյուտ սնկեր.

Ուսումնասիրությունները բացահայտել են, որ «Սևան» ազգային պարկի տարածքում հայտնաբերված մակրոմիցետներից 10-ը հազվագյուտ են և ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքի թեկնածու սնկերի ցանկում: Դրանք են՝ շամպինյոն աղյուսակաձև (Agaricus tabularis), շամպինյոն դեղնամաշկ (Agaricus xanthodermus), կլավարիադելֆուս վարսանդային (Clavariadelphus pistillaris), ոզնասունկ մարջանաձև (Hericium coralloides), հովանոցասունկ աղջկական (Macrolepiota puellaris), մոնտանեա ավազային (Montagnea arenaria), մուտինուս շնային (Mutinus caninus), միրիոստոմա

ծակոտկեն (Myriostoma coliforme), ռոդոտուս քաքաձև (Rhodotus palmatus), սարկոսոմա գնդաձև (Sarcosoma globosum) տեսակները: Նշված սնկերից 2-ը՝ միրիոստոմա ծակոտկեն և սարկոսոմա գնդաձև տեսակները ընդգրկվել են Եվրոպայի սնկերի Կարմիր գրքում: Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում նշված հազվագյուտ սնկերի բաշխվածության և պոպուլյացիաների վիճակի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Հազվագյուտ սնկերի բաշխվածությունը և պոպուլյացիաների վիճակը

| Անվանումը | Պոպուլյացիայի վիճակը | Ազգային պարկ | Պահպա-նական գոտի | Վիճակի վրա ազդող գործոններ |
|---|---|---|---|---|
| Շամպինյոն աղյուսակաձև | բավարար | - | Սեմյոնովկա գյուղի մոտ | Բնակավայրերի կորուստ, պտղամարմինների հավաք |
| Շամպինյոն դեղնամաշկ | բավարար | - | Գավառ քաղաքի մոտ | Պտղամարմինների հավաք և բնակավայրերի կորուստ |
| Լեզվասունկ վարսանդավոր | բավարար | Արտանիշի թերակղզի | - | Բնակավայրերի կորուստ, ծառահատումներ |
| Ոզնասունկ կորալանման | անբավարար, վտանգված | Լիճք | - | Ինտենսիվ անտառշահագոր-ծում, ծառահատում |
| Յովանոցասունկ աղջկական | անբավարար, վտանգված | Արտանիշի թերակղզի | – | պտղամարմինների հավաք |
| Մոնտանեա ավազային | անբավարար, վտանգված | Սևանի թերակղզի | - | Բացասական մարդածին ազդեցություն, էկոհամակարգերի քայքայում |
| Մուտինուս շնային | բավարար | Մարտունի | - | Բնակավայրերի ինտենսիվ անտառշահագործում, ծառահատում |
| Միրիոստոմա ծակոտկեն | անբավարար, վտանգված | Արտանիշի թերակղզի | - | Բացասական մարդածին ազդեցություն |
| Ռոդոտուս քաքաձև | բավարար | Մարտունի-Լիճք | - | Ինտենսիվ անտառշահագոր-ծում, ծառահատում |
| Սարկոսոմա գնդաձև | անբավարար, վտանգված | Սևանի թերակղզի | - | Բացասական մարդածին ազդեցություն, էկոհամակարգերի քայքայում |

7.3.1.8. Ուտելի սնկեր.

Հաշվառման տվյալները վկայում են, որ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հայտնի 100 տեսակի ուտելի սնկերից առավել հեռանկարայիններից տարեկան հնարավոր է հավաքել և մշակել յուրաքանչյուր տեսակից 300-600 կգ: Հեռանկարային ուտելի սնկերի հաշվառման մանրամասնությունները բերված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Հեռանկարային ուտելի սնկերի հաշվառման տվյալները

| Տեսակի անվանումը | Տեղաբաշխումը պարկի տարածքում | Տեղաբաշխումը պահպանական գոտու տարածքում | Յնարավոր հավաք, կգ/տարում |
|---|---|---|---|
| Յուղասունկ հատիկավոր (Suillus granulatus) | Լիճք, Մարտունի, Սևանի թերակղզի, Շորժա, Ճայերի կղզի, ճանապարհի երկարությամբ՝ սոճուտներում | - | 500-600 |
| Շեկլիկ (Lactarius deliciosus) | Լիճք, Մարտունի՝ սոճուտներում | - | 500 |
| Աղվեսասունկ (Cantharellus cibarius) | Լիճք, Շորժա | - | 300-400 |
| Կոճղասունկ մարգագետնային (Marasmius oreades) | Լիճք, Մարտունի, Սևանի թերակղզի, Շորժա, ճանապարհի ամբողջ երկարությամբ | Ծովագյուղ-Ճամբարակ հատված, Գեղամա լեռներ | 300 |
| Շամպինյոն սովորական (Agaricus campestris) | Լիճք, Մարտունի, Սևանի թերակղզի, Շոր-ժա, Ճայերի կղզի, ճանապարհի ամբողջ երկարությամբ | Գեղամա լեռներ | 400 |
| Շամպինյոն դաշտային (Agaricus arvensis) | - | Գեղամա լեռներ | 400 |

| | | | |
|---|---|---|---|
| Կոճղասունկ աշնանային (Armillaria mellea) | Լիճք, Մարտունի | - | 500-600 |
| Գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (Coprinus comatus) | Արտանիշ թերակղզի և շրջապատող տարածքներ, ճանապարհի ամբողջ երկարությամբ, Ճայերի կղզի | Գեղամա լեռներ | 400 |
| Լեպիստա մանուշակագույն ոտիկով (Lepista personata) | Մարտունի-Վարդենիս հատված | Ծովագյուղ-Ճամբարակ հատված, Գեղամա լեռներ | 500 |
| Ականջասունկ սովորական կամ Կախասունկ (Pleurotus ostreatus) | Արտանիշ թերակղզի, Շորժա - Ծովագյուղ, Մարտունի-Վարդենիս հատված | - | 400-500 |
| Շարքասունկ հողամոխրագույն (Tricholoma terreum) | Սևանի թերակղզի, Լիճք գյուղի շրջակայք | - | 600 |

Հարկ է նշել, որ, ելնելով տարվա կլիմայական պայմաններից, այս սնկերի քանակը կարող է տատանվել: Հետևաբար անհրաժեշտ է դրանց թվաքանակի և տարածման վերաբերյալ իրականացնել տարեկան հաշվառումներ: Ուտելի սնկերի արդյունագործական հավաքի և մշակման թույլտվությունները պետք է տրվեն հաշվառման և մարկետինգային հետազոտությունների իրականացումից հետո: Բացի այդ, ազգային պարկի տարածքում կարելի է կազմակերպել մեծ մասշտաբներով կուլտիվացվող սնկերի՝ շամպինյոնի (Agaricus bisporus) և կախասնկի (Pleurotus ostreatus) արհեստական աճեցում:

7.3.1.9. «Սևան» ազգային պարկի բուսականության վիճակը.

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բուսականության (առանց անտառային էկոհամակարգերի) ներկա վիճակը ընդհանուր առմամբ բավարար է: Ստորին լեռնային գոտու թփուտներում և տափաստանային համակեցություններում հաշվառման ընթացքում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Վերջին տասնամյակում արոտավայրային գերծանրաբեռնվածության բացակայության շնորհիվ մերձալպյան և ալպյան գոտու մարգագետնային բուսականությունը նույնպես գտնվում է լավ վիճակում: Բացառություն են կազմում միայն պարկի հարավ-արևմտյան ափամերձ հատվածները, որտեղ խոշոր և մանր եղջերավոր անասունների արածեցման հետևանքով այդ տարածքները զգալիորեն խախտվել են: Մնացորդային կաղնուտներում և գիհուտներում առկա են ծառահատման դեպքեր:

## 7.3.2. «Սևան» ազգային պարկի բուսական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ

«Սևան» ազգային պարկի բուսական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ (Հավելված 1): Արդյունագործական նշանակության բուսական տեսակների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները սերտորեն առնչվում են դրանց մարկետինգային ուսումնասիրությունների հետ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 5-ի 5.1. կետում ներկայացված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունների կատարմամբ (Հավելված 1):

## 7.3.3. Կենդանական աշխարհի հաշվառումը, վիճակը և գործողությունների պլանը

7.3.3.1. Անողնաշարավորներ.

Անողնաշարավորները «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում անբավարար են ուսումնասիրված: Մյուս կողմից, ներկայումս, մասնագետների բացակայության պատճառով, կարգաբանական խմբերի մեծ մասի

ուսումնասիրություն հնարավոր չէ կատարել: 2005 թվ. դաշտային ուսումնասիրությունների ժամանակ հավաքվել է Coleoptera և Lepidoptera միջատների խմբերի նմուշներ հետևյալ վայրերում՝ Ծովագյուղի, Լճաշենի, Կարճաղբյուրի, Նորատուսի առափնյա տարածքներում, նախկին Գիլի լճի տարածքում, Ճայերի կղզյակում և հարակից առափնյա մասերում, Ծովագյուղի մոտակա պահպանական գոտում, «Դիլիջան» ազգային պարկի սահմանի երկայնքով, Սևան-Դիլիջան հին մայրուղու երկարությամբ և Սևան քաղաքի ու Սեմյոնովկա գյուղի մոտակայքում: Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 218 տեսակի բզեզ (հավաքված 3500 նմուշներից) և 26 տեսակի թիթեռ (հավաքված 220 նմուշներից): Սրանցից 5-ը էնդեմիկ են Հայաստանի համար, 10-ը՝ Հարավային Կովկասի, և 27-ը՝ ամբողջ Կովկասի համար:

Անողնաշարավորները կարևոր նշանակություն ունեն մոնիտորինգային հետազոտություններ կատարելիս: Անհրաժեշտ է ընտրել համեմատաբար խորը ուսումնասիրված կենդանիների խմբեր, որոնք հասանելի են հավաքի համար և կարող են որոշվել նաև ոչ նեղ մասնագետների կողմից: Որպես մոդելային (ինդիկատորային) կոմպլեքսներ կարող են ընտրվել կարծրաթևերը և որոշ թիթեռներ (մասամբ՝ Rhopalocera խումբը և խոշոր Heterocera), որոնք ընդգրկում են բազմաթիվ և էկոլոգիապես բազմաբնույթ տեսակներ: Բարձր տեսակային բազմազանությունը, ինչպես նաև բազմաթիվ էնդեմիկների առկայությունը թույլ է տալիս նախընտրությունը տալ այդ տեսակներին: Ընտրված կարգաբանական միավորները թույլ կտան ստանալ ներկայացուցչական տվյալներ: Ուսումնասիրվող տեսակների էկոլոգիական կապերի բազմազանությունը թույլ է տալիս անուղղակիորեն գնահատել նաև բուսականությունը և էդաֆիկ գործոնը:

### 7.3.3.2. Երկկենցաղներ.

«Սևան» ազգային պարկի տարածքում հայտնի երկկենցաղների հաշվառման և էկոլոգիական բնութագրերի տվյալները հետևյալն են.

1. **Լճագորտ (Rana ridibunda)** - հանդիպում է ազգային պարկի լճափնյա և մնացորդային լճակների ափամերձ տարածքներում: Յուրաքանչյուր հեկտարում հաշվարկվել են շուրջ 2800 առանձնյակներ:
2. **Փոքրասիական գորտ (Rana macrocnemis)** - գրանցվել է պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում: Յուրաքանչյուր հեկտարում հաշվարկվել են շուրջ 1400 առանձնյակներ:
3. **Կանաչ դոդոշ (Bufo viridis)** - մեծ քանակությամբ հայտնաբերվել է ամենուրեք: Վերարտադրության ընթացքում մեծ կուտակումներ են առաջացնում լճի և մնացորդային լճակների ափամերձ հատվածներում: Յուրաքանչյուր հեկտարում հաշվարկվել են շուրջ 1600 առանձնյակներ:
4. **Շելկովնիկովի ծառագորտ (H.a.shelkovnikovi)** - քիչ քանակությամբ հայտնաբերվել է Ծովագյուղ ու Լճաշեն գյուղերին մոտակա եղեգնուտներում և թփուտներում:

Առաջին 3 տեսակները առավելապես ակտիվանում են գարնան կեսերին՝ վերարտադրության ընթացքում, որից հետո դրանց ակտիվությունը աստիճանաբար նվազում է: Այս տեսակներով հարուստ տարածքներից են Լճաշենի ջրանցքը մինչև Լճաշենի քարանձավի վերջը, Նորատուսի լճափնյա գոտին, Լիճքը և Ծափաքաղի ձորից սկսած մինչև 2800 մ բարձրությունը: Նշված երկկենցաղների վիճակը ներկայումս գնահատվում է բավարար: Պոպուլյացիաների վիճակի վրա ազդող հիմնական գործոններն են՝ վերարտադրության վայրերի չորացումն ու աղտոտումը: Լճի մակարդակի բարձրացումը բացասական հետևանքներ չի թողնի երկենցաղների պոպուլյացիաների և տեսակային կազմի վրա:

### 7.3.3.3. Սողուններ.

«Սևան» ազգային պարկի տարածքում հայտնի սողունների հաշվառման և էկոլոգիական բնութագրերի տվյալները հետևյալն են.

1. Մողեսներ - Ժայռային մողեսների հետևյալ 5 տեսակները (որոնք բոլորն էլ հայկական բարձրավանդակի էնդեմիկներ են) հայտնաբերվել են պարկի և հարակից գոտու տարբեր բնատեղիներում՝ ներառյալ պարկի սահմաններով անցնող ավտոճանապարհի երկարությամբ ձգվող ժայռերի վրա:

- **Սպիտակափոր ժայռային մողես (Darevskia unisexualis)** - հայտնաբերվել է ազգային պարկի արևմտյան մասում՝ լճին հարակից ժայռերի վրա, որտեղ կազմում են առանձնացված պոպուլյացիաներ, մասնավորապես՝ Սևանի թերակղզում, Լճափ գյուղում, Գավառի շուրջը, ինչպես նաև Նորատուսի թերակղզում, Սևանի լեռնաշղթայի ստորին լանջերում:
- **Հայկական ժայռային մողես (Darevskia armeniaca)** - փոքր քանակությամբ հայտնաբերվել է Գեղամա լեռնաշղթայի ստորին հատվածում, որտեղ առաջացնում է սիմպատրիկ պոպուլյացիաներ վալենտինի ժայռային մողեսի (D. valentine) և նաիրյան ժայռային մողեսի (D. nairensis) միջև:
- **Ռոստոմբեկովի ժայռային մողես (Darevskia rostombekovi)** - փոքր, մեկուսացված պոպուլյացիա հայտնաբերվել է Ծովակ գյուղի հարևանությամբ:
- **Նաիրյան ժայռային մողես (Darevskia nairensis)** - հայտնաբերվել է Գեղամա լեռնաշղթայի ստորին՝ լճին հարող հատվածում: Մեծ քանակությամբ դրանք առկա են լճի առափնյա ժայռերի վրա՝ հաճախ ձևավորելով խիտ պոպուլյացիաներ:
- **Վալենտինի ժայռային մողես (Darevskia valentine)** - քիչ քանակությամբ հանդիպում են հիմնականում ազգային պարկի պահպանական գոտու Լճաշեն և Լճափ համայնքների տարածքներում: Տարածված է նաև Գեղամա լեռնաշղթայի ողջ երկարությամբ՝ հասնելով մինչև ալպիական գոտի:

Մողեսների այլ տեսակներ, որոնք հայտնաբերվել են պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում, պատկանում են կանաչ մողեսների ընտանիքին, ինչպիսիք են՝ ճարպիկ մողեսը (Lacerta agilis), շերտավոր մողեսը (Lacerta strigata) և միջին մողեսը (Lacerta trilineata): Դրանցից բազմաքանակը ճարպիկ և շերտավոր մողեսներն են, որոնցից ճարպիկ մողեսը առավել խիտ պոպուլյացիաներ է առաջացնում Ծովագյուղ և լճին հարակից անտառներում, իսկ շերտավոր մողեսը՝ Շորժա համայնքի առափնյա տարածքներում: Պարկում հայտնի է նաև կովկասյան ագաման (Laudacia caucasica), որը լայնորեն տարածված է Սևանի լեռնաշղթայի ժայռերի վրա:

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված միակ հայկական տեսակի՝ խայտաբղետ մողեսիկի (E.a. transcaucasica) մեկուսացված պոպուլյացիան հայտնաբերվել է Նորատուս գյուղին հարակից ավազուտներում: Այդ տարածքի էկոլոգիական վիճակի փոփոխության դեպքում այս տեսակը կվերանա հայկական կենդանատեսակների ցանկից: Ուսումնասիրությունների ընթացքում Արտանիշ թերակղզում հայտնաբերվել է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված ևս մեկ տեսակի՝ փոքրասիական մողեսի (L. parva) մեկ առանձնյակ:

2. Օձեր - Օձերի հետևյալ 5 տեսակները՝ պղնձօձը (Coronella austriaca), ջրային լորտուն (Natrix tesselata), սովորական լորտուն (Natrix natrix), պարսկական լորտուն (Natrix persa) և լեռնատափաստանային իժը (Vipera erivanensis) լայնորեն տարածված են ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում: Ընդ որում՝ լորտուներին (Natrix genus) պատկանող տեսակները ավելի մեծ քանակությամբ հայտնաբերվել են գարնանը, իսկ լեռնատափաստանային իժը հիմնականում հանդիպում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաների ստորին հատվածներում:

Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում սողունների ընդհանուր քանակը 1972 թվականի համեմատությամբ նվազման միտում է ցուցաբերում, որը պայմանավորված է մարդածին գործոններով, մասնավորապես՝ լճի մակարդակի իջեցմամբ և վերարտադրության վայրերի չորացմամբ: Լճի մակարդակի բարձրացման դեպքում սողունների պոպուլյացիաների և դրանց տեսակային կազմի վրա բացասական ազդեցություն չի թողնի:

Սողունների վերաբերյալ առավել ամբողջական և ճշգրիտ տվյալների ձեռք բերման համար անհրաժեշտ է դաշտային հետազոտությունների առնվազ մեկ տարվա ընթացք:

7.3.3.4. Թռչուններ.

Գույքագրման աշխատանքները կատարվել են 2005 թ. ապրիլ-սեպտեմբեր ժամանակահատվածում, որի պատճառով վաղ գարնանային և աշնանային միգրացիոն ժամանակահատվածները չեն ուսումնասիրվել:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 267 տեսակի թռչուններից 20-ը ներկայումս հազվագյուտ են, սակայն գրանցված չեն Հայաստանի Կարմիր գրքում: Դրանք են՝ մոխրայտ սուզակը, մեծ սուզակը, սպիտակ փոքր տառեղը, մոխրագույն տառեղը, սև ցինը, տափաստանային ճուռակը, փոքր ենքարծիվը, կարմիր բաղը, պիրոլը, սովորական սոխակը, փոքր քարադրը, սևուկ կտցարը, սպիտակավիզ կտցարը, գետային ջրածիծառը, ականջավոր բուն, այծկիթը, ճահճային մկնաճուռակը, սովորական կիվիկը, խայտաբղետ փայտփորը, ժայռային ծիծեռնակը: Ընդ որում՝ սև ցինը, սովորական սոխակը և սևուկ կտցարը միգրացվող, սակայն ազգային պարկի տարածքում չբազմացող տեսակներից են:

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված 39 (ուսումնասիրությունների ընթացքում գրանցվել են 35-ը՝ տես քարտեզ 8) և տնտեսական արժեք ներկայացնող 29 տեսակների վիճակը ներկայումս գնահատվում է անբավարար՝ բնական և մարդածին գործոնների բացասական ազդեցության հետևանքով: Սակավաթվությամբ և բնադրավայրերի խոցելիությամբ առանձնապես տագնապալից են Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակների վիճակը՝ սև ագռավ, վարդագույն հավալուսն, գանգրափետուր հավալուսն, մեծ ձկնկուլ, տարգալկտուց, ճչան կարապ, մոխրագույն բադ, մարմարյա մրտիմն, սպիտակագլուխ բադ, մարգագետնային մկնաճուռակ, Եվրոպական ճնճղաճուռակ, քարարծիվ, սև անգղ, միջերկրածովյան բազե, սապսան, մոխրագույն կռունկ, խայտաբղետ քարակեռնեխ:

Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում թռչունների վրա ազդող հիմնական բացասական գործոններ են հանդիսացել Սևանա լճի մակարդակի իջեցումը և մոտ 10000 հա հարակից ճահճուտների չորացումը: Դրա հետևանքով բազմացող, միգրացվող և տնտեսական արժեք ներկայացնող թռչունների (հիմնականում ջրային և ճահճային տեսակների) քանակը և տեսակային կազմը ենթարկվել են բացասական ազդեցության, որոշ տեսակներ խիստ վերացել են: Մինչև 1945 թ. Սևանա լճի ավազանում եղել են թռչունների 6 խոշոր ձվադրավայրեր, որոնցից ամենամեծը Գիլի լճի համակարգն էր: Ներկայումս դրանք դեգրադացված վիճակում են:

Ինչ վերաբերվում է Սևանա լճի մակարդակի պլանավորած բարձրացմանը, պարկի թռչնաշխարհի վրա այն կունենա հետևյալ ազդեցությունը՝

1. զգալիորեն կընդլայնվեն պարկի գերխոնավ տարածքները, որն էլ կնպաստի ջրա-ճահճային թռչնատեսակների (որորներ, կտցարներ, բադեր, սագեր և այլն) վերարտադրությանը.
2. լճի կղզյակները հիմնականում ջրածածկ կլինեն, որով կվերանան հայկական որորի (Laurus armenicus*)* բնադրավայրերը: Արդյունքում այն ստիպված կլինի ձվադրել բնակավայրերին մոտ տարածքներում, որի դեպքում բնադրավայրերը մատչելի կլինեն դրանց ձվերով սնվող փոքր կաթնասունների (աղվես, աքիս, թափառող շներ և այլն) համար:

Մարդածին այլ բացասական գործոններից թռչնաշխարհին զգալի վնաս են հասցնում նաև վերջին տարիների ընթացքում լայն թափ ստացած, սակայն դեռևս ոչ լիարժեք կառավարելի ռեկրեացիոն գործունեությունը, ձկնագողությունը, մոտորանավակների քանակի ավելացումը և այլն:

7.3.3.5. Կաթնասուններ.

2005 թվ. ուսումնասիրությունների ընթացքում «Սևան» ազգային պարկի տարածքից հայտնաբերվել են հետևյալ 5 նոր տեսակները՝ սպիտակափոր սպիտակատամ (Crocidura leucodon), թզուկ փոքրաչղջիկ (Pipistrellus pigmaeus), ճստիկ սպիտակատամ (Suncus etruscus), սրականջ գիշերաչղջիկ (Myotis blythi) և հայկական գիշերաչղջիկ (Myotis hajastanicus): Նշված տեսակներից ճստիկ սպիտակատամը առաջին անգամ է բերվում Հայաստանի համար: Այն հայտնաբերվել է Մարտունի և Վարդենիս քաղաքների միջև ընկած տարածքներում:

Կաթնասունների կարգաբանական խմբերի ներկայացուցիչների վերաբերյալ առավել ուշադրության արժանի տվյալները հետևյալն են.

1. Կրծողներ - այս դասին պատկանող տեսակները լայնորեն տարածված են Ծործա-Վարդենիս-Գավառ հատվածում՝ կազմելով կիսաշրջան, սկսած առափնյա անմշակ հողակտորներից և ձգվելով մինչև լեռնային գոտիներ, որը որոշ մասերում հասնում է 7-11 կմ-ի: Վայրենակերպի (Hystrix hizsutiostris) բնատեղին սահմանափակ է և զբաղեցնում է Ծործա-Ճամբարակ հատվածի լեռնատափաստանային գոտու անտառքփուտները: Այս տեսակը, ինչպես նաև անտառային քնամուկը (Dryomys nitedula), նվազում է ոչ միայն պոպուլյացիաների քանակի տեսանկյունից, այլև ընդհանուր քանակի, որն անտառահատումների արդյունք է: Գորշ նապաստակը հայտնաբերվել է պարկի և պահպանական գոտու բոլոր բիոտոպերում և կաթասուններից առավել հաճախ հանդիպող տեսակներից է:

2. Չղջիկներ - ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում գրանցված 7 տեսակի չղջիկները անհամաչափ են տեղաբաշխված: Տեսակային կազմի և քանակական տեսակետից առանձնապես հարուստ է պարկի հյուսիսային հատվածը: Այստեղ առաջին անգամ հայտնաբերված սրականջ գիշերաչղջիկը առաջացնում է 7 և 11 ներկայացուցիչներից կազմված խմբեր, իսկ հայկական գիշերաչղջիկը՝ 2, 3, և 5 անհատներից բաղկացած խմբեր, որոնք կազմում են նեղ բնատեղի: Թզուկ փոքրաչղջիկը առաջացնում է անհամեմատ մեծ խմբեր՝ 20 և 30 անհատներով:

3. Գիշատիչներ - ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված ամենացայտուն ցուցանիշն այն է, որ ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում զգալիորեն ավելացել է շնագայլերի քանակը և նույնիսկ փոխվել է դրանց ակտիվության շրջանը, որը որոշ դեպքերում ճնշել է այլ գիշատիչների (աղվես, քարակզաքիս, խայտակզաքիս, գորշուկ և այլն) տարածքները և նվազեցրել պոպուլյացիաներում դրանց անհատների քանակը: Զգալիորեն նվազել է նաև ջրասամույրի քանակը:

4. Սմբակավոր/կճղակավորներ - Չնայած «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում արձանագրվել են սմբակավոր/կճղակավոր կաթնասունների 3 տեսակ, սակայն հաջողվել է արձանագրել, որ ազնվացեղ եղջերուի (Cervus elaphus) 2-5 կենդանիներից կազմված խմբեր պարբերաբար Տավուշի մարզից այցելում են պարկի պահպանական գոտի: Ուսումնասիրությունների ընթացքում գրանցվել են նաև 3 արու բեզոարյան այծեր (Capra aegagrus) Արտանիշի թերակղզում և 2 փոքր խմբեր Շիշկայա հատվածում՝ կազմված համապատասխանաբար 2 էգերից և 3 ձագերից, 5 էգերից ու 2 ձագերից: Սա բացառիկ երևույթ է, որ տասնամյակներ անց այծերը կրկին հայտնվել են պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում:

Կաթնասունների վերաբերյալ դիտարկումները ցույց են տալիս, որ ազգային պարկի կենդանիների կազմը որոշ դեպքերում նման է հարևան մարզերի կազմին, օրինակ՝ գիշատիչների և սմբակավորների առկայությունը: Սա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ այս տարածքներում են տեղի ունենում կենդանիների սեզոնային և կերի միգրացիան: Չնայած դրան, պարկն ունի իրեն բնորոշ կենդանական կազմը, որոնք հաճախ հանդիպում են մեծ պոպուլյացիաներով, ինչպես օրինակ՝ մեծ քնամուկը (Glis glis), պարսկական սկյուռը (Sciurus persicus), անտառային մուկը (Apodemus sylvaticus), այծյամը (Capreolus capreolus), լայնականջ ղզնին (Tadarida teniotis) և այլն:

Տեսակների առատության առումով բավականին հարուստ է ազգային պարկի Արտանիշի տեղամասը:
Որոշ կաթնասունների մշտական առկայությունը, ինչպիսիք են բեզոարյան այծը, անտառային քնամուկը և ճտտիկ սպիտակատամը, պետք է պարզել լրացուցիչ դաշտային հետազոտությունների միջոցով:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող կենդանիներից վայրենակերպը (Արտանիշ և հարակից անտառային տարածքներ), ջրասամույրը (Արտանիշ, Գիլի, Լիճք, Կարճաղբյուր. գետերի և գետակների հուների երկայնքով), գորշ արջը (Արտանիշ. անտառային տարածքներ), խայտակզաքիսը (Արտանիշ, Կարճաղբյուր. պահպանական գոտի), անտառային կատուն (Արտանիշ. պահպանական գոտի) և բեզոարյան այծը (Արտանիշ, Սևանի լեռնաշղթա՝ պահպանական գոտի) գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (քարտեզ 8) և ներկայումս պահպանում են իրենց հազվագյուտ լինելու կարգավիճակը: Մյուս կողմից, մի շարք տեսակներ, որոնք գրանցված չեն Կարմիր գրքում, սակայն, ինչպես պարզվել է ուսումնասիրությունների ընթացքում, նույնպես հազվադեպ են հանդիպում: Դրանցից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գորշ ականջեղը (հանդիպում է Սևանա լճի հյուսիսային առափնյա հատվածներում), լուսանը (հանդիպել է պարկի հյուսիսային հատվածում):
Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում կաթնասունների վիճակի վրա ազդող հիմնական գործոններից են որսագողությունը, կերի անբավարար քանակությունը, սեզոնային և կերի միգրացիոն ուղիների անբարենպաստ վիճակը: Որոշ կաթնասունների դեպքում յուրահատուկ գործոն է հանդիսանում Սևանա լճի մակարդակը: Այսպես, լճի մակարդակի ակնկալվող բարձրացումը որևէ վտանգ չի ներկայացնում կաթնասունների զգալի մեծամասնության համար, որոնք ի վիճակի կլինեն արագորեն հարմարվել փոփոխություններին: Այդ տեսակներից են՝ ջրային առնետը, ջրասամույրը, վայրի խոզը և շատ գիշատիչներ, ինչպիսիք են՝ գայլը, շնագայլը, աղվեսը, խայտաքիսը և այլն: Սակայն այն տեսակները, որոնք ի վիճակի չեն արագորեն արձագանքել նման փոփոխություններին և հարմարվել նոր միջավայրերին, ստիպված կլինեն տեղափոխվել այլ տարածքներ: Սա կարող է հանգեցնել պոպուլյացիաների դեգրադացման, ընդհուպ պարկի տարածքից որոշ տեսակների անհետացման: Այս խմբին պատկանող կաթնասունների վտանգված տեսակները հիմնականում պատկանում են միջատակերների կարգին, ինչպիսիք են՝ սպիտակատամները, գործատամները, խլուրդները և չղջիկները: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել մանրամասն սեզոնային ուսումնասիրություններ, որպեսզի հնարավոր լինի հայտնաբերել և կանխագուշակել կաթնասունների տեսակների պոպուլյացիայի կարգավիճակի փոփոխությունները:

### 7.3.4. «Սևան» ազգային պարկի կենդանական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ

«Սևան» ազգային պարկի կենդանական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ (Հավելված 1):

## 7.4. «Սևան» ազգակին պարկի անտառգույքագրում

«Սևան» ազգային պարկի տարածքում անտառների գույքագրման և հաշվառման աշխատանքներն առաջին անգամ իրականացվել են 1962 թվականին, այնուհետև պարբերաբար՝ 1972 և 1983 թվականներին: Ազգային պարկի կառավարման պլանի մշակման շրջանակներում 2005 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել են անտառների գույքագրման աշխատանքներ, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև:

### 7.4.1. Անտառային տարածքների դինամիկան ըստ հողատեսքերի

Ինչպես երևում է աղյուսակ 9-ից, «Սևան» ազգային պարկի անտառային տարածքների մակերեսը 2005 թվ., 1983 թվ համեմատությամբ, ավելացել է 3665 հա-ով: Դա բացատրվում է նախկին Կրասնոսելսկի անտառտնտեսության 3685 հա անտառային և ոչ անտառային հողերի միացման և GIS համակարգով մակերեսների ճշտման հանգամանքներով:

**Աղյուսակ 9. «Սևան» ազգային պարկի տարածքի դինամիկան ըստ առանձին հողատեսքերի օգտագործման**

| հ/հ | Հողատեսքեր | 1983 | | 2005 | | Տարբերությունը |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հեկտար | % | Հեկտար | % | |
| 1. | Ընդհանուր մակերեսը | 18727 | 100 | 22392 | 100 | 3665 |
| 2. | Անտառային հողեր, ընդամենը | 15967 | 85.3 | 18816.9 | 84 | 2849.9 |
| 2.1. | Անտառածածկ, ընդամենը | 11965 | 63.9 | 13250.2 | 59.2 | 1285.2 |
| 2.1.1. | Այդ թվում անտառմշակույթներ | 11109 | 59.3 | 11874.6 | 53 | 765.6 |
| 2.1.2 | Բնական անտառներ | 856 | 4.6 | 1375.6 | 6.1 | 519.6 |
| 2.2. | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | 1911 | 10.2 | 97.4 | 0.4 | -1813.6 |
| 2.3. | Անտառային տնկարան | 77 | 0.4 | 28.9 | 0.1 | -48.1 |
| 2.4. | Նոսրուտ կենսաբանական | 130 | 0.7 | 304.1 | 1.4 | 174.1 |
| 2.5 | Մահացած ծառուտներ | 1 | - | 115.8 | 0.5 | 111.8 |
| 2.6 | Հատված տարածքներ | | - | 31.7 | 0.1 | 31.7 |
| 2.7 | Բացատներ | 1881 | 10 | 4988.8 | 22.3 | 3107.8 |
| 3. | Ոչ անտառային հողեր, ընդամենը այդ թվում | 2760 | 14.7 | 3575.1 | 16 | 815.1 |
| • | Վարելահող | 146 | 0.8 | 484.7 | 2.2 | 338.7 |
| • | Խոտհարք | 17 | 0.1 | 50.3 | 0.2 | 33.3 |
| • | Արոտավայր | 769 | 4.1 | 852.1 | 3.8 | 83.1 |
| • | Ճանապարհներ | 84 | 0.4 | 81.5 | 0.4 | -2.5 |
| • | Բնակավայր, կորդոն | 303 | 1.6 | 650.6 | 2.9 | 347.6 |
| • | Իրային մակերես | 92 | 0.5 | 5 | | -87 |
| • | ճահիճ | 7 | - | 13.6 | 0.1 | 6.6 |
| • | այգիներ | 9 | - | 6.2 | | -2.8 |
| • | ավազուտ | 82 | 0.4 | 301.1 | 1.3 | 219.1 |
| • | Այլ հողեր | 124 | 0.7 | 1125.5 | 5.0 | 1001.5 |

Անտառածածկ մակերեսը վերջին 23 տարիներին (1983-2005 թթ.) ավելացել է 1285.2 հեկտարով, որը բացատրվում է մինչև 1983 թ. և հետագա տարիներին հիմնադրված չմիակցված սաղարթով անտառմշակույթների անտառածածկ փոխադրման, ինչպես նաև նախկին Կրասնոսելսկի անտառտնտեսության անտառների միացման հանգամանքներով: Վերջինով է բացատրվում նաև բնական անտառների տարածքների ավելացումը: Կենսաբանական նոսրուտների ավելացումը 174.1 հեկտարով ևս արդյունք է ազգային պարկին նախկին Կրասնոսելսկի անտառտնտեսությունից միացված բնական անտառների: Մարդածին նոսրուտների ավելացումը 111.8 հեկտարով և համատարած հատվածներինը 31,7 հեկտարով բացատրվում է հետևյալ հանգամանքով: 1992 թվականից սկսած ազգային պարկի գրեթե ողջ տարածքում իրականացվել են չհամակարգված, տարբեր ինտենսիվության հատումներ՝ հիմնականում բարդու, ակացիայի, ուռենու և հացենու ծառուտներում: Ընդ որում՝ առաջին երեք տեսակները առանձնանում են կոճղաշիվային վերականգնման բարձր պոտենցիալով և համատարած կամ մինչև 0.1-0.2 հատված տարածքները վեգետատիվ եղանակով վերականգնվել են, իսկ մարդածին

նոսրուտները վերաբերում են հիմնականում սոճու և հացենու ծառուտներին, որոնք կոճղաշիվային վերականգնման ունակություն չունեն:

31,7 հեկտար համատարած հատված տարածքները կոճղերի առկայությամբ հայտնաբերվել և հաշվառվել են, իսկ կոճղերի փտման, քայքայման հետևանքով չվերականգնված տարածքները հաշվառվել են որպես բացատներ: Նշված հանգամանքով է բացատրվում անտառային բացատների մակերեսների ավելացումը 3107.8 հեկտարով:

«Սևան» ազգային պարկի 4 մասնաճյուղերի անտառային տարածքների և դրանցում ներառված 13 տեղամասերի մակերեսների փոփոխությունները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Ազգային պարկի անտառային տարածքի կառուցվածքը հեկտարներով՝ ըստ մասնաճյուղերի և տեղամասերի

| Մասնաճյուղի անվանումը | N | Տեղամասի անվանումը | Մակերեսը, հա | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1983թ | 2005թ | Տարբերություն |
| Սևանի | 1 | Ախթամարի | 1200 | 2219 | 1019 |
| | 2 | Սևանի | 2329 | 2340 | 11 |
| | 3 | Արտանիշի | - | 2206 | 2206 |
| | **Ընդամենը** | | **3529** | **6765** | **3236** |
| Նորատուսի | 4 | Ծովազարդի | 1424 | 1502 | 78 |
| | 5 | Նորատուսի | 1680 | 1788 | 108 |
| | 6 | Հայրիվանի | 978 | 947 | -31 |
| | **Ընդամենը** | | **4082** | **4237** | **155** |
| Մարտունու | 8 | Երանոսի | 1222 | 1222 | 0 |
| | 9 | Մարտունու | 1652 | 1705 | 53 |
| | 10 | Վարդենիկի | 964 | 957 | -7 |
| | 11 | Ծովինարի | 1230 | 1238 | 8 |
| | **Ընդամենը** | | **5068** | **5122** | **54** |
| Վարդենիսի | 12 | Վարդենիսի | 2771 | 2821 | 50 |
| | 13 | Գյունեի | 1981 | 2056 | 75 |
| | 14 | Ծովակի | 1296 | 1391 | 95 |
| | **Ընդամենը** | | **6048** | **6268** | **220** |
| **Ընդամենը** | | | **18727** | **22392** | **3665** |

Ազգային պարկի 4 մասնաճյուղերի մասնաբաժինները ընդհանուր անտառային ծածկույթում, 2005 թվականի դրությամբ հետևյալն են՝ Սևան 36 %, Վարդենիս 34 %, Մարտունի 27 % և Նորատուս 23 %:

### 7.4.2. Ազգային պարկի անտառների գնահատում

#### 7.4.2.1. Ազգային պարկի անտառների բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների.

«Սևան» ազգային պարկում գերակշռող ծառաթփատեսակները 15-ն են (Քարտեզ 9), որոնցից սոճին և բարդին կազմում են պարկի անտառածածկի գրեթե 49 %-ը, իսկ տարածքի 19 %-ը զբաղեցնում են չիչխանի տնկարկները, որոնք վերջին 10-15 տարիներին հիմնվել են ափամերձ գոտու բաց տարածքներում և կոճղաշիվային բազմացման ակտիվության շնորհիվ ընդարձակվում են: Չիչխանի, ինչպես նաև թփանման ուռենու և դեղին ակացիայի զբաղեցրած տարածքները, որոնք համապատասխանում են անտառածածկի որոշման գործող չափորոշիչներին, հաշվարկված են անտառածածկ մակերեսի մեջ: Համեմատելով 1983 թվ. անտառգնահատման տվյալների հետ՝ 2005 թվ. արձանագրվել է անտառածածկ մակերեսի ավելացում (աղյուսակ 11), որը պայմանավորված է սոճուտների ավելացման արդյունքում (1154,5հա), գիհու բնական անտառների (368,6հա), կաղնու (119,7հա), նախկին Կրասնոսելսկի անտառտնտեսության

կաղնուտների միացման և հիմնականում կոճղաշիվային զարգացման բարձր պոտենցիալով աչքի ընկնող թփատեսակների (չիչխան, դեղին ակացիա) մակերեսների ավելացմամբ:

**Աղյուսակ 11. Սևան ազգային պարկի անտառների բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների**

| Ծառաթփատեսակը | գնահատման տարի | | տարբերություն |
|---|---|---|---|
| | 1983 | 2005 | հա |
| **ասեղնատերև ծառատեսակներ** | | | |
| սոճի | 2645 | 3799,5 | 1154,5 |
| գիհի | 559 | 927,6 | 368,6 |
| եղևնի | 1 | 4,9 | 3,9 |
| **ընդ. փշատերևներ** | **3205** | **4732** | **1527** |
| **լայնատերևների** | | | |
| բարդի | 3017 | 2688,4 | -328,6 |
| թեղի | 1018 | 976,8 | -41,2 |
| կաղնի | 297 | 416,7 | 119,7 |
| ուռենի | 766 | 381,3 | -384,7 |
| փշատենի | 469 | 212,9 | -256,1 |
| հացենի | 129 | 153,5 | 24,5 |
| տանձենի | 7 | 14,9 | 7,9 |
| թխկի | 0 | 8,4 | 8,4 |
| խնձորենի | 14 | 8,3 | -5,7 |
| կեչի | 0 | 3,8 | 3,8 |
| սպիտակ ակացիա | 37 | 3,6 | -33,4 |
| **ընդ. լայնատերևներ** | **5754** | **4868,6** | **-885,4** |
| **ընդ. ծառատեսակներ** | **8959** | **9600,6** | **641,6** |
| **հիմնական թփատեսակներ** | | | |
| չիչխան | 1280 | 2484,4 | 1204,4 |
| ուռենի թփանման | 654 | 365,3 | -288,7 |
| դեղին ակացիա | 362 | 799,9 | 437,9 |
| **ընդ. թփեր** | 2296 | 3650 | 1354 |
| **Ընդհանուր** | **11255** | **13250,2** | **1995,2** |

### 7.4.2.2. Անտառածածկ տարածքների բաշխվածությունն ըստ ծառուտների լրիվության.

Չհամակարգված հատումների արդյունքում ազգային պարկի ծառուտների միջին լրիվությունը 2005 թվ., 1983 թվ. համեմատ, նվազել է 0.11-ով (աղյուսակ 12): Ընդ որում՝ 0,3 լրիվության ծառուտների մակերեսը ավելացել է 563.9 հեկտարով, իսկ 0,4 լրիվության ծառուտներինը՝ 1246,6 հեկտարով (Քարտեզ 10):

**Աղյուսակ 12. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության**

| ծառաթփատեսակներ | | լրիվություն | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 0.3 | 0.4 | 0.5 | 0.6 | 0.7 | 0.8 | 0.9 | 1 | ընդամենը | միջին |
| սոճի | 1983 | | 14 | 123 | 445 | 745 | 803 | 447 | 68 | 2 645 | 0.76 |
| | 2005 | 49.6 | 411.7 | 850.2 | 1053.3 | 835.7 | 454.8 | 115.7 | 28.5 | 3 799.5 | 0.61 |
| եղևնի | 1983 | | | | | | 1 | | | 1 | 0.8 |
| | 2005 | | | 1.4 | 1.1 | 2 | 0.4 | | | 4.9 | 0.64 |
| գիհի | 1983 | 194 | 176 | 93 | 96 | | | | | 559 | 0.42 |
| | 2005 | 563 | 197.6 | 138.1 | 23.4 | | 5.5 | | | 927.6 | 0.37 |
| կաղնի | 1983 | 4 | 40 | 27 | 20 | 99 | 107 | | | 297 | 0.67 |
| | 2005 | 25.8 | 95.4 | 90.6 | 62.1 | 108.5 | 34.3 | | | 416.7 | 0.56 |
| հացենի | 1983 | | | 21 | 26 | 38 | 40 | 4 | | 129 | 0.69 |
| | 2005 | 7.8 | 39.6 | 94.1 | 7.5 | 4.5 | | | | 153.5 | 0.48 |
| թխկի | 1983 | | | | | | | | | 0 | |
| | 2005 | | 0.8 | 7.5 | 0.1 | | | | | 8.4 | 0.57 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| թեղի | 1983 | | 32 | 101 | 311 | 328 | 148 | 98 | | 1018 | 0.68 |
| | 2005 | 24.3 | 208.7 | 452.6 | 208.3 | 46.3 | 8.8 | 4.1 | 23.7 | 976.8 | 0.53 |
| սպիտակ ակացիա | 1983 | | | 4 | | 16 | 10 | 7 | | 37 | 0.74 |
| | 2005 | | 0.3 | 3.3 | | | | | | 3.6 | 0.49 |
| կեչի | 1983 | | | | | | | | | 0 | |
| | 2005 | | 2.8 | | 1 | | | | | 3.8 | 0.45 |
| բարդի | 1983 | | 39 | 342 | 510 | 1052 | 797 | 272 | 5 | 3017 | 0.7 |
| | 2005 | 53.9 | 206 | 573.2 | 702.7 | 988.5 | 124.8 | 37.4 | 1.9 | 2688.4 | 0.6 |
| ուռենի | 1983 | | 2 | 86 | 202 | 250 | 169 | 57 | | 766 | 0.69 |
| | 2005 | | 14.9 | 96.5 | 144.4 | 77.8 | 13.7 | 34 | | 381.3 | 0.62 |
| տանձենի | 1983 | | | | | | 2 | 5 | | 7 | 0.87 |
| | 2005 | | | 5 | 6.6 | | 1.3 | 2 | | 14.9 | 0.62 |
| խնձորենի | 1983 | | 1 | 3 | 9 | 1 | | | | 14 | 0.52 |
| | 2005 | | 0.2 | 8.1 | | | | | | 8.3 | 0.5 |
| դեղին ակացիա | 1983 | | 8 | 42 | 85 | 98 | 83 | 45 | 1 | 362 | 0.61 |
| | 2005 | | 117.4 | 240.4 | 225.1 | 120.8 | 76.2 | 17 | 3 | 799.9 | 0.69 |
| փշատենի | 1983 | 3 | 37 | 27 | 74 | 168 | 131 | 29 | | 469 | 0.58 |
| | 2005 | 14.7 | 39 | 23.5 | 78.2 | 45.6 | 11.9 | | | 212.9 | 0.56 |
| **ընդ. ծառեր** | **1983** | **210** | **349** | **869** | **1 778** | **2 794** | **2 300** | **964** | **74** | **9 291** | **0.62** |
| | **2005** | **739.1** | **1334.4** | **2584.5** | **2513.8** | **2229.7** | **731.7** | **210.2** | **57.1** | **10400.5** | **0.55** |
| թփանման ուռի | 1983 | | | 84 | 177 | 286 | 91 | 16 | | 654 | 0.57 |
| | 2005 | 9.7 | 28.9 | 58 | 135.5 | 98.1 | 16.3 | 18.8 | | 365.3 | 0.66 |
| չիչխան | 1983 | | 3 | 106 | 211 | 308 | 485 | 165 | 2 | 1 280 | 0.73 |
| | 2005 | 25.1 | 235.3 | 559.2 | 576.9 | 628.2 | 381.2 | 78.5 | | 2484.4 | 0.62 |
| **ընդամենը** | **1983** | | **3** | **190** | **388** | **594** | **576** | **181** | **2** | **1 934** | **0.65** |
| | **2005** | **34.8** | **264.2** | **617.2** | **712.4** | **726.3** | **397.5** | **97.3** | | **2849.7** | **0.64** |
| **ընդամենը** | **1983** | **210** | **352** | **1059** | **2166** | **3 388** | **2867** | **1145** | **76** | **11 255** | **0.57** |
| | **2005** | **773.9** | **1598.6** | **3236.7** | **3226.2** | **2 956** | **1129.2** | **307.5** | **57.1** | **13 250.2** | **0.56** |

Լրիվության նվազեցման միտումը առավել ցայտուն արտահայտված է սոճի, բարդի, թեղի, կաղնի ծառատեսակների ծառուտներում, որոնք առավել են շահագործվել բնակչության կողմից: Սոճուտների միջին լրիվությունը նվազել է 0,15-ով՝ 1983 թ. 0,76-ի փոխարեն ներկայումս կազմում է 0,61: Այս ցուցանիշը, Հայաստանի անտառների ներկայիս վիճակի համեմատությամբ, բավականին բարձր է: Ընդ որում՝ 599 հա-ում առկա են 0,8 և բարձր լրիվության տարբեր հասակային դասերին պատկանող սոճուտներ, որոնցում պետք է իրականացվեն խնամքի հատումներ: Վերջինս կարևորում է ծառուտների աճի և արդյունավետության բարձրացման, հիվանդությունների և վնասատուների կանխարգելման և հնարավոր հրդեհների տարածումը կանխելու տեսակետից: 1-ին բոնիտետային դասի ծառուտները զբաղեցնում են ընդհանուր անտառածածկ մակերեսի (չհաշված թփուտները) 12.2 %-ը, այնինչ 2-րդ դասը զբաղեցնում է 23.5 %, 3 դասը՝ 22.6 %, իսկ 4-ը և 5-ը՝ 41.7 % (աղյուսակ 13) (Քարտեզ 11):

**Աղյուսակ 13. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետի դասերի**

| ծառաթփա-տեսակներ | գնահատման տարին | բոնիտետի դասը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | ընդամենը |
| սոճի | 1983 | 26 | 1 048 | 1 243 | 327 | 1 | 2 645 |
| | 2005 | 109.3 | 930.7 | 822.4 | 1 937.1 | | 3 799.5 |
| եղևնի | 1983 | | | 1 | | | 1 |
| | 2005 | | 1.1 | 1.4 | 2.4 | | 4,9 |
| գիհի | 1983 | | | | | 559 | 559 |
| | 2005 | | | | | 927.6 | 927.6 |
| կաղնի | 1983 | | | | 8 | 289 | 297 |
| | 2005 | | | | | 416.7 | 416.7 |
| հացի | 1983 | 1 | 42 | 48 | 38 | | 129 |
| | 2005 | | 107 | 9.6 | 36.9 | | 153.5 |
| բոխի | 1983 | | | | | | 0 |
| | 2005 | | | 3.1 | 5.3 | | 8.4 |
| թեղի | 1983 | 6 | 218 | 532 | 274 | | 1 030 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2005 | 2.4 | 493.2 | 86.5 | 394.7 | | 976.8 |
| ակացիա սպիտակ | 1983 | | 19 | 6 | 12 | | 37 |
| | 2005 | | | | 3.6 | | 3.6 |
| կեչի | 1983 | | | | | | |
| | 2005 | 0.7 | 2.1 | | 1 | | 3.8 |
| բարդի | 1983 | 633 | 581 | 971 | 777 | 55 | 3 017 |
| | 2005 | 1163.2 | 730.3 | 336.9 | 458 | | 2 688.4 |
| ուռենի ծառանման | 1983 | 4 | 76 | 329 | 342 | 15 | 766 |
| | 2005 | | 171.5 | 103.5 | 106.3 | | 381.3 |
| տանձենի | 1983 | | | 2 | 5 | | 7 |
| | 2005 | | | 11.6 | 3.3 | | 14.9 |
| խնձորենի | 1983 | | | 1 | 13 | | 14 |
| | 2005 | | | | 8.3 | | 8.3 |
| փշատենի | 1983 | | 11 | 394 | 64 | | 469 |
| | 2005 | | | 200.1 | | 12.8 | 212.9 |
| ակացիա դեղին | 1983 | | 30 | 223 | 106 | 3 | 362 |
| | 2005 | | | 782.6 | | 17.3 | 799.9 |
| ընդամենը ծառեր | 1983 | 670 | 2025 | 3749 | 1966 | 922 | 9332 |
| | % | 7.2 | 21.7 | 40.2 | 21.1 | 9.8 | 100 |
| | 2005 | 1275.6 | 2435.9 | 2357.7 | 2956.9 | 1374.4 | 10400.5 |
| | % | 12.2 | 23.5 | 22.6 | 28.5 | 13.2 | 100 |
| ուռենի թփանման | 1983 | | 12 | 357 | 283 | 2 | 654 |
| | 2005 | | 178.9 | 137.9 | 48.5 | | 365.3 |
| չիչխան | 1983 | | 117 | 1 402 | 412 | 14 | 1 945 |
| | 2005 | | | 2376.6 | | 107.8 | 2484.4 |
| ընդամենը թփեր | 1983 | | 129 | 1 759 | 695 | 16 | 2 599 |
| | % | | 5 | 67.7 | 26.7 | 0.6 | 100 |
| | 2005 | | 178.9 | 2 514.5 | 48.5 | 107.8 | 2 849.7 |
| | % | | 6.3 | 88.2 | 1.7 | 3.8 | 100 |
| Ամբողջը | 1983 | 670 | 2 154 | 5 508 | 2 661 | 938 | 11 931 |
| | % | 5.6 | 18 | 46.2 | 22.3 | 7.9 | 100 |
| | 2005 | 1275.6 | 2 614.8 | 4 872.2 | 3 005.4 | 1 482.2 | 13 250.2 |
| | % | 9.7 | 19.7 | 36.8 | 22.6 | 11.2 | 100 |

### 7.4.2.3. Անտառածածկ մակերեսների և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի.

«Սևան» ազգային պարկում տարիքային խմբերից գերակշռում են երիտասարդ խմբի (I և II հասակային դասեր) ծառուտները, որոնք զբաղեցնում են ընդհանուր մակերեսի 55,5 %-ը և կազմում են պաշարի 33,3 %-ը (աղյուսակ 14, քարտեզ 12): Միջին տարիքային խմբի ծառուտները զբաղեցնում են ընդհանուր մակերեսի 39,3 %-ը և կազմում են պաշարի 58,7 %-ը, իսկ հասունացող և հասուն տարիքային խմբերը՝ համապատասխանաբար 3,3 % և 2,3 %-ը: Ոչ հավասարաչափ բաշխվածությունը (անտառագիտական տեսանկյունից՝ տարիքային խմբերի նորմալ բաշխվածությունը հավասարաչափ է 25-ական %-ի դեպքում) բացատրվում է նրանով, որ անտառածածկ մակերեսի 90 %-ը անտառմշակույթներ են՝ հիմնված 1950-ական թվականներից և տրամաբանորեն պետք է գերակշռի միջին տարիքային խումբը: Երիտասարդ տարիքային խմբի անտառների գերակշռությունը բացատրվում է հատված ծառուտների կոճղաշիվային եղանակով վերականգնմամբ: Ազգային պարկի անտառների ընդհանուր պաշարը կազմում է 540139 խմ, որը 102000 խմ-ով ավել է 1983թ. ընդհանուր պաշարից: Ընդհանուր պաշարում գերակշռում է բարդին՝ 53,8 %, սոճին՝ 23,7 %, և մնացած տեսակները միասին՝ 22,5 %:

«Սևան» ազգային պարկի Սևանի, Նորատուսի, Մարտունու և Վարդանիսի մասնաճյուղերի 2005 թվ. անտառգույքագրման տվյալները համապատասխան քարտեզագրական նյութերի հետ միասին Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ԾԻԳ-ը տրամադրել է ՀՀ Բնապահպանության նախարարությանը և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:

Աղյուսակ 14. Անտառածածկ տարածքների պաշարների բաշխումը ըստ տարիքային խմբերի (2005թ.- միայն հիմնական տեսակները)

| Տարիքային խմբեր | հա | ընդ-ի % | պաշարը 10մ$^3$ | ընդ-ի % |
|---|---|---|---|---|
| Երիտասարդ տարիքային խումբ (I-II հասակային դասեր) | 5207,6 | 55.5 | 16043 | 33.3 |
| Միջին տարիքային խումբ | 3692.4 | 39.3 | 28994 | 58.7 |
| Հասունացող տարիքային խումբ | 176.4 | 1.9 | 2816 | 5.7 |
| Հասուն և գերհասուն տարիքային խումբ | 311.3 | 3.3 | 1124 | 2.3 |
| **Ընդամենը** | 9387.7 | 100 | 49940 | 100 |

### 7.4.3. Սևանա լճի մակարդակի բարձրացման ազդեցությունն ազգային պարկի անտառածածկ տարածքների վրա

Առաջիկա տարիներին Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ զգալի անտառատարածքներ կհայտնվեն ջրում (Քարտեզ 13): Նախատեսվում է 30 տարվա ընթացքում լճի մակարդակը բարձրացնել 6 մետրով, մինչև ծովի մակարդակից 1903 մ, սակայն վերջին 2-3 տարիներին ջրի մակարդակը կանխատեսվածից ավելի է բարձրանում և զգալի անտառային մակերեսներ են հայտնվում ջրի տակ: Հետևաբար անհրաժեշտ է ձեռքնարկել համարժեք գործողություններ՝ կանխարգելելու ջրի որակի վատթարացումը: Ընդ որում՝ ջրի տակ մնացող անտառային տարածքների մակերեսը հաշվարկված է լճի մակարդակի մինչև 1903 մ բարձրության հաշվով:

2005-2006 թթ. ՀՀ կառավարությունը պետական բյուջեից հատկացրել է համապատասխան ֆինանսավորում, յուրաքանչյուր տարվա կտրվածքով, ջրի տակ հայտնված 215 հա անտառների մաքրման նպատակով, սակայն 2006 թ. հունիսին կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ևս 300 հեկտար անտառներ ներկայումս հայտնվել են ջրի տակ: Նշված հանգամանքը հաշվի է առնվել անտառային տարածքների գույքագրումն իրականացնելիս: Աղյուսակ 15-ում բերված են ազգային պարկի առանձին հողատեսքերի բաշխվածության տվյալները՝ ըստ ծովի մակարդակից բարձրության, հաշվի առնելով լճի մակարդակի նախատեսվող բարձրացման հետևանքով ջրում հայտնվելու հանգամանքը: Ներկայացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

- Լճի մակարդակի 1900 մ բարձրության նիշի դեպքում ջրի տակ կհայտնվի 1900,2 հա մակերես կամ ազգային պարկի ցամաքային մակերեսի 8,5 %-ը, որում ջրածածկ անտառածածկը կկազմի 1186,4 հա՝ 42940 խմ ընդհանուր պաշարով (ընդհանուր ջրածածկի 62,2 % կամ ազգային պարկի անտառածածկ տարածքի 10%-ը): Ջրի տակ կհայտնվեն նաև բացատները, որոնք ներկայումս օգտագործվում են խոտի կուտակման կամ ապօրինի արածեցման տակ, և զբաղեցնում են մոտ 346 հա տարածք կամ բացատների ընդհանուր մակերեսի 18 %-ը: Ջրածածկման ենթակա գերակշռող ծառաքփատեսակներն են՝ սոճի (156.3 հա - 4160 խմ), թեղի (31.5 հա-920 խմ), բարդի (375.8 հա-26960 խմ), ուռենի ծառանման (73.5 հա-2810 խմ), ուռենի թփանման (115.7 հա-2430 խմ), չիչխան (11.6 հա-120 խմ), փշատենի (395.8 հա-5320 խմ), դեղին ակացիա (26.2 հա-220 խմ), ընդամենը՝ 1186.4 հա - 42940 խմ:
- Ամբողջ ազգային պարկի հաշվարկով՝ 1903 մ նիշին հավասար լճի մակարդակի բարձրացման դեպքում ջրածածկ ամբողջ մակերեսը կկազմի 4628,5 հա (ազգային պարկի տարածքի 21 %-ը), այդ թվում՝ անտառները 3245,9 հա (ընդհանուր տարածքի 27%-ը):

Աղյուսակ 15. Ազգային պարկի տարածքների բաշխվածությունն ըստ հիմնական հողատեսքերի և ծովի մակարդակից բարձրության

| Մասնաճյուղեր | Ընդհանուր մակերեսը, հեկտար | Այդ թվում | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Անտառածածկ մակերեսը, հա | որից անտառմշակույթներ | Չմիակցված սաղարթով մշակույթներ | տնկարան և պլանտացիա | հրդեհված և մահացած տարածքներ | համատարած հատված և չվերականգնված տարածքներ | Բացատներ | Բնական նոսրուտներ | գյուղատնտեսական հողահանդակներ | այլ հողատեսքեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| Սևանի | 6765 | 1891,2 | 1856 | 12,3 | | | 8,7 | 2083,5 | 159,9 | 1017,7 | 2309,5 |
| | Մինչև 1900 մետր ԾՄԲ | | | | | | | | | | |
| | 460,8 | 172,9 | 172,9 | | | | | 86,5 | | 5 | 196,4 |
| | ԾՄԲ 1900-1903 մետր | | | | | | | | | | |
| | 711,8 | 442,8 | 437,9 | | | | | 205,5 | | 1,3 | 61,9 |
| Նորատուսի | 4237 | 2981,5 | 2976,6 | 7,3 | 4,1 | 33,4 | 22,2 | 491,6 | 4 | 58,8 | 692,9 |
| | Մինչև 1900 մետր ԾՄԲ | | | | | | | | | | |
| | 662,2 | 472,6 | 472,6 | | | 3,5 | 1,7 | 42,7 | | | 141,7 |
| | ԾՄԲ 1900-1903 մետր | | | | | | | | | | |
| | 795,3 | 605,5 | 600,6 | | | 6,5 | 16,7 | 136,1 | 4 | 2,3 | 26,5 |
| Մարտունու | 5122 | 4020,2 | 3981 | 69,1 | 17,9 | 54 | 0,8 | 741,4 | 0,6 | 114,4 | 212,5 |
| | Մինչև 1900 մետր ԾՄԲ | | | | | | | | | | |
| | 279,5 | 174,1 | 172,8 | | | | | 102,1 | | | 3,3 |
| | ԾՄԲ 1900-1903 մետր | | | | | | | | | | |
| | 571,7 | 441,8 | 441 | 0,7 | | | | 129,2 | | | |
| Վարդենիսի | 6268 | 3061 | 3061 | 8,7 | 6,9 | 28,4 | | 1672,3 | 139,6 | 202,4 | 360,2 |
| | Մինչև 1900 մետր ԾՄԲ | | | | | | | | | | |
| | 497,7 | 361,8 | 361,8 | 8,6 | | 1,9 | | 114,5 | | | 10,9 |
| | ԾՄԲ 1900-1903 մետր | | | | | | | | | | |
| | 649,5 | 574,4 | 574,4 | | | 11,5 | | 49,6 | | | 14,1 |
| Սևան ազգային պարկ | 22392 | 11953,9 | 11874,6 | 97,4 | 28,9 | 115,8 | 31,7 | 4988,8 | 304,1 | 1393,3 | 3575,1 |
| | Մինչև 1900 մետր ԾՄԲ | | | | | | | | | | |
| | 1900,2 | 1181,4 | 1180,1 | 8,6 | 0 | 5,4 | 1,7 | 345,8 | 0 | 5 | 352,3 |
| | ԾՄԲ 1900-1903 մետր | | | | | | | | | | |
| | 2728,3 | 2064,5 | 2053,9 | 0,7 | 0 | 18 | 16,7 | 520,4 | 4 | 3,6 | 102,5 |
| | ԾՄԲ 1898-1903 մետր | | | | | | | | | | |
| | 4628,5 | 3245,9 | 3234 | 9,3 | 0 | 23,4 | 18,4 | 866,2 | 4 | 8,6 | 454,8 |

Լճի մակարդակի նախատեսված բարձրացման դեպքում ջրածածկ անտառների ընդհանուր պաշարը կկազմի մոտ 175 հազար խմ, որից շինափայտային մասը՝ 16000 խմ, վառելափայտը՝ 7400 խմ և ջախը՝ մոտ 8500 խմ (ընդանուր պաշարի 48,5%-ը): Անտառագիտական տեսանկյունից՝ ջախի շատ բարձր տոկոսը բացատրվում է տեսակային կազմում թփերի բարձր տոկոսով (ջախ են համարվում 3 սմ տրամագծից ցածր ճյուղերը):

Ազգային պարկի առանձին մասնաճյուղերով դիտարկելիս, լճի մակարդակը մինչև 1900 մ մակարդակի բարձրացման դեպքում, ջրածածկ ընդհանուր և անտառածածկ մակերեսների տոկոսային բաշխվածությունը հետևյալն է՝ Սևանի մասնաճյուղ - ընդհանուր ջրածածկ տարածքը 24.2 % և անտառածածկի 14.6%, Նորատուսի մասնաճյուղ - համապատասխանաբար՝ 34,8 % և 40 %, Մարտունու մասնաճյուղ - 14.7 % և 14.8 %, Վարդենիսի մասնաճյուղ - 26,2 % և 30,6 %:

### 7.4.4. «Սևան» ազգային պարկի անտառային տարածքների կառավարման բարելավման գործողություններ

«Սևան» ազգային պարկի անտառային տարածքների գույքագրման արդյունքներից ելնելով, ինչպես նաև դրանց կառավարման գործընթացները բարելավելու նպատակով՝ անհրաժեշտ է իրականացնել մի շարք գործողություններ, որոնք վերաբերվում են ազգային պարկի տեղամասերի անտառային տվյալների բանկի, անտառզննահատման հատվածային նկարագրման թեմատիկ քարտեզների, գրքերի պատրաստմանն ու տպագրմանը, որպեսզի պարկի յուրաքանչյուր տեղամասային աշխատող հնարավորություն ունենա օգտվել անտառգույքագրման տվյալներից (Հավելված 1): Կարևոր նշանակություն ունեն անտառվերականգնման համալիր միջոցառումների նախագծերի պատրաստումը, ինչպես նաև 2007-2011 թվականներին լճի մակարդակի կանխատեսվող բարձրացման հաշվով տարիների կտրվածքով անտառապատ տարածքների քարտեզագրման, անտառնյութի հաշվառման և նախահաշիվների պատրաստման աշխատանքները: Անտառվերականգնման, անտառապատման աշխատանքների, ինչպես նաև ազգային պարկին լրացուցիչ եկամուտներ ապահովելու նպատակով անհրաժեշտ է նաև վերականգնել Մարտունու տնկարանային տնտեսությունը:

# Բ Ա Ժ Ի Ն  8. «Սևան» ազգային պարկում տուրիզմի և ռեկրեացիայի առանձնահատկությունները և դրանց կարգավորման ուղիներն ու գործողությունների պլանը

## 8.1. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բնական ու մշակութային առանձնահատկությունները

### 8.1.1. Առողջարարական պաշարներ

«Սևան» ազգային պարկի առողջարարական պաշարներն են՝ Սևանա լճի ավազանի բարձր լեռնային կլիման, լեռնային մաքուր օդը, օպտիմալ ջերմաստիճանները, խոնավությունը, արևաշատությունը, ինտենսիվ ուլտրամանուշակագույն ճառագայթումը, հանքային բուժիչ ջրերը, գեղատեսիլ լանդշաֆտները: Սևանա լճի բալնեոլոգիական ռեսուրսները հիմնականում կենտրոնացած են արևմտյան և հարավային ափամերձ տարածքներում՝ Գավառ, Մարտունի բնակավայրերի շրջակայքում: Հանքային ջրերը՝ «Լիճքը» և «Սևանը» բուժիչ են աղեստամոքսային տրակտի բուժման համար: Մարտունի, Ձոլաքար, Ծովինար բնակավայրերի մոտ կան տորֆի հանքավայրեր: Լիճք–Մարտունի, Գավառ– Նորատուսի և Վարդենիսի հատվածներում, հաշվի առնելով բնական բուժիչ պաշարների առկայությունը (հանքային ջուր, ցեխ և տորֆ), կարելի է զարգացնել շուրջտարյա գործունեությամբ առողջարանային համալիրներ:

### 8.1.2. Բնական և մշակութային ժառանգություն

Բնական ժառանգության, որպես տուրիզմի և ռեկրեացիայի ռեսուրս, անկրկնելի օբյեկտներ են հանդիսանում Սևանա լիճը, դրա լողափերը, Սևանի և Արտանիշի թերակղզիները, ճայերի կղզին, ռելիկտային գիհու նոսրանտառները և կաղնու մնացորդային անտառները, Սևանա լճի ավազանը գոտևորող Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթաները:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվառված է պատմության և մշակույթի 1489 անշարժ հուշարձան (ներառյալ բնական հուշարձանները), այդ թվում՝ 4 բնական հուշարձան, 5 քարե դարի բնակատեղի, 19 քարայր կացարան, 1 քաղաքատեղի, 31 բնակատեղի, 94 գյուղատեղի, 8 ազգագրական տուն, 78 ամրոց, 2 աշտարակ, 6 կամուրջ, 2 քարավանատուն, 9 ջրաղացների համալիր և 17 առանձին ջրաղաց, 11 ձիթհան, 3 ջրանցք և ջրաբաշխական համակարգ, 2 ժայռապատկերների խումբ, 3 սեպագիր արձանագրություն, 1 ժայռակերտ պաշտամունքային համալիր, 135 եկեղեցի, 8 վանական համալիր, 89 մատուռ, 5 վիշապ-քարակոթող, 1 մենհիր, 6 կոթող, 279 խաչքարերի խումբ, 159 առանձին խաչքար, 2 հուշաղբյուր-կոթող, 25 Երկրորդ աշխարհամարտին նվիրված հուշարձան, 2 անվանի գործիչներին նվիրված հուշարձան, 107 դամբարանադաշտ, 14 առանձին պահպանված դամբարան, 252 գերեզմանոց, 71 տապանաքարերի խումբ, 33 առանձին պահպանված տապանաքար (Քարտեզ 14):

Հուշարձանների ժամանակային բազմազանությունն ընդգրկում է մ.թ.ա. 15-րդ հազարամյակից մինչև մ.թ. 20-րդ դարը ընկած ժամանակահատվածը: Սևանա լճի ավազանում դրանք անհավասարաչափ են տեղաբաշխված, սակայն իրենց խտությամբ առանձնանում են լճի արևմտյան, հարավ-արևմտյան և առավելապես հարավային հատվածները՝ հաճախ կազմելով տարաժամանակ ու տարաբնույթ հուշարձաններից բաղկացած համալիրներ: «Սևան» ազգային պարկի բուն տարածքում տեղաբաշխված են թվարկված հուշարձանների մոտ 15 %-ը (103 հուշարձան), ինչը իհարկե երթուղիներ կազմելիս որոշիչ գործոն չի հանդիսացել և չի դրվել տուրիզմի նպատակներով օգտագործվող հուշարձանների ընտրության հիմքում:

Ներկայացված հնագիտական և պատմամշակութային հուշարձանների զգալի մասը կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի զարգացման պատմական ընթացքում և դրանց առկայությունը հնարավորություն է տալիս այստեղ կազմակերպել պատմա-

մշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և տուրիզմի այլ ձևեր: Բնական և մշակութային հուշարձանների ցանկը, որոնք գույագրվել են և առաջարկվել տուրիզմի զարգացման համար, բերված է Հավելված 2-ում: Հարկ է նշել, որ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվառված բնական և մշակութային ժառանգության բոլոր օբյեկտների տեղադրությունն ու նկարագրությունները առանձին հաշվետվությամբ տրամադրվել են ՀՀ Բնապահպանության նախարարությանը և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:

## 8.2. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեությունը տուրիզմի և ռեկրեացիայի կազմակերպման բնագավառում

Չնայած «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված են տուրիզմին և ռեկրեացիային վերաբերող համապատասխան գործառույթներ, սակայն կառավարման տեսակետից դրանք դեռևս գործնական բնույթ չունեն: Ներկայումս «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը չի կատարում տուրիզմի և ռեկրեացիոն սպասարկման որևէ գործառնություն: Տուրիստական և, հատկապես, ռեկրեացիոն նշանակության տարածքների զգալի մասը պայմանագրային հիմունքներով տրված են առանձին վարձակալների և ազգային պարկի դերը սահմանափակվում է միայն վարձակալության գործընթացի կառավարմամբ:

## 8.3. Տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության գնահատականը «Սևան» ազգային պարկի տարածքում

«Սևան» ազգային պարկի տարածքում տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության ուսումնասիրությունները կատարվել են 2005 թվ. հունիս-հոկտեմբեր ամիսներին (մանրամասն հաշվետվությունը տրամադրվել է ՀՀ Բնապահպանության նախարարությանը և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին):

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմին և ռեկրեացիային առնչվող գործունեություն են ծավալում հիմնականում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ, որոնք գործում են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ պայմանագրային հիմունքներով: Այստեղ ընդհանրապես բացակայում է ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու առանձնահատկությունների խորը գիտակցումը: Շատերը դիտում են իրենց վարձակալած տարածքները որպես բացարձակ սեփականություն: Ռեկրեացիայի բնագավառում զբաղվածների գերակշռող մասը տեղացիներ են, որոնք գրեթե չեն համագործակցում համայնքների հետ: Ենթակառուցվածքների մեծ մասը սեզոնային բնույթի են, որի պատճառով այդ կազմակերպությունները խուսափում են լայնածավալ ներդրումներից: Ըստ այդ կազմակերպությունների պատասխանատու անձանց՝ տուրիզմին խանգարող հիմնական գործոններն են՝ բնակչության սոցիալական վատ վիճակը, ծառայությունների ցածր որակը, ծառայությունների չհիմնավորված բարձր արժեքը, կլիման, տուրիզմի սեզոնայնությունը, ինչպես նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների անբավարար մակարդակը: Հանգստի համար նախատեսված շատ տարածքներում տեղադրված են աղետի գոտու մնացորդ՝ բազմատեսակ խայտաբղետ տնակներ, որոնք ծառայում են որպես հասարակական սննդի օբյեկտներ, երբեմն նաև հյուրանոցային նպատակներով: Այդ տնակները իրենց ուղղակի նշանակությամբ նախատեսված են կառուցվող օբյեկտների շինհրապարակներում, որպես ժամանակավոր կառույցներ: Դրանց գերակշռող մասը արտաքին տեսքով և ներքին հարդարումով ու կահավորանքով չեն համապատասխանում հանգստի կազմակերպման պահանջներին:

Ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տվել, որ այստեղ մարկետինգային մեթոդները թերի են զարգացած և հիմնականում կրում են բանավոր խոսքի բնույթ: Որոշ հյուրանոցների գովազդը տեղադրված է տարբեր վերկայքերում

(օրինակ՝ Հայաստանի տեղեկատվություն կայքում), սակայն ոչ իրենց սեփական նախաձեռնությամբ:

Կլիմայական պայմանների, ծառայությունների որակի, գոյություն ունեցող ենթակառուցվածքների որակի և այլ գործոնների շնորհիվ այստեղ գերակայում են հայ տուրիստները: Արտասահմանցի այցելուները կազմում են ընդհանուր հոսքի չնչին մասը, այն էլ մեկ-երկու ժամ տևողությամբ, ինչը զգալիորեն նվազեցնում է հնարավոր եկամտի ծավալները: Այցելուների առավել մեծ ծանրաբեռնվածություն նկատվում է օգոստոս ամսին, ընդ որում՝ 1 մարդ/օրվա համար սպասարկման միջին գինը կազմում է սկսած 4000 դրամ տնակի համար, մինչև 100000 դրամ՝ հյուրանոցային երկտեղանոց համարի համար: Տուրիզմի տեսակետից զարգացած են «Սևան» ազգային պարկի հյուսիսային հատվածները, որով զբաղված կազմակերպությունների տեխնիկական կարողությունները հիմնականում անբավարար են, իսկ առկա միջոցները բնակչության մեծամասնության համար մատչելի չեն: Գավառում, Մարտունիում, Վարդենիսում, և Ճամբարակում տուրիստների համար նախատեսված գործող մշտական կամ ժամանակավոր կառույցներ գրեթե չկան, իսկ գոյություն ունեցողների զգալի մասը չեն գործում: Գործնականում բացակայում են բոլոր տեսակի ժամանակակից ենթակառուցվածքները: Ինչ վերաբերվում է ռեկրեացիային, ապա այն սահմանափակվում է խնջույքներ կազմակերպելով:

Վատ վիճակում են գտնվում Սևանա լճի հյուսիս-արևելյան հատվածի ճանապարհները՝ Արտանիշի թերակղզուց դեպի Վարդենիս: Գոյություն ունեն նաև բազմաթիվ անկառավարելի, ապօրինի ասֆալտապատ ճանապարհներ, որոնք տանում են դեպի ռեկրեացիայի համար նախատեսված տարածքներ:

Չնայած այցելուները ազատ տեղաշարժվում են ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներով, սակայն բացակայում է հետիոտն արահետների կանոնավոր ցանցը, ինչը խոչընդոտում է այցելուների հանգստի կազմակերպմանը: Արահետների բացակայությունը խոչընդոտում է նաև էկոտուրիզմի տարբեր ձևերի զարգացմանը, մասնավորապես՝ բնության դիտարկումների, հետիոտն և հեծյալ արշավների կազմակերպմանը:

Շատ տարածքների սանիտարահիգիենիկ վիճակը պայմանավորված է սեզոնային հանգստացողների կողմից կենցաղային աղբով ափտոտմամբ կամ տեխնածին բնույթի թափոնների առկայությամբ: Խմելու ջրի մատակարարումը հանգստի համար նախատեսված տարածքների մեծ մասում բավարար է և կատարվում է տարբեր աղբյուրներից (Հացառատի աղբյուրներից, Չկնագետի ակունքներից)՝ ջրատարերի և պոմպակայանների միջոցով: Որոշ տարածքներ, բնական աղբյուրների բացակայության պատճառով, սակավաջուր են, կամ ջրամատակարարումը չի բավարարում խմելու ջրի որակին ներկայացվող պահանջներին: Մի քանի հաշված օբյեկտներում ջրատաքացման համար կիրառվում է արևի էներգիան:

## 8.4. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի զարգացման ձևերը և երթուղիները

### 8.4.1. Տուրիզմի զարգացման ձևերը

«Սևան» ազգային պարկի տարածքում տուրիզմի զարգացման ձևերը կարելի է բաժանել 2 հիմնական տիպերի՝ նեղ մասնագիտացված և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող: Նեղ մասնագիտացված ձևերը կարող են լինել ինչպես դասական տուրիստական ուղղությունների, այնպես էլ հետազոտական արշավախմբերի տեսքով: Դրանց շարքին են դասվում՝

- վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկման (wildlife watching), օրինակ՝ թռչնադիտական (birdwatching), բուսաբանական.
- գեոէկոլոգիական, հնագիտական, ճարտարապետական, ազգագրական և այլ տուրերը:

«Սևան» ազգային պարկը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես թռչունների դիտարկման տեսանկյունից: Հիմնական գրավչությունը Ճայերի կղզում գոյություն ունեցող հայկական որորի պոպուլյացիան է: Ափամերձ տարածքներում

բնակվող վայրի թռչունները հակված են փոխելու իրենց բնադրավայրերը: Արտասահմանյան թռչնադիտողների համար հետաքրքրություն են ներկայացնում ազգային պարկի հետևյալ տարածքները՝ Լճաշեն գյուղին հարակից լճի ծովախորշը, Նորատուսի հրվանդանը, Լիճք արգելոցային գոտում գտնվող լճակը, Մասրիկի գետաբերանը, Գիլլի լճի նախկին տարածքը, Արեգունու լեռնաշղթայի լանջերը: Բացի նշվածից, հարկ է նշել, որ ազգային պարկին հարակից համայնքներում առկա է ագրո-տուրիզմի զարգացման զգալի ներուժ: Ընդ որում՝ ագրո-տուրիզմը կարելի է համատեղել տուրիզմի այլ ձևերի հետ, ինչպիսիք են՝ հետիոտն, հեծյալ (ձիերով և ավանակներով), ավտոմեքենաներով տուրերը, պատմա-մշակութային տուրերը, սիրողական ձկնորսությունը և այլն:

### 8.4.2. Էկոտուրիզմ

Էկոտուրիզմը բնությանն ուղղված տուրիզմի ձև է, որը չունի բացասական ազդեցություն բնական միջավայրի կամ լանդշաֆտի վրա և օժանդակում է բնության պահպանությանն ու տեղացի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

«Սևան» ազգային պարկի տարածքում էկոտուրիզմը ներկայումս իր նախնական զարգացման փուլում է՝ առաջարկվում են միայն էկոտուրեր, թեմատիկ տուրեր, որոշ դեպքերում վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկում և լանդշաֆտների լուսանկարչություն: Հաշվի առնելով այն փաստը, որ ազգային պարկի լանդշաֆտները, կենսաբազմազանությունը և ջրային ռեսուրսները սերտ փոխկապակցված են՝ տնտեսական, գեղագիտական և ռեկրեացիոն տեսանկյունից հնարավոր է կազմակերպել էկոտուրիզմի հետևյալ տեսակները.

- թեմատիկ էկոլոգիական երթուղիներ՝ կենտրոնացած վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկմանը.
- բնական և մշակութային ժառանգության վերաբերյալ գիտելիքների հարստացման ուսուցողական տուրեր.
- հետիոտն, հեծանիվով կամ հեծյալ տուրեր՝ բնական լանդշաֆտների հազվագյուտ և էնդեմիկ կենսաբազմազանությամբ տարածքները դիտարկելու համար.
- գիտա-ճանաչողական տուրեր արգելոցային գոտիների տարածքներում.
- արկածային տուրեր լեռների ջրբաժաններով.
- լանդշաֆտի ֆոտոտուրեր:

### 8.4.3. Տուրիստական երթուղիներ

Հետազոտությունների արդյունքում և GPS համակարգի օգնությամբ ստորև բերված մի քանի տուրիստական երթուղիների համար հավաքագրվել են ճշգրիտ տվյալներ, որոնք մուտքագրվել են երկրատեղեկատվական համակարգ - GIS (Քարտեզ 15): Առաջարկվող երթուղիներն են՝

- Չկալովկա և Լճաշեն գյուղերի մոտակայքի «Քարե ծով»՝ չինգիլներ.
- Սարուխան գյուղ - Գռի ձոր.
- Սևան-Դիլիջան հին մայրուղու հատվածի երկայնքով (Ախթամար ռեստորանից մինչև թերակղզի).
- երթուղի, որը կապում է «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի տարածքները:

«Սևան» ազգային պարկում տուրիստական երթուղիները կարող են ընդգրկել նաև պարկի արգելոցային գոտիները, Սևանա լճի ավազանը գոտևորող լեռնաշղթաները, մասնավորապես՝ Գեղամա հրաբխային բարձրավանդակը, Սելիմի լեռնանցքը:

## 8.5. Տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներին սպառնացող վտանգները

«Սևան» ազգային պարկի տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներին սպառնացող վտանգները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Սևանա լճի մակարդակի բարձրացումը - վտանգված են բոլոր ռեկրեացիոն տարածքները: Գործող լողափերում տաղավարների և այլ կառույցների հատակը արդեն իսկ ծածկվում է ջրով և անհրաժեշտություն է առաջացել դրանք տեղափոխել: Խորհրդային տարիներից մնացած անավարտ շինարարական մի շարք օբյեկտներ, հատկապես լճի հյուսիսային հատվածում, առաջնահերթ ապամոնտաժման և տեղահանման կարիք ունեն: Ջրի տակ հայտնված ծառերի և թփերի փտումից առաջացած օրգանական նյութերը կնպաստեն լճի հետագա էվտրոֆացմանը՝ բացասական բոլոր հետևանքներով: Բնադրավայրերի և կերի կորուստը կնպաստի թռչունների թվաքանակի և տեսակային կազմի կրճատմանը:
2. շրջակա միջավայրի աղտոտում - գրեթե ամենուրեք ջրային և ցամաքային տարածքներն աղտոտվում են կենցաղային աղբով, կեխտաջրերով: Աղբի հավաքման, տեղադրման և վնասազերծման համակարգը գործում է պարզունակ մեթոդով, որը չի կարող կանխարգելել շրջակա տարածքների հետագա աղտոտումը և համաճարակային հիվանդությունների բռնկումը: Սևանա լիճը սնող գետերի ցանցը որևէ կերպ չի վերահսկվում: Բացակայում են գետերի երկարությամբ տեղակայված ջրամաքրման կայանները:
3. Չպլանավորված կառուցապատում - տուրիստական և ռեկրեացիոն ենթակառուցվածքների շինարարության ժամանակ նախապատվությունը տրվում է ազգային պարկի գեղագիտական տեսանկյունից գրավիչ տարածքներին, և քչերն են ներդաշնակորեն համաձուլվում շրջակա լանդշաֆտին: Այդ կառույցների հարևանությամբ կան նաև կիսակառույց և լքված շինություններ, որոնք վնասում են ազգային պարկի լանդշաֆտների գեղագիտական որակները: Ընդհանրապես «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու էկոհամակարգերի օգտագործումը հիմնականում ընթացել է տարերայնորեն, լանդշաֆտների տարածագործառնական ոչ ճիշտ պլանավորման պայմաններում: Արդյունքում Սևանա լճի էկոհամակարգը հայտնվել է էկոլոգիապես անբարենպաստ վիճակում: Բնական պաշարների անկանոն օգտագործումը ոչ միայն բացասական ազդեցություն է թողնում պարկի լանդշաֆտների, էկոհամակարգերի և բնական ռեսուրսների վրա, այլև բացասական պայմաններ է ստեղծում տուրիզմի և ռեկրեացիայի համար, որոնց արդյունավետ և երկարատև զարգացման համար պահանջվում է առողջ և գրավիչ բնական միջավայր:
4. Հողասահքեր - Գեղարքունիքի մարզի տարածքում այսօր հայտնի են մանր և խոշոր մակերես ունեցող 284 սողանքներ և փլվածքներ, որոնք զբաղեցնում են 3975 հա ընդհանուր մակերես: Դրանք հիմնականում տարածվում են լճի հյուսիսային և հարավ-արևելյան հատվածներում, և հատկապես՝ արևելյան: Դրանցից ակտիվ են 55-ը (19, 4 %): Ամենախոշոր և ակտիվ սողանքային գոտիները տարածված են Արտանիշ, Արեգունի և Վերին Շորժա գյուղերի շրջակայքում: Սողանքային և փլվածքային գոտիների վրա կամ դրանց անմիջական հարևանությամբ հաշվառվել են, ընդհանուր առմամբ, 23 հուշարձան (հուշարձանների 1,5 %-ը), այդ թվում՝ 2 բնակատեղի, 8 գյուղատեղի, 1 ամրոց, 1 կամուրջ, 1 ջրաղացների համալիր, 2 դամբարանադաշտ, 1 գերեզմանոց, 1 խաչքարերի խումբ, 6 առանձին խաչքար:

Բերված վիճակագրական պատկերը ցույց է տալիս, որ արտածին երկրաբանական պրոցեսները թեև ունեն որոշակի ազդեցություն անշարժ հուշարձանների վրա, սակայն տուրիստական ներուժի գնահատման և հուշարձանների՝ որպես զբոսաշրջության օբյեկտի, ընտրության տեսանկյունից այն չնչին է: Արտածին երկրաբանական պրոցեսները կարող են որոշակի ազդեցություն ունենալ միայն հուշարձանների մատչելիության (դեպի հուշարձան տանող ճանապարհի) վրա դրանց անմիջական հարևանությամբ տուրիստական կամ ուսումնա-ճանաչողական բազաներ կառուցելու նպատակ առաջանալու դեպքում:

## 8.6. «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության կանոնակարգման գործողություններ

Տուրիզմի և ռեկրեացիայի բնագավառում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարողությունները հզորացնելու համար անհրաժեշտ է դրա կառուցվածքում ստեղծել տուրիզմի և ռեկրեացիայի պլանավորման բաժին, բաղկացած 3 աշխատակցից, որոնցից մեկը պետք է տիրապետի անգլերեն լեզվին և ունենա համակարգչով աշխատելու հմտություններ (տես նաև՝ սույն կառավարման պլանի 5.1. կետը): Տուրիզմով և ռեկրեացիայով զբաղվող անձնակազմը պետք է ունենա գործողությունների լայն շրջանակ՝ տիրապետելով հետևյալ կարողություններին՝ հասկանա այցելուների կարիքներն ու ցանկությունները, մատուցի բարձրակարգ ծառայություններ՝ բացատրելու, մեկնաբանելու և ինտերպրետացիայի առումով, ունենա մարկետինգի և գովազդի ունակություններ, օժտված լինի տուրիզմի և ռեկրեացիայի կառավարման ու էկոնոմիկայի գիտելիքներով: Ազգային պարկի կառուցվածքում կարևոր տեղ պետք է հատկացվի Այցելուների կենտրոնին (տես նաև՝ սույն կառավարման պլանի 5.1. կետը): Այս նպատակով «Սևան» ազգային պարկի կենտրոնական և մասնաճյուղերի գրասենյակների շենքերը Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում վերանորոգվել են, կառուցվել են նաև նոր շենքեր, որոնցում կարելի է կազմակերպել այցելուների կենտրոններ: Այցելուների կենտրոնները պետք է համատեղեն տեղեկատվական և ինտերպրետիվ գործառնություններ: Դրա համար կենտրոնները պետք է համալրվեն համապատասխան նյութատեխնիկական բազայով: Պետք է ստեղծել սպասարկման ծառայություններին վերաբերող տվյալների բազա:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից տուրիզմի և ռեկրեացիայի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման համար անհրաժեշտ է մշակել մոնիտորինգային ծրագիր (Հավելված 1): Պահպանվող տարածքներում գոյություն ունեն տուրիզմի և ռեկրեացիայի մոնիտորինգի երկու հիմնական ասպեկտներ.

- այցելուների ազդեցության մոնիտորինգ,
- սպասարկման որակի մոնիտորինգ:

Հարկ է նշել, որ այցելուների և նրանց տեղաբաշխման գրանցումը ազգային պարկի տարածքում կարևոր ցուցանիշներ են շրջակա միջավայրի վրա այցելուների բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: Կարևոր է ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են՝

- դեպի տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներ տանող ճանապարհների բարեկարգումը.
- տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներում ավտոկայանատեղերի կազմակերպումը.
- լքված և ավերված կառույցների ապամոնտաժումը և հեռացումը.
- տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներում կենցաղային աղբի հավաքման կետերի տեղադրումը և աղբահանության կազմակերպումը.
- տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներ տանող ճանապարհներին բազմալեզու ցուցանակների և ուղեցույցների, ինչպես նաև այդ տարածքներում այցելուների վարքագիծը բացատրող բազմալեզու ցուցանակների տեղադրումը և այլն:

Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացման տեսանկյունից «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը պետք է կազմակերպի ազգային պարկի կենսաբազմազանության, լանդշաֆտի և բնության ու մշակութային ժառանգության բացահայտմանն ու ըմբռնմանը նվիրված ուսուցողական/դիտողական տուրեր: Որպեսզի «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը կարողանա այցելուներ ընդունել, առաջարկվում է դրա նախապատրաստման համար կիրառել հաղորդակցության ինտերպրետացիոն միջոցը (ՀԻՄ): Դրա կիրառումը հնարավորություն է տալիս այցելուներին ստանդարտիզացված տեղեկատվական համակարգի միջոցով անմիջապես տեղում ծանոթանալ ազգային պարկի բնական և

մշակութային ժառանգությանը՝ նշագրված կամ ազատ երթուղիների, բուկլետների, նկարների կամ պատկերների միջոցով: Հարմարավետ տեղադրված ցուցանակների օգնությամբ կարելի է այցելուներին տեղեկացնել ազգային պարկում վարքագծի կանոններին, նախազգուշացնել վտանգի մասին և այլն:

Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից գովազդային և մարկետինգային գործունեության իրականացումը: Այս բնագավառում շահավետ է սերտ համագործակցել մասնավոր տուրիստական սեկտորի հետ: Մարկետինգային ռազմավարությունը պետք է ընդգրկի հետևյալ բաղադրիչները՝

- այցելուների նպատակային խմբերի բացահայտում.
- գովազդային նյութերի ստեղծում և տարածում, այդ թվում՝ ինտերնետի միջոցով (Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար ստեղծվել է վեբկայք).
- մասնակցություն տուրիստական միջոցառումներին.
- հարցումների և դիմումների սպասարկում:

Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացմանը նպաստող կարևոր խնդիրներից է նաև տեղեկատվական նյութերի պատրաստումը և տպագրությունը: Ընդ որում՝ դրանք պետք է լայնորեն լուսաբանեն «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքների բնական և մշակութային ժառանգությունը, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառույթները, պարկի արգելոցային ու ռեկրեացիոն գոտիները, հազվագյուտ և Կարմիր գրքում գրանցված բուսական ու կենդանական տեսակները: Տեղեկատվական նյութերը պետք է լինեն գունավոր տպագրությամբ և բազմալեզու (Հավելված 1):

# ԲԱԺԻՆ 9. «Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման և իրականացման գործողությունների պլանը

«Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման հիմնական նպատակն է կանխատեսել բնական ու մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը և կառավարման անհրաժեշտ միջամտությունների միջոցով նպաստել լանդշաֆտների, բնական միջավայրերի և տեսակների պահպանության բարելավմանը: Ընդ որում՝ էկոհամակարգերի վիճակի փոփոխման կանխատեսման հիմնական մեթոդը պետք է լինի դրանց վիճակի մշտական և պարբերական դիտարկումների տվյալների մշակումը: Տեղավայրի կտրուկ փոփոխման դեպքում (անտառահատում, հողային և շինարարական աշխատանքների անցկացում, հողերի վարում և այլն) կանխատեսումը բարդանում է հնարավոր հետևանքների բազմատարբերակությամբ, սակայն միանգամայն պարզ է, որ նման գործողությունների հիմնական արդյունքը կլինի բնական էկոհամակարգերի դեգրադացիան: Հիմնավոր կանխատեսում կազմելու համար անհրաժեշտ է տվյալներ ստանալ մշտական փորձնական հրապարակներից և տրանսեկտներից: Մարդածին գործոնի ընդհանուր ազդեցության գնահատման համար փորձնական հրապարակները (դրանց չափսերը որոշվում են ստանդարտ մեթոդիկայի համաձայն՝ անտառային էկոհամակարգերում 400 մ$^2$ ոչ պակաս, տափաստանային և մարգագետնային էկոհամակարգերում 100 մ$^2$) պետք է վերցվեն էտալոնային տարածքներում և առավել խոցելի հատվածներում: Ընդ որում՝ ցանկալի է ընդգրկել միկրոէկոլոգիական պայմանների հնարավորին չափով մեծ բազմազանություն: Տրանսեկտները պետք է դրվեն բարենպաստ պայմաններում (հաշվի առնելով այս մեթոդի մեծ աշխատատարությունը՝ այն կարելի է կիրառել ազգային պարկի հնարավորություններից ելնելով) հիմնականում կլիմայի փոփոխությունների բնական էկոհամակարգերի վրա ազդեցության գնահատման համար: Ռեկրեացիոն տրորման ազդեցության, ինչպես նաև արածեցման և ինվազիվ ու էքսպանսիվ խոտաբույսերի պոպուլյացիաների խտության փոփոխման գնահատման համար փորձնական հրապարակները կարող են ունենալ 1 մ$^2$ չափս: Ինվազիվ և էքսպանսիվ ծառատեսակների դեպքում փորձնական հրապարակների տարածքը պետք է լինի 100 մ$^2$–ից ոչ պակաս: Միայն բազմամյա պարբերական դիտարկումների արդյունքում կարելի է ճշգրտության և հավանականության բարձր աստիճանով կանխատեսումներ անել էկոհամակարգերի փոփոխման վերաբերյալ:

«Սևան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի խնդիրներն են.

- բացահայտել կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը.
- բացահայտել յուրաքանչյուր էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը.
- գնահատել և կանխատեսել էկոհամակարգերի բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունների ընթացքը.
- ապահովել ազգային պարկի ղեկավարությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ կառավարչական որոշումների կայացման համար.
- նպաստել կենսապաշարների օգտագործման նորմավորման հիմնավորմանը՝ ըստ ծավալների և ժամկետների.
- նպաստել պարկի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծմանը և տեղեկատվական համակարգի անխափան աշխատանքին:

Պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի օբյեկտներն են.

1. բուսական ու կենդանական տեսակները (այդ թվում՝ էնդեմիկներ, ռելիկտներ, Կարմիր գրքում ընդգրկված, հազվագյուտ և անհետացող, ինչպես նաև տնտեսապես արժեքավոր տեսակներ և այլն) և դրանց պոպուլյացիաներն ու համակեցությունները, ինչպես նաև համակեցությունների գերիշխող (դոմինանտ) տեսակները.

2. բուսական և կենդանական տեսակների աճելավայրերը, բնադրավայրերը, միգրացիոն ուղիները, տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերը:

Հաշվի առնելով, որ բնական միջավայրի մոնիտորինգի արդյունքների օգտագործումը թույլ է տալիս ընդունել անմիջական կառավարչական որոշումներ, կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրումը ազգային պարկում կնպաստի պարկի կառավարման արդյունավետության բարձրացմանը, կենսաբազմազանության վիճակի բարելավմանը, ինչպես նաև Հայաստանի բնության մասին գիտելիքների տարածմանը: «Սևան» ազգային պարկում որպես մոնիտորինգի ինդիկատորներ ընտրվել են հետևյալ էկոհամակարգերը և բույսերի ու կենդանիների առանձին տեսակները (էնդեմիկ, հազվագյուտ, ինվազիվ և էքսպանսիվ):

1. <u>Էկոհամակարգեր.</u>
   - Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի լճային, գետային և ջրաճահճային էկոհամակարգեր.
   - գիհու նոսրանտառներ (արգելոցային և պահպանական գոտիներ).
   - լեռնային տափաստաններ, ենթալպյան և ալպյան մարգագետիններ (պահպանական գոտի).
   - բնական անտառային էկոհամակարգեր (կաղնու մնացորդային անտառներ).
   - ջրից ազատված առափնյա գրունտեր (արհեստական անտառտնկարկներ, առավել ծանրաբեռնված մարդածին ազդեցության տակ գտնվող ռեկրեացիոն տարածքներ, ապագայում ջրածածկման ենթակա տարածքներ):
2. <u>Բուսական օբյեկտներ.</u>
   - Էնդեմիկ տեսակներ՝ խոզանափուշ Ֆյոդորովի (Cousinia fedorovii), գազ երկնագույն (Astragalus coelestis), ոզնաթուփ Գաբրիելյանի (Acantholimon gabrielianae), սինձ հերկի (Tragopogon segetus).
   - հազվագյուտ և Կարմիր գրքում գրանցված տեսակներ՝ պրանգոս բերդաքումբ (Prangos arcis-romanae), պատատուկ Կալվերի (Convolvulus calvertii), կուժկոտրուկ վոլգիական (Adonis wolgensis), գիհի սաբինա (Juniperus sabina), ողկուզապտեր լուսնանման (Botrychium lunaria), վիշապագլուխ ավստրիական (Dracocephalum austriacum), զանգակ կովկասյան (Campanula caucasica), պապլոր դժգույն (Muscari pallens).
   - էքսպանսիվ տեսակներ՝ եռակողասերմիկ անդրկովկասյան (Tripleurospermum transcaucasicum), կտուցախոտ արևելյան (Rhynchocorys orientalis), իշակաթնուկ Սեգիերի (Euphorbia seguieriana ), կեղծ դանձլամեր սպիտակ (Veratrum album).
   - ինվազիվ տեսակներ՝ կարդարիա Բուասյեի (Cardaria boissieri), տատասկ ալեհեր (Cirsium incanum), դառնուկ իտալական (Xanthium italicum), տատաշ փռվող (Tribulus terrestris):
3. <u>Կենդանական օբյեկտներ.</u>
   - Փոնցաշերտի և հողի մակերեսին ապրող անողնաշարավորներ (միջատներ, բազմոտանիներ).
   - միջատներ (ցերեկային թիթեռներ, Dorcadion ցեղի երկարաբեղիկ բզեզներ, ճպուռներ).
   - երկկենցաղներ (ծառագորտ, լճագորտ),
   - սողուններ.
   - էնդեմիկ ձկներ՝ Սևանի իշխան (Salmo ischchan), Սևանի բեղլու (Barbus goktschaicus), Սևանի կողակ (Varicorhinus capoeta sevangi).
   - երկարաչանչ խեցգետին.
   - խոշոր և միջին չափսի կաթնասուններ (այծյամ, վարազ, գայլ, լուսան, արջ, աղվես).
   - թռչուններ:

Մոնիտորինգի համակարգը պետք է ընդգրկի ազգային պարկի բոլոր գոտիները՝ արգելոցային, ռեկրեացիոն, տնտեսական, ինչպես նաև պահպանական գոտին: Վերջերս

ազգային պարկում մոնիտորինգի առաջնային խնդիր է դարձել նշված երեք գոտիներում լճի ջրի մակարդակի բարձրացման պատճառով էկոհամակարգերի սպասվող փոփոխությունների կանոնավոր դիտարկումը: Այս պայմաններում անհրաժեշտ է մոնիտորինգ իրականացնել Սևանա լճի ջրային տարածքում, առափնյա տարածքում (20-25 մ խորության սահմանում), ինչպես նաև լրացուցիչ դիտակետեր ընտրել լճախորշերում (Արտանիշ, Նորատուս), որտեղ ծվաղրում են որոշ ձկնատեսակներ և հաճախ դիտվում են լճի «ծաղկման» երևույթներ: Ուշադրության կենտրոնում պետք է պահել ջրածածկման ենթարկվող առափնյա էկոհամակարգերը (ճահճատարածքներ, գետաբերաններ):

«Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրում» Ծրագրում ներկայացված են մոնիտորինգի իրականացման հիմնական սկզբունքները և մեթոդական ցուցումները, որոնց կիրառումն ապահովելու, ինչպես նաև կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և ելակետային տվյալների ստացման ու նախնական վերլուծության նպատակով պետք է իրականացվեն հետևյալ գործողությունները (տես նաև՝ Հավելված 1).

1. ազգային պարկի կառուցվածքում անհրաժեշտ է ստեղծել կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման բաժին, որն անհրաժեշտ է համալրել հետևյալ մասնագետներով. բուսաբաններ (2 հաստիք), կենդանաբաններ (2 հաստիք), հիդրոկենսաբան (1 հաստիք), տվյալների բազաների ստեղծման և վարման ունակություններ ունեցող մեկ մասնագետով: Հեռանկարային պետք է համարել նույն հաստիքային միավորների առկայությունը «Սևան» ազգային պարկի մասնաճյուղերում.
2. համապատասխան կադրերի պատրաստում և վերապատրաստում, որը հնարավորություն կստեղծի տիրապետելու բուսական, կենդանական աշխարհի և ջրային էկոհամակարգերի հետազոտությունների անցկացման մեթոդիկաներին, ճանաչելու պարկում տարածված և Կարմիր գրքերում գրանցված տեսակներին: Այս նպատակով գիտական բաժնի աշխատակիցների մասնակցությամբ դաշտային պայմաններում պետք է փորձարկվի կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման կարճաժամկետ ծրագիրը (Հավելված 3), որը կնպաստի մոնիտորինգի մասին տեսական և գործնական գիտելիքների ամրապնդմանը, հատկապես փորձահրապարակների ընտրման, մոնիտորինգային արձանագրությունների և դաշտային ձևերի կիրառմանամ ուղղությամբ.
3. կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման ընթացքում ձեռք բերված տվյալների գրանցման, վերլուծության և համապատասխան տեղեկատվության ապահովման նպատակով անհրաժեշտ է ստեղծել համակարգչային ծրագրային համակարգ.
4. կենսաբազմազանության մոնիտորինգի ելակետային տվյալների ստացման համար շահագրգիռ կողմերի ներգրավում՝ հատկապես բարձր դասարանների աշակերտներին, ուսուցիչներին, ֆերմերներին, որսորդներին և այլն. ազգային պարկի և դրա էկոհամակարգերի վերաբերյալ հասարակայնության իրազեկության բարձրացում: «Սևան» ազգային պարկին հարակից համայնքներում անհրաժեշտ է տարածել կենսաբազմազանության մոնիտորինգի նպատակների և իրականացման ընթացակարգերի, կենսաբազմազանության նշանակության մասին գիտահանրամատչելի տեղեկատվություն՝ բուկլետների, տեղեկատվական թերթիկների, տեսաֆիլմերի, ԶԼՄ-ների միջոցով:

Հարկ է նշել, որ մոնիտորինգային ուսումնասիրությունների և դիտարկումների կատարման համար համապատասխան նյութատեխնիկական բազան ստեղծված է: Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման (ԲՊԿՉՆ) Ծրագրի շրջանակներում «Սևան» ազգային պարկին հատկացվել են համակարգիչներ, տպիչներ, սկաներ, պատճենահանող սարքեր, ֆոտո- և տեսախցիկներ, ձեռքի GPS-ներ, դաշտային և լաբորատոր սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ: Բացի այդ, մոնիտորինգի արդյունքների հիման վրա կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծման և վարման, ելակետային և վերլուծված տեղեկատվության թվայնացման նպատակով՝

ԲՊԿԶՆ Ծրագրի շրջանակներում պարկի երկու աշխատակիցների համար իրականացվել է երկրատեղեկատվական համակարգի (GIS) ուսուցում՝ համապատասխան GIS-ծրագրային և սարքավորումների ապահովմամբ: Այս ամենը վկայում են, որ «Սևան» ազգային պարկի նոր, կենսաբազմազանության մոնիտորինգի իրականցման բաժնի, կառուցվածքային միավորի ստեղծումը անհրաժեշտ է և իրատեսական:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

## «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման բարելավման գործողությունների պլան

| հ/հ | Գործողություն | Կատարման ժամկետ | Կատարող | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|
| **1.** | **Իրավական և նորմատիվային ակտերի նախագծերի մշակում** | | | |
| 1. | Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության անտառների կառավարման բարելավման նպատակով՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և համայնքների միջև համագործակցության պայմանագրերի տեքստերի նախագծերի մշակում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 2. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և համայնքների միջև համագործակցության պայմանագրերի ստորագրում և պայմանագրային պարտավորությունների իրականացում: | 2007-2011 թթ. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ. Համայնքներ | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ. Համայնքային բյուջե |
| 3. | «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների կանոնակարգերի նախագծերի մշակում և արգելոցային գոտիների մուտքավճարների սահմանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 4. | «Սևան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների կանոնակարգերի նախագծերի հաստատում և դրանց իրականացում, արգելոցային գոտիների մուտքավճարների սահմանում և կիրառում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 5. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հսկողական գործառույթներ իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաների, ամբողջ անձնակազմի ծառայողական պարտականությունների և ներկայացվող պահանջների սահմանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 6. | Հսկողական գործառույթներ իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաների, ամբողջ անձնակազմի ծառայողական պարտականությունների և ներկայացվող պահանջների սահմանում: | 2007 թ. | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 7. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հսկողական գործառույթներ իրականացնող անձնակազմի աշխատավարձերի վերանայման, խրախուսման համակարգի ստեղծման և շուրջօրյա հսկողության համակարգի ներդրման վերաբերյալ միջնաժամկետ ծրագրի նախագծի մշակում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 8. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հսկողական գործառույթներ իրականացնող անձնակազմի աշխատավարձերի վերանայման, խրախուսման համակարգի ստեղծման և շուրջօրյա հսկողության համակարգի ներդրման վերաբերյալ միջնաժամկետ ծրագրի իրականացում: | 2008-2011 թթ. | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 9. | Անտառային ճանապարհների, հակահրդեհային հանքայնացված շերտերի կառուցման, վերանորոգման և խնամքի աշխատանքների իրականացման միավոր գնային արժեքների որոշման վերաբերյալ առաջարկությունների մշակում: | 2007 | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ Ծրագրի դրամաշնորհային միջոցներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10. | Անտառային ճանապարհների, հակահրդեհային հանքայնացված շերտերի կառուցման, վերանորոգման և խնամքի աշխատանքների իրականացման միավոր գնային արժեքների հաստատում և կիրառում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 11. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ պլանավորման, թեմաների մշակման և դրանց հաստատման կարգի նախագծի մշակում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 12. | Գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ պլանավորման, թեմաների մշակման և դրանց հաստատման կարգի սահմանում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն | Պետ. բյուջե |
| 13. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի կանոնադրությունների մշակում : | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ. | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 14. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի կանոնադրությունների հաստատում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| **2.** | **«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառուցվածքային բարեփոխումներ** | | | |
| 1. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նոր կառուցվածքի, այդ թվում՝ կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման բաժնի ստեղծման, դրանից բխող աշխատողների նոր թվաքանակի վերաբերյալ առաջարկությունների մշակում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 2. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նոր կառուցվածքի և դրանից բխող աշխատողների թվաքանակի հաստատում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե |
| 3. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում խորհրդատվական մարմնի ստեղծում: | 2007 թ. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 4. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում այցելուների կենտրոնների ստեղծման, տիպային կանոնադրության նախագծի և աշխատողների թվաքանակի վերաբերյալ առաջարկությունների մշակում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 5. | Այցելուների կենտրոնների ստեղծում, կանոնադրության հաստատում և աշխատողների թվաքանակի սահմանում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 6. | «Սևան» ազգային պարկի Վարդենիսի մասնաճյուղի կարգավիճակի վերանայում՝ Ծափաթաղի կամ Դարանակի տեղամասի ստեղծման, դրա տեղադրության և աշխատողների թվաքանակի վերաբերյալ առաջարկությունների մշակում: | 2007 | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 7. | Վարդենիսի մասնաճյուղում նոր տեղամասի ստեղծում և աշխատողների թվաքանակի սահմանում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| **3.** | **Քարտեզագրական աշխատանքներ** | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Գեոդեզիական հանույթի միջոցով «Սևան» ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության անտառային հողերի սահմանների ճշգրտում, քարտեզագրում և դրանց կատեգորիայի փոփոխության վերաբերյալ առաջարկության ներկայացում. | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 2. | «Սևան» ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության անտառային հողերի սահմանների հաստատում և դրանց կատեգորիայի փոփոխության իրականացում: | 2007-2008 թթ. | ՀՀ Կառավարություն. Բնապահպանության նախարարություն | Պետ. բյուջե |
| 3. | Արբայնակային պատկերի միջոցով գիհու և կաղնու ռելիկտային նոսր անտառների տարածման գոտու սահմանների ճշգրտում, գույքագում և քարտեզագրում: | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| **4.** | **Կադրերի մասնագիտական որակավորման բարձրացում** | | | |
| 1. | GIS համակարգում տվյալների բազաների շահագործման ուսուցում: | 2007 | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 2. | Կադրերի վերապատրաստման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի նախագծերի մշակում: | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 3. | Կադրերի վերապատրաստման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի հաստատում և իրականացում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն | Պետ.բյուջե |
| 4. | Կենսաբազմազանության մոնիտորինգի իրականցման նպատակով կադրերի վերապատրաստում (ըստ Հավելված 3-ում ներկայացված ծրագրի): | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| **5.** | **«Սևան» ազգային պարկի անտառային տարածքների կառավարման բարելավում** | | | |
| 1. | Ազգային պարկի մասնաճյուղերի տեղամասերի անտառային տվյալների բանկի, անտառգնահատման հատվածային նկարագրման թեմատիկ քարտեզների (ծառաթփային պլան, պահաբաժինների և հղեհավտանգության քարտեզներ 1:10000 մասշտաբի), գրքերի պատրաստում, տպագրում և տրամադրում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին: | 2007 | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ Ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 2. | Ազգային պարկի մասնաճյուղերի և տեղամասերի անտառապատման և անտառվերականգնման համալիր միջոցառումների նախագծերի պատրաստում, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացում և ՀՀ Բնապահպանության նախարարության հաստատման ներկայացում: | 2007 | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ Ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 3. | Անտառվերականգնման և անտառապատման միջոցառումների նախագծերի հաստատում և իրականացում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 4. | 2007-2011 թվականներին Սևանա լճի մակարդակի կանխատեսվող բարձրացման հաշվով տարիների կտրվածքով անտառապատ տարածքների քարտեզագրում, անտառնյութի հաշվառում և նախահաշիվների պատրաստում: | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 5. | Սևանա լճի մակարդակի բարձրացման հաշվով տարիների կտրվածքով անտառապատ տարածքների մաքրման աշխատանքների իրականացում: | 2008-2011 թթ. | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. |
| 6. | 28.9 հեկտար Մարտունու տնկարանային տնտեսության վերականգնում | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| **6.** | **Ջրային էկոհամակարգերի բարելավում** | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ջրային էկոհամակարգեր թափվող էվտրոֆացնող, տոքսիկ և աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (ՍԹԽ), նորմերի (ՍԹՆ) և արտանետումների (ՍԹԱ) մոնիտորինգային որակական և քանակական ուսումնասիրությունների ծրագրերի մշակում: | 2008-2009 թթ. | Բնապահպանության նախարարություն. Առողջապահության նախարարություն. ԳԱԱ | Պետական բյուջե |
| 2. | Ջրային էկոհամակարգեր թափվող էվտրոֆացնող, տոքսիկ և աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (ՍԹԽ), նորմերի (ՍԹՆ) և արտանետումների (ՍԹԱ) մոնիտորինգային որակական և քանակական ուսումնասիրությունների ծրագրերի իրականացում: | 2010-2011 թթ. | Բնապահպանության նախարարություն. Առողջապահության նախարարություն. ԳԱԱ | Պետական բյուջե |
| 3. | Ջրային էկոհամակարգերում էվտրոֆացնող, տոքսիկ և աղտոտող նյութերի ՍԹԽ, ՍԹՆ և ՍԹԱ-ների քանակական չափագրումների, դրանց տեղայնացման օրինականացման, փոփոխման վերին և ստորին սահմանները պահպանող միջոցառումների մշակում: | 2008-2010 թթ. | Բնապահպանության նախարարություն. Առողջապահության նախարարություն. ԳԱԱ | Պետական բյուջե |
| 4. | Ջրային էկոհամակարգերում էվտրոֆացնող, տոքսիկ և աղտոտող նյութերի ՍԹԽ, ՍԹՆ և ՍԹԱ-ների քանակական չափագրումների, դրանց տեղայնացման օրինականացման, փոփոխման վերին և ստորին սահմանները պահպանող միջոցառումների իրականացում: | 2011 թ. և շարունակական | Բնապահպանության նախարարություն. Առողջապահության նախարարություն. ԳԱԱ | Պետական բյուջե |
| 5. | Գետերի, լճերի և ջրամբարների ափերի երկարությամբ սանիտարաջրապահպան գոտիների ստեղծման վերաբերյալ ծրագրի մշակում: | 2007-2008 թթ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 6. | Գետերի, լճերի և ջրամբարների ափերի երկարությամբ սանիտարաջրապահպան գոտիների ստեղծման վերաբերյալ ծրագրի հաստատում և իրականացում: | 2008 թ., իրականացումը 2009 թ.-ից | ՀՀ կառավարություն, Բնապահպանության նախարարություն, Գեղարքունիքի մարզպետարան | Պետական բյուջե |
| 7. | Ջրային պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման կանոնների ու մեթոդական ցուցումների մշակում: | 2007 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 8. | Ջրային պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման կանոնների ու մեթոդական ցուցումների հաստատում և կիրառում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | Բնապահպանության նախարարություն | Պետական բյուջե |
| 9. | Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների տեղական կոյուղացման և քաղաքների ելքերում ժամանակակից մաքրման համալիրների տեղադրության ծրագրի մշակում: | 2007-2008 թթ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 10. | Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների տեղական կոյուղացման և քաղաքների ելքերում ժամանակակից մաքրման համալիրների տեղադրության ծրագրի հաստատում և իրականացում: | 2008 թ., իրականացումը 2009 թ.-ից | ՀՀ կառավարություն, Բնապահպանության նախարարություն, Գեղարքունիքի մարզպետարան, համայնքներ | Պետական բյուջե |
| 11. | Խախտված և էրոզացված հողերի ռեկուլտիվացիայի ծրագրի մշակում: | 2007-2008 թ թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12. | Խախտված և էրոզացված հողերի ռեկուլտիվացիայի ծրագրի հաստատում և իրականացում: | 2008 թ., իրականացումը 2009 թ.-ից | ՀՀ կառավարություն, Բնապահպանության նախարարություն, Գեղարքունիքի մարզպետարան, համայնքներ | Պետական բյուջե |
| **7.** | **Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացում** | | | |
| 1. | Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիայի, այդ թվում՝ տուրիստական և ռեկրեացիոն ենթակառուցվածքների զարգացման ծրագրի մշակում: | 2007-2008 թթ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 2. | Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիայի զարգացման ծրագրի հաստատում և իրականացում: | 2008 թ., իրականացումը 2009 թ.ից | Բնապահպանության նախարարություն. Գեղարքունիքի մարզպետարան. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ. հարակից համայնքներ. համապատասխան կազմակերպություններ | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, հարակից համայնքների, համապատասխան կազմակերպությունների սեփական միջոցներ |
| 3. | Տուրիզմի և ռեկրեացիայի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման մոնիտորինգային ծրագրի մշակում: | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 4. | Տուրիզմի և ռեկրեացիայի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման մոնիտորինգային ծրագրի հաստատում և իրականացում: | 2007 թ., կիրառումը 2008 թ.-ից | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ. բյուջե. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| **8.** | **Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրում** | | | |
| 1. | Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգչային ծրագրային համակարգի ստեղծում և տեղադրում: | 2007թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 2. | Մոնիտորինգի արդյունքների հիման վրա կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում: | 2008-2011 թթ. | Բնապահպանության նախարարություն. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ.բյուջե «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 3. | Կենսաբազմազանության մոնիտորինգի գործընթացին համայնքների ներկայացուցիչների ներգրավման ծրագրի մշակում: | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 4. | Կենսաբազմազանության մոնիտորինգի գործընթացին համայնքների ներկայացուցիչների ներգրավման ծրագրի իրականացում: | 2008-2011 թթ. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| **9.** | **Ազգաբնակչության իրազեկության բարձրացում** | | | |
| 1. | «Սևան» ազգային պարկի, այդ թվում՝ կենսաբազմազանության մոնիտորինգի գործընթացի վերաբերյալ ազգաբնակչության իրազեկության բարձրացման, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի նախագծերի մշակում: | 2007 թ. | ԲՊԿՀՆ ԾԻԳ | ԲՊԿՀՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Ազգաբնակչության իրազեկության բարձրացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի իրականացում: | 2008-2011 թթ. | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ | Պետ.բյուջե<br>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ |
| 4. | Ազգային պարկում տուրիզմին և ռեկրեացիային վերաբերող տեղեկատվական նյութերի մշակում, հրատարակում և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին տրամադրում: | 2007 | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |
| 10. | **Շինարարական աշխատանքներ** | | | |
| 1. | Նորաշենի արգելոցային գոտում ցանկապատման նախագծման և տեղադրման աշխատանքներ: | 2007 - 2008 թ. | ԲՊԿՉՆ ԾԻԳ | ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

| Բնական և մշակութային հուշարձաններ, որոնք գույքագրվել են և առաջարկվել տուրիզմի զարգացման համար | | | | |
|---|---|---|---|---|
| Հուշարձանի անվանումը | Վայրը / Հասանելիությունը | Հուշարձանի կարգավիճակը (1- Լավ / 2- Միջին / 3- Վատ) | Պահանջվող հատուկ պահպանման/բարելավման աշխատանքներ | Հուշարձանի կարևորությունը տուրիզմի տեսակետից (1-բարձր / 2-միջին / 3-ցածր) |
| Բնական կամուրջ | գտնվում է Ծակքար գյուղի հարավ-արևմտյան մասում՝ Բախտակ գետակի ավազանում / հեշտ հասանելի | 1<br>ընդհանուր առմամբ հուշարձանը լավ պահպանված է և մաքուր, սակայն, նորակառույց գազատարը գյուղի ճանապարհի երկայնքով խոչընդոտներ է ստեղծել կամուրջ տանող արահետի վրա | պահանջվում է իրականացնել կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ | 1<br>բնական հուշարձանն ունի գիտական (երկրակազմաբանական և հանքաբանական) գեղագիտական նշանակություն, կարող է ընդգրկվել Հայաստանի լավագույն բնական հուշարձանների շարքը |
| Սառցե քարի ալիք | գտնվում է Շորժա գյուղի հյուսիս-արևելյան մասում, Ծովագյուղ-Շորժա ավտոճանապարհի ձախ կողմում, ճանապարհի անմիջապես հարևանությամբ / հեշտ հասանելի | 1<br>ընդհանուր առմամբ հուշարձանը լավ պահպանված է, շրջակայքը մաքուր է, չնայած մակերեսին տեղաբնակների և այցելուների կողմից թողած գրությունները վնասում են այն | անհրաժեշտ է հուշարձանը մաքրել գրություններից | 2<br>հուշարձանը ունի գեղագիտական կարևոր նշանակություն |
| Գիլլիի քարանձավի կացարաններ | գտնվում է Գիլլի գյուղից 1.5կմ դեպի հարավ-արևմուտք՝ Ծովագյուղ-Գիլլի ճանապարհի ձախ կողմում / հեշտ հասանելի | 1<br>հուշարձանը լավ պահպանված է և շրջակայքը մաքուր է | անհրաժեշտություն չկա | 2<br>համալիրը կարելի է օգտագործել հնեաբանական և պատմամշակութային տուրիզմի նպատակով |
| Կալավանի վերին պալեոլիթի տարածք | գտնվում է Կալավանից 2 կմ դեպի հարավ-արևելք՝ Բարեպատ գետի աջ ափին, անտառապատ տարածքում / դժվար է հասնել տարածք, քանի որ այն գտնվում է Դ-իլիջան-Ճամբարակ մայրուղուց 8.5կմ հեռավորության վրա: Խորհուրդ է տրվում տարածք այցելել ոտքով, ձիով, կամ քառանից սայլակով | 1<br>տարածքը լավ վիճակում է և կարևոր է իր գիտական նշանակությամբ, քանի որ այն Վերին պալեոլիթի ժամանակաշրջանի առաջին տեղանքն է բաց երկնքի տակ՝ պահպանված հնեաբանական շերտերով: Տեղանքի պեղումներն սկսվել են 2005-ին: | անհրաժեշտություն չկա | 1<br>տարածքը կարող է օգտագործվել ուսուցողական և հնեաբանական տուրիզմի նպատակներով, հատկապես հնեաբանական հորատումների ժամանակ, որը պետք է իրականացվի հնեաբանների հսկողությամբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մեծեփի կիկլոպյան ամրոց | գտնվում է Սևան քաղաքից 0.5 կմ հեռավորության վրա / հեշտ հասանելի | 2<br>հուշարձանի մի մասը քանդվել է հեռուստաաշտարակի տեղադրման ժամանակ | անհրաժեշտություն չկա | 2<br>իրենից ներկայացնում է հնեաբանական հետաքրքրություն և կարող է ծառայել որպես շատ հարմար տեսարժան վայր, որտեղ կարելի է կազմակերպել պեղումային աշխատանքներ տուրիստների մասնակցությամբ |
| Լճաշենի կիկլոպյան ամրոց-բնակավայր և դամբարանադաշտ | գտնվում է Լճաշեն գյուղի հարավային մասի բարձր բլուրների գագաթներին՝ զբաղեցնելով ավելի քան 35հա տարածք և ձգվելով 15 բլուրների լանջերով ու ձորակներով / հեշտ հասանելի | 1<br>սեպաձև արձանագրությունները մաշվել են հատկապես լճին հարակից լինելու պատճառով (բարձր խոնավության և ինտենսիվ քամիների առկայություն) | արձանագրությունները պահպանելու նպատակով դրանք ժամանակին փակվել են երկաթ-բետոնյա շինությամբ, սակայն, վերջինս նույնպես մաշվել է և բետոնի միջից դուրս ցցված մետաղյա լարերը վտանգավոր են դարձնում այդ սեպագրերի ուսումնասիրությունը: Խորհուրդ է տրվում շինությունը դարձնել ավելի անվտանգ, ինչպես նաև բարեկարգել և մաքրել շրջակայքը աղբից | 1<br>Լճաշենի ամրոց-բնակավայրը պետք է ընդգրկվի տուրիստական ուղղվածություն ունեցող հուշարձանների ցանկում: Հաշվի առնելով այն փաստը, որ Գիտությունների ակադեմիայի Հնեաբանության և ազգագրության ինստիտուտի հնեաբանական արշավախմբերը իրականացնում են պարբերական հորատումներ, առաջարկում ենք օգտագործել տարածքը հնեաբանական տուրիզմի համար |
| Բերդկունքի կիկլոպյան ամրոց-բնակավայր և միջնադարյան ամրոց (Իշխանաց ամրոց կամ Արքայազնի ամրոց) | գտնվում է Բերդկունքի արևելյան մասում / հեշտ հասանելի | 1<br>չնայած հուշարձանը մեզ է հասել ավերակ վիճակում, սակայն այն լավ պահպանված է: Մոտակայքում գործում է առողջարան | անհրաժեշտ է ստեղծել առողջարանը հուշարձանից անջատող պահպանվող տարածք | 2<br>հուշարձանը կարելի է օգտագործել հնեաբանական տուրիզմի նպատակով: Այցելուների անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է համալիրի տարածքում անցկացնել հատուկ նշաններով արահետներ |
| Բերդի Գլուխ կիկլոպյան ամրոց կամ Խալդի աստծո քաղաք | գտնվում է Գավառ քաղաքի կենտրոնական մասում (ներկայիս գերեզմանատան տարածքում) / հեշտ հասանելի | 1<br>տարածքի սահմանները հարում են ժամանակակից գերեզմանատանը՝ փչացնելով տարածքի պատմական առանձնահատկությունները, հողարկավորությունները տեղի են ունենում անմիջապես հուշարձանի տարածքում և դրա շուրջը | հուշահամալիրը պետք է առանձնացվի ժամանակակից գերեզմանատնից | 2<br>Բերդի գլուխ ամրոցը, ս. Ստեփանոս մատուռը, 16-17 դարերի գերեզմանատունը, գեղարվեստորեն քանդակած խաչքարերը պատմա-մշակութային արժեքներ են: Տարածքը համարվել է Վելիքուխ երկրի (Խալդի աստծո քաղաք) մայրաքաղաքը, որը հայտնի է մ.թ.ա. 8-6 դարերի Վանի թագավորության սեպագիր արձանագրություններից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Պառավավանքի ամրոց-բնակավայր կամ Իլիկավանքի կիկլոպյան ամրոց-բնակավայր և դամբարանադաշտ | գտնվում է Գավառ քաղաքից 10 կմ դեպի հարավ՝ Լանջաղբյուր գյուղի հարավ-արևելքում ընկած բլրի վրա / հեշտ հասանելի | 1<br>հուշարձանը լավ պահպանված է | հուշարձան տանող ճանապարհը անհրաժեշտ է վերանորոգել | 1<br>խորհուրդ է տրվում վայրն օգտագործել հնեաբանական տուրիզմի նպատակով |
| Կիկլոպյան ամրոց-բնակավայր և Կանագեղի դամբարանադաշտ | գտնվում է Գավառ քաղաքից 12 կմ դեպի հարավ-արևելք, Գավառ-Մարտունի մայրուղու ձախ կողմում, Սևանա լճի արևմտյան մասում, Կարմիրգյուղ գյուղի վարչական տարածքում, 8.5կմ դեպի հարավ-արևելք / հեշտ հասանելի | 1<br>ընդհանուր առմամբ հուշարձանը գտնվում է բավարար վիճակում, մաքուր է | անհրաժեշտություն չկա | 2<br>առաջարկվում է տարածքն օգտագործել հնեաբանական տուրիզմի համար |
| Ծովինար (Թեյշեբաինի կամ Օձաբերդ ամրոց) | կառուցված է Սևանա լիճ նայող ժայռապատ բլրի վրա հյուսիսում և գտնվում է Ծովինար գյուղից 1.5 կմ դեպի արևմուտք / հեշտ հասանելի՝ գյուղամիջի հին ճանապարհով, որը տանում է հարևան Արծվանիստ գյուղ | 1<br>ընդհանուր առմամբ լավ է պահպանված | հնեաբանական տուրիզմի շնորհիվ հնարավոր կլինի կազմակերպել տարածքի մաքրում, բարելավում և որոշ վերականգնողական աշխատանքներ | 1<br>տարածքը պետք է ընդգրկվի պատմամշակութային տուրիզմի ծրագրում |
| Կարճաղբյուրի Քարե դուռ կիկլոպյան ամրոց-բնակավայր | գտնվում է Կարճաղբյուր գյուղի հարավ-արևելյան բարձրավանդակում: Տարածք կարելի է հասնել գյուղի միջով անցնող ճանապարհով, Կարճաղբյուր գետի ձորակով և անցնելով կամուրջը մինչև գյուղի հյուսիսային վերջնակետը / հեշտ հասանելի, քանի որ գտնվում է Կարճաղբյուր գյուղի սահմանների մոտ | 1<br>տարածքը լավ վիճակում է, քանի որ դամբարանը օգտագործվում է տեղացիների կողմից որպես աղոթատեղի և հետևաբար պարբերաբար մաքրվում է | անհրաժեշտություն չկա | 2<br>կարելի է օգտագործել  հնեաբանական և տուրիզմի զարգացման նպատակով |
| Ծովակի կիկլոպյան ամրոց-բնակավայր | գտնվում է Ծովակ գյուղի հարավային և արևմտյան կողմերում գյուղից 50-60մ բարձրության վրա: Տարածք կարելի է հասնել ոտքով՝ Ծովակից բարձրավանդակ տանող ճանապարհով կամ Ծովակ-Լճավան ճանապարհով և Կարճաղբյուրից Մարտունի-Վարդենիս հին ճանապարհով / հեշտ հասանելի | 2<br>ընդհանուր առմամբ ամրոց-բնակավայրը վնասվել է գյուղատնտեսական գործողությունների արդյունքում կամ օգտագործվել է որպես գերեզմանատուն | անհրաժեշտ է որոշել տարածքի պահպանական գոտու սահմանները | 1<br>հուշարձանի լավ պահպանված մասերը բավարար են, որպեսզի այն ընդգրկվի հնեաբանական և մշակութային տուրիզմի ծրագրերում: Սա կբերի հուշարձանի առավել կազմակերպված պաշտպանությանը և շրջակա տարածքի բարելավմանը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Այրքի կիկլոպյան ամրոց-բնակավայր | գտնվում է Այրք գյուղի հարավային մասում: Կարելի է հասնել գյուղամիջյան ճանապարհով / հեշտությամբ, քանի որ գտնվում է Այրք գյուղի սահմանների մոտ, սակայն գյուղ տանող ճանապարհը անմխիթար վիճակում է | 1<br>տարածքը լավ պահպանված է | անհրաժեշտություն չկա | 2<br>Այրքի ամրոց-բնակավայրը հարևան միջնադարյան հուշարձանների խմբում կարող է ծառայել հնեաբանական և մշակութային տուրիզմի նպատակներին |
| Արտանիշի կիկլոպյան ամրոց-բնակավայր | գտնվում է Արտանիշ գյուղի արևմտյան մասի բարձր լեռան ստորոտում՝ Ծովագյուղ-Արտանիշ մայրուղու մոտ: Տարածք կարելի հասնել գյուղ տանող ճանապարհից թեքվելով ձախ / հեշտ հասանելի | 2<br>դամբարանադաշտը և ամրոցի հարավային կողմը լրջորեն վնասվել են մայրուղու և երկաթուղու շինարարությունից, սակայն ամրոցի ընդհանուր վիճակը լավ է | հուշարձանը տուրիզմի տեսանկյունից ընդունելի դարձնելու համար անհրաժեշտ են որոշ մաքրման աշխատանքներ | 3<br>տարածքի մաքրման և որոշ շինարարական աշխատանքներից հետո ամրոցը կարող է օգտագործվել հնեաբանական տուրիզմի նպատակով |
| Դաշտի լեռ կիկլոպյան ամրոց-բնակավայր | գտնվում է Ջիլ գյուղից 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Արտանիշ գյուղից 5 կմ դեպի հարավ-արևելք և Ծովագյուղ-Ջիլ մայրուղուց 200 մ ձախ / հեշտությամբ կարելի է հասնել ոտքով՝ կտրելով երկաթգիծը Ջիլ-Ծովագյուղ ճանապարհից կամ Ջիլ գյուղից դաշտամիջյան ճանապարհով | 1<br>ընդհանուր առմամբ լավ պահպանված է | անհրաժեշտություն չկա | 3<br>տարածքը կարող է ընդգրկվել հնեաբանական տուրիզմի հուշարձանների ցանկում |
| Սպիտակ բերդ (Աղջաղալա) միջնադարյան ամրոց | գտնվում է Մարտունի և Այգուտ գյուղերի միջև՝ մոտ 6 կմ դեպի հյուսիս-արևմուտք Մարտունի գյուղից և 3 կմ դեպի հյուսիս-արևելք Այգուտ գյուղից / դժվար է հասնել, քանի որ Դիլիջան-Ճամբարակ ճանապարհից անհրաժեշտ է քայլել 4կմ | 1<br>տարածքը և շրջակայքը մաքուր են: Այն շրջապատված է գեղեցիկ լանդշաֆտով և ամրոցի կողմից բացվում է Գետիկի դաշտավայրի ձորակներով համայնապատկերը | անհրաժեշտություն չկա | 1<br>տարածքը կարելի է օգտագործել պատմամշակութային և հնեաբանական տուրիզմի զարգացման նպատակներով |
| Դդմաշենի ս. Թադևոսի առաքելական եկեղեցի | գտնվում է Դդմաշեն գյուղի կենտրոնում՝ փոքրիկ բլրի ստորոտին, որ կարելի է հասնել գյուղամիջյան ճանապարհով / հեշտ հասանելի | 1<br>տարածքը լավ վիճակում է, 1977-78թթ մասնակի վերանորոգվել է և ցանկապատով առանձնացվել շրջակա տներից | առաջարկվում է ավարտել վերանորոգման աշխատանքները | 1<br>տուրիզմի տեսանկյունից առաջարկվում է եկեղեցին ընդգրկել պատմա-մշակութային տուրիզմի օբյեկտների ցանկում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լճաշենի ս. Հռիփսիմե և Գանձավանք կամ Անգիր վանք | գտնվում է Լճաշենի կենտրոնական մասում և անմիջապես գյուղի ճանապարհի աջ կողմում / հեշտ հասանելի | 2<br>տարածքը բարեկարգ է, սակայն Սևան-Գավառ ճանապարհի երկայնքով, Լճաշենի ամրոցի հարավ-արևելյան և դամբարանադաշտի արևելյան մասերում կան աղբի կուտակումներ, որոնք փչացնում են շրջակա միջավայրը | պահանջվում է տարածքը մաքրել աղբից և վերահսկել շրջակա բուսականության ներթափանցումը համալիրի տարածք | 2<br>առաջարկվում է 2 հուշարձաններն էլ ընդգրկել տուրիզմի զարգացման ցանկացած ծրագրի մեջ կամ մշակել տուրիստական արահետ |
| Ս. Աստվածածին եկեղեցի, ս. Ստեփանոս մատուռ և Բերդի գլուխ կամ Դարի գլուխ գերեզմանատներ | գտնվում է Գավառ քաղաքի ճիշտ կենտրոնում, կենտրոնական հրապարակի հյուսիսային մասում / հեշտ հասանելի | 1<br>տարածքը մաքուր է, քանի որ և եկեղեցին և գերեզմանատունը գործող են, սակայն գերեզմանատունը  ընդլայնվում է, որի արդյունքում հնությունները աստիճանաբար քայքայվում և վերանում են | անհրաժեշտ է հող տանել ս. Ստեփանոս մատուռի մասին և փոխել տանիքը | 2<br>Գավառի խաչքարերը ունեն գեղագիտական արժեք և պետք է ընդգրկվեն Գավառի տուրիստական հուշարձանների շարքը |
| Հացառատ գյուղի ս. Մարիամ Աստվածածին և ս. Գր. Լուսավորիչ եկեղեցիներ | գտնվում են Գավառ քաղաքի կենտրոնից 2.5 կմ դեպի հարավ, նախկին Հացառատի տարածքում/ հեշտ հասանելի. եկեղեցիներ կարելի է հասնել քաղաքի ճանապարհով | 1<br>եկեղեցիների և գերեզմանատան տարածքը բավականին պահպանված է և մաքուր, քանի որ ներկայումս դրանք գործում են: Խորհուրդ է տրվում լավագույն նմուշները դնել պատվանդանների վրա, քանի որ խոտը շատ բարձր է աճում և հաճախ թույլ չի տալիս կարդալ տապանաքարերի վրայի գրությունները: | անհրաժեշտ է վերահսկել ներթափանցող բուսականությունը: | 1<br>հուշարձանները արժանի են ընդգրկվելու Գեղարքունիքի մարզի պատմա-մշակութային կոթողների շարքը |
| Ծաղկաշենի ս. Հովհաննես եկեղեցի | գտնվում է Ծաղկաշեն գյուղի հարավային մասում՝ Ծաղկաշեն գետի աջ ափին / հեշտ հասանելի: Կարելի է հասնել գյուղի ճանապարհով, այնուհետև թեքվել ձախ մինչև գյուղի հարավային եզրը, անցնել կամուրջը և մտնել եկեղեցու բակ: Եկեղեցին գտնվում է Հացառատի եկեղեցական համալիրից 6.5կմ հեռավորության վրա: | 2<br>հուշարձանը միջին վիճակում է | հուշարձանը, և գերեզմանատունը կարիք ունեն որոշ վերականգնողական աշխատանքների | 2<br>վայրը կարելի է օգտագործել պատմա-մշակութային տուրիզմի զարգացման համար, հատկապես ցուցադրելու Սյունիքի հնեաբանական դպրոցը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լանջաղբյուրի Պառավավանք կամ Իլիկավանք եկեղեցի | գտնվում է Գավառ քաղաքից 19 կմ դեպի հարավ՝ Լանջաղբյուրից հարավ-արևելք ընկած բլրի վրա: Հեշտությամբ կարելի է հասնել գյուղի ճանապարհով (որոշ մասը վնասված է), նախընտրելի է ոտքով և դեպի վեր բլրի գագաթ | 2<br>ընդհանուր առմամբ եկեղեցու տարածքը մաքուր է և գտնվում է լավ վիճակում | պահանջվում է եկեղեցու և եկեղեցի տանող ճանապարհի վերանորոգում: | 3<br>հուշարձանը հարևան ամրոց-բնակավայրի հետ միասին կարող է ընդգրկվել Գեղարքունիքի մարզի պատմա-մշակութային հուշարձանների շարքը: Այստեղից բացվում է շատ գեղեցիկ տեսարան դեպի փռված դա՛շտավայրը՝ ներառյալ շրջակա գյուղերը և հեռավոր ալպիական մարգագետինները |
| Նորատուսի ս. Աստվածածին և ս. Գրիգոր Լուսավորիչ (Դոփուց վանք) եկեղեցիներ | գտնվում են Նորատուս գյուղի սահմաններում՝ Ս. Աստվածածինը գյուղի կենտրոնական մասում, իսկ ս. Գր. Լուսավորիչը՝ գյուղի հարավ-արևելյան մասում / հեշտությամբ կարելի է հասնել գյուղամիջյան ճանապարհներով | 1<br>եկեղեցիները ներքին և արտաքին բարելավման աշխատանքների կարիք ունեն, չնայած որ 1973-1974թթ եկեղեցին ենթարկվել է մասնակի վերանորոգման | անհրաժեշտ է պարբերաբար մաքրել եկեղեցու տարածքը աղբից և իրականացնել հուշարձանի լիակատար վերանորոգում | 1<br>եկեղեցին Նորատուսի միջնադարյան գերեզմանատան հետ մեկտեղ կարող է ընդգրկվել պատմա-մշակութային տուրիզմի զարգացման ենթակա հուշարձանների շարքը |
| Նորատուսի գերեզմանատուն | գտնվում է Նորատուսի արևելյան փռված ցածրադիր բլրի վրա / Հեշտ է այնտեղ հասնել գյուղի ճանապարհով: Այն գտնվում է Գավառ-Մարտունի մայրուղուց 1.6 կմ հեռավորության վրա: | 2<br>տարածքը գտնվում է լավ վիճակում | տարածքի մաքրման կարիք կա, պետք է իրականացվեն որոշ բարեկարգման աշխատանքներ՝ խաչքարերի պատվանդանների ամրացում և գերեզմանատան ցանկապատում | 1<br>գերեզմանատան խաչքարերը թույլ են տալիս պատկերացում կազմել 10-17 դարերում խաչքարերի պատրաստման և զարգացման փուլերի վերաբերյալ: Հաշվի առնելով Նախիջևանի Նոր Ջուղա գերեզմանատան հազարավոր խաչքարերի վերացումը, Նորատուսի գերեզմանատունը մնում է խաչքարերով հարուստ ամենամեծը տարածքում: Կարևոր է տուրիզմի զարգացման գործողությունների համար: |
| Կանաքեղի բնակավայրերի խումբ (Մանուչարի դոլակներ) | գտնվում է Գավառից 12կմ դեպի հարավ-արևմուտք՝ Գավառ-Մարտունի մայրուղուց ձախ, Սևանա լճի արևմտյան մասում, Կարմիրգյուղ գյուղի վարչական տարածքում / հեշտ հասանելի | 1<br>հուշարձանները աստիճանաբար քայքայվում են գյուղատնտեսական և այլ մարդածին գործողությունների պատճառով | կարիք կա ամբողջ տարածքը պաշտպանել մարդածին գործողությունների ազդեցությունից | 2<br>հնեաբանական և պատմա-մշակութային տուրիզմի զարգացումը կնպաստի փրկել և վերականգնել այս հուշարձանները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Զորագյուղ գյուղի Մասրուց Անապատ եկեղեցի | գտնվում է Զորագյուղ գյուղի արևելյան մասում / հեշտությամբ կարելի է հասնել գյուղի ճանապարհով մինչև մոտակա խաչմերուկը անցնելով դեպի գերեզմանատուն՝ գյուղի կենտրոնական մաս, այնուհետև թեքվել ձախ և նեղ արահետով, կատարելով շրջան, գյուղի տների միջով հասնել եկեղեցու բակ | 1<br>Եկեղեցին և բակը ամբողջովին վերանորոգվել և բարեկարգվել են 1976թ. | անհրաժեշտություն չկա | 1<br>Գեղարքունիքի մարզի պատմա-մշակութային ամենահետաքրքիր վայրերից մեկը |
| Թազագյուղի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի | գտնվում է Թազագյուղի կենտրոնում՝ բլրի գագաթին: Հեշտությամբ կարելի է հասնել գյուղի ճանապարհով, քանի որ այն տեղադրված է Մարտունի-Վարդենիս մայրուղուց 6.3 կմ հեռավորության վրա: | 2<br>Եկեղեցին հիմնականում լավ վիճակում է և խաչքարերը գտնվում են ցանկապատի ներսում: | անհրաժեշտ է պարբերաբար մաքրել տարածքը և իրականացնել հուշարձանի ամբողջական վերանորոգման աշխատանքներ | 2<br>եկեղեցին կարող է դասվել տուրիզմի զարգացման գործողությունների կազմակերպման համար կազմված հուշարձանների շարքը |
| Ծաղկեվանքի մատուռ, ս. Աստվածածին եկեղեցի և միջնադարյան գերեզմանատուն | գտնվում են Լիճք գյուղի եզրին՝ ներկայիս գերեզմանատնից դեպի հյուսիս, հրվանդանի հարթության վրա / հեշտ հասանելի. կարելի է հասնել գյուղի կենտրոնից թեքվելով ձախ և բարձրանալով գերեզմանատան բլուր (Մարտունի-Վարդենիս ճանապարհից 1.4կմ) | 1<br>ընդհանուր առմամբ հուշարձանների շրջակայքը բավականին մաքուր է | տարածքը կարիք ունի որոշ բարեկարգման, հատկապես եկեղեցին, որը տանիքի բացակայության պատճառով աստիճանաբար քայքայվում է: Միջնադարյան հին գերեզմանատան խաչքարերին և տապանաքարերին վտանգ է ներկայացնում ժամանակակից գերեզմանատան ընդլայնումը: | 2<br>պետք է ընդգրկվեն պատմա-մշակութային տուրիզմի հուշարձանների ցանկում: Այնտեղից բացվում է գեղեցիկ տեսարան Սևանա լճի և հարևան գյուղերի վրա: |
| Մարտունու ս. Աստվածածին եկեղեցի և միջնադարյան գերեզմանատուն | գտնվում են Մարտունի քաղաքի կենտրոնում՝ Մարտունի-Եղեգնաձոր ճանապարհի աջ կողմում, ճանապարհի սկզբից 1.2կմ հեռավորության վրա / հեշտ հասանելի | 2<br>տարածքը համեմատաբար մաքուր է և ցանկապատված | անհրաժեշտ է գմբեթի վերանորոգում, որպեսզի այն բերվի իր նախնական տեսքին | 2<br>կարող են ընդգրկվել այն հուշարձանների շարքը, որոնք հարմար են պատմա-մշակութային տուրիզմի կազմակերպման համար |
| Գեղհովիտի ս. Գևորգ եկեղեցի և միջնադարյան գերեզմանատուն | գտնվում են Գեղհովիտ գյուղի կենտրոնական մասում՝ Մարտունի-Եղեգնաձոր ճանապարհի աջ կողմում, ճանապարհի սկզբից 6.2կմ հեռավորության վրա / հեշտ հասանելի | 2<br>տարածքի վիճակը միջին է | գերեզմանատան շրջակայքը պետք է բարեկարգվի | 2<br>Գեղհովիտի միջնադարյան գերեզմանատան տապանաքարերը համարվում են Հայաստանում գոյություն ունեցող 15-17 դարերի նմանատիպ հուշարձանների լավագույն օրինակներից: Հետաքրքրություն են ներկայացնում մշակութային տուրիզմի տեսանկյունից: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ձոլախաչ խաչքար | գտնվում է Զոլաքար գյուղի կենտրոնում / Կարելի է հասնել գյուղի ճանապարհով և հիմնական խաչմերուկներից թեքվել աջ (Մարտունի-Վարդենիս ճանապարհից 2.2կմ) | 1<br>հուշարձանի վիճակը լավ է | Խաչքարի հիմքի մասը վառված մոմերից սևացել է: Այն պետք է մաքրվի և պաշտպանվի հետագա վտանգներից: | 1<br>խաչքարը, որպես հայկական ուշ միջնադարյան շրջանի լավագույն օրինակներից, պետք է համարվի պատմա-մշակութային տուրիզմի տեսանկյունից կարևոր վայր: |
| Իշխանավանք եկեղեցի և Վարդենիկի գերեզմանատուն | գտնվում են Վարդենիկ գյուղի արևելյան սահմանի վրա՝ Վարդենիկ գետի աջ ափին, ժամանակակից գերեզմանատան տարածքում / Կարելի է գյուղի ճանապարհով հասնել գյուղի հյուսիսային սահմանը և թեքվել դեպի Վարդենիկ գետը: | 1<br>հուշարձանի շրջակայքը մաքուր է և լավ պահպանված | անհրաժեշտություն չկա | 2<br>վայրը կարող է օգտագործվել պատմական և մշակութային տուրիզմի նպատակներով |
| Խարաբա բնակավայր և ս. Հռիփսիմե վանք և գերեզմանատուն | գտնվում են Արծվանիստ գյուղից 5 կմ դեպի հարավ: Կարելի է հասնել ոտքով կամ քառանիվ փոխադրամիջոցով: | 1<br>հիմնականում տարածքը մաքուր է, սակայն հուշարձանը  շատ վատ վիճակում է | պահանջվում է եկեղեցու ամբողջական վերանորոգում | 2<br>Հուշարձանը կարելի է ընդգրկել պատմա-մշակութային հուշարձանների շարքը |
| Կարճաղբյուրի Դաշ Կապու մատուռ և գերեզմանատներ | գտնվում են Կարճաղբյուր գյուղի հարավ-արևելյան մասում / կարելի է հասնել գյուղի ճանապարհով մինչև գյուղի հյուսիսային սահմանը և անցնել Կարճաղբյուր գետի կամուրջը | 1<br>տարածքը լավ վիճակում է | անհրաժեշտություն չկա | 1<br>կարող է օգտագործվել պատմա-մշակութային տուրիզմի նպատակով |
| Վարդենիսի Աստվածածին եկեղեցի և գերեզմանատուն | գտնվում են Վարդենիս քաղաքի կենտրոնում / հեշտ հասանելի | 2<br>Հուշարձանի շրջակա տարածքը լավ պահպանված է, քանի որ ս. Աստվածածինը գործող եկեղեցի է | նախընտրելի է եկեղեցու տարածքի ցանկապատումը | 3<br>խորհուրդ է տրվում հուշարձանը ընդգրկել պատմա-մշակութային տուրիզմի օբյեկտների ցանկում |
| Այրքի ս. Գևորգ և ս. Աստվածածին եկեղեցիներ և միջնադարյան եկեղեցի | գտնվում են Այրք գյուղի հարավային սահմանի վրա /  հեշտությամբ կարելի է հասնել գյուղի ճանապարհով: Սրանք միջնադարյան կիկլոպյան ամրոց-բնակավայրի հետ մեկտեղ կազմում են մեկ հուշարձան: | 1<br>ընդհանուր առմամբ եկեղեցիները լավ են պահպանված | պահանջվում են որոշ մաքրման և բարեկարգման աշխատանքներ | 2<br>հուշարձանը կարող է դառնալ հետաքրքիր տեսարժան վայր Սևանա լճի հարավ-արևելյան մասում |
| Սոթքի ս. Աստվածածին եկեղեցի և խաչքարեր | գտնվում են Սոթք գյուղի կենտրոնական մասում / հեշտ հասանելի | 2<br>լավ պահպանված է, սակայն միջնադարյան գերեզմանատունը վատ վիճակում է, իսկ եկեղեցին գտնվում է շինարարական գոտում | պահանջվում են վերանորոգման աշխատանքներ | 3<br>հուշարձանը կարելի է տուրիստական ուղիների ցանկում ընդգրկել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մեծ Մասրիկի Աստվածածին եկեղեցի և գերեզմանատուն | գտնվում են Մեծ Մասրիկ գյուղի կենտրոնում կողք-կողքի / հեշտ հասանելի | 2<br>հուշարձանների մնացորդները լավ չեն պահպանվում: Միջնադարյան գերեզմանատունը լի է աղբով և շինարարական թափոններով: Աստվածածին եկեղեցու տարածքը ամբողջովին վերածվել է մշակվող հողատարածքի: | անհրաժեշտ է իրականացնել վերականգնման աշխատանքներ, աղբի հեռացում տարածքից, բուսականության ներթափանցման վերահսկողություն | 3<br>բարեկարգման և մաքրման աշխատանքներից հետո հուշարձանները կարող են համարվել տարածաշրջանում պատմական և մշակութային տուրիզմի զարգացման հետաքրքիր վայր |
| Շորժայի մատուռ և գերեզմանատուն | գտնվում են Շորժա գյուղի հարավ-արևելյան մասին հարող բլրի գագաթին և արևմտյան լանջին: Եկեղեցին և գերեզմանատունը գտնվում են լանջին, մինչդեռ մատուռը տեղադրված է նույն բլրի գագաթից 200 մ դեպի հարավ-արևելք / հեշտ հասանելի, քանի որ հուշարձաններ կարելի է հասնել գյուղի հիմնական ճանապարհով, թեքվելով աջ, հասնելով գյուղի արևելյան սահմանը: Մնացած ճանապարհը դեպի մատուռ կարելի է հասնել միայն քայլելով: | 2<br>հուշարձանները կիսով չափ ավերված են | պահանջվում է հուշարձանի ամբողջական վերանորոգում | 2<br>վերանորոգումից հետո կարող են ընդգրկվել պատմական տեսարժան վայրերի ցանկը |
| Ճամբարակի խաչքարեր | տեղադրված են Ճամբարակ քաղաքում՝ Ճամբարակ-Դիլիջան ճանապարհի աջ կողմում, 1.5 կմ քաղաքի կենտրոնական խաչմերուկից | 3<br>Տարածքի վիճակը վատ է: Սա պանդխտության վայր է, որտեղ խաչքարերը պաշտամունքի առարկա են: | անհրաժեշտություն չկա | 3<br>Վայրի հետաքրքրությունը սահմանափակ է: |
| Դպրաբակի եկեղեցի | գտնվում է Դպրաբակ գյուղի, բլրի հարավային կողմում, Դիլիջան-Ճամբարակ ճանապարհից ձախ (Դիլիջան-Իջևան մայրուղու խաչմերուկից 14.5կմ հեռավորության վրա) / հեշտ հասանելի | 3<br>եկեղեցին կիսավեր վիճակում է՝ գոյություն ունի միայն արևելյան մասը | պահանջվում է ամբողջական վերանորոգում: Շրջակայքը պետք է մաքրվի, իսկ եկեղեցու ներսը մաքրվի խոտերից: | 3<br>որոշ վերականգնողական և բարելավման աշխատանքներից հետո եկեղեցին կարող է օգտագործվել պատմական և մշակութային տուրիզմի նպատակների համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Չորավանքի եկեղեցի | գտնվում է Չորավանք գյուղից 2.2կմ դեպի հարավ՝ անտառային բլրի լանջին: Կարելի է հասնել գյուղի արևելյան սահմանից գնալով դեպի հարավ՝ ճանապարհի երկայնքով դեպի Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային անտառների լանջերը : Անձրևային եղանակին խորհուրդ է տրվում գնալ ոտքով / հեշտ հասանելի | 3<br>հուշարձանի վիճակը վատ է | պահանջվում է ամբողջական վերանորոգում: | 3<br>առաջարկվում է այս եկեղեցին օգտագործել Գետիկի հովտում պատմա-մշակութային տուրիզմի զարգացման համար |
| Սևանավանք | գտնվում է Սևանի թերակղզու վրա, կարելի է հասնել թեքվելով Սևան-Դիլիջան մայրուղուց աջ ասֆալտե ճանապարհով, որը տանում է Սևանի թերակղզի / հեշտ հասանելի | 1<br>հուշարձանը լավ պահպանված է, քանի որ եկեղեցին գործող է | պահանջվում է բարելավել ս. Հարության եկեղեցի տանող արահետը | 1<br>Սևանավանքը եղել և շարունակում է մնալ տարածաշրջանի առաջնային տուրիստական տեսարժան վայր |
| Հայրավանք | գտնվում է Հայրավանք գյուղի հյուսիս-արևելյան սահմանի վրա՝ Սևան-Գավառ ճանապարհի ձախ կողմում: Այն տեղադրված է քարե հրվանդանի վրա և թողում է անհասանելի ամրոցի տպավորություն: Այնտեղ կարելի է հասնել թեքվելով մայրուղու խաչմերուկից ձախ (խաչմերուկում կա ցուցանակ) / հեշտ հասանելի: | 1<br>հուշարձանի վիճակը լավ է | անհրաժեշտություն չկա | 1<br>Եկեղեցին պատմա-ճարտարապետական առումով ունի առաջնային նշանակություն: Այն ճարտարապետական գաղափարի և շրջապատող լանդշաֆտի միահյուսման դասական օրինակ է: |
| Ծողակավանք | գտնվում է Ձորագյուղի արևմտյան սահմանի վրա՝ բարձր բլրի գագաթին: Կարելի է հասնել գյուղի ճանապարհով, որը տանում է մինչև գյուղի արևմտյան սահման և բարձրանալ բլրի գագաթ, որտեղ կարելի է գտնել վանքի մնացորդները (գտնվում է Գավառ-Մարտունի խաչմերուկից 4.5 կմ հեռավորության վրա) / հեշտ հասանելի | 1<br>Վանքը շատ վատ վիճակում է: Շինարարական աշխատանքները վնասել են բլրի մակերեսը, որտեղ տեղադրված է վանքը: Արդյունքում գերեզմանատունը աստիճանաբար սահել է, իսկ տապանաքարերը՝ ավերվել: Եկեղեցին գտնվում է շինարարական աշխատանքների կենտրոնում: Եկեղեցի տանող արահետը շատ նեղ է և անհարմար: | պահանջվում է վայրի ամբողջական վերանորոգում՝ հաշվի առնելով պատմական և ճարտարապետական դերն ու կարևորությունը, որ վանքն ունեցել է Գեղարքունիքի անցյալ պատմության մեջ: | 1<br>Վերանորոգումից հետո այն կարող է դառնալ հետաքրքիր մշակութային հուշարձաններից մեկը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոտավանք | գտնվում է Ներքին Գետաշենի արևմտյան մասում: Կարելի է հասնել թեքվելով Գավառ-Մարտունի ճանապարհից աջ դեպի գյուղ՝ անցնելով գյուղի ճանապարհը բարձրանալ բլուրը (Գավառ-Մարտունի խաչմերուկից 2.4 կմ հեռավորության վրա) / հեշտ հասանելի | 1<br>ընդհանուր առմամբ հուշարձանը պահպանված է | ցանկալի է բարելավել հուշարձան տանող ճանապարհը, մաքրել տարածքը գերաճած բուսականությունից և արգելել արածեցումը հուշարձանի տարածքում | 1<br>հուշարձանը կարող է դասվել տուրիստների սիրելի տեսարժան վայրերի շարքը |
| Վանեվանք | գտնվում է Արծվանիստ գյուղի հարավ-արևելքում: Եկեղեցին կառուցվել է Արծվանիստ գյուղի գետի ձորակի աջ կողմում՝ պարուրված բարձր ժայռերով: Կարելի է հասնել Արծվանիստ գյուղի կենտրոնից՝ Երկրորդ համաշխարհայինի հուշակոթողից թեքվելով ձախ և քայլելով մոտավորապես մի քանի հարյուր մետր / հեշտ հասանելի | 3<br>ընդհանուր առմամբ հուշարձանը պահպանված է | ցանկալի է բարելավել դաշտամիջյան ճանապարհը, որը տանում է դեպի եկեղեցի և տարածքը մաքրել թրիքից ու աղբից | 3<br>խորհուրդ է տրվում այս հուշարձանն օգտագործել պատմական և մշակութային տուրիզմի զարգացման շրջանակներում |
| Մակենյանց եկեղեցի | գտնվում է Մաքենիս գյուղի հյուսիսային մասում՝ Մաքենիս գետի աջ ափին: Այն 6կմ հեռավորության վրա է Ծովակ-Մաքենիս ճանապարհից, որի որոշակի հատվածներ դժվարանցանելի են: | 1<br>ընդհանուր առմամբ հուշարձանը պահպանված է | հուշարձանի կողքով անցնող աղբյուրի ափերը ճեղքվել են և ջուրը ազատորեն հոսում է՝ կուտակվելով եկեղեցու արևելյան պատի մոտ | 1<br>տարածքի և ճանապարհի բարելավումից հետո, այն կդառնա տարածաշրջանի լավագույն տուրիստական վայրերից մեկը |
| Հին Գետիկի եկեղեցի | գտնվում է Մարտունի գյուղից 2 կմ հեռավորության վրա՝ Գետիկ գետի ձախ ափի անտառածածկ լանջին: Կարելի է հասնել Մարտունի գյուղի արևմտյան սահմանից սկսած շարժվել առաջ 1 կմ դեպի Գոշ, այնուհետև շրջվել ձախ, կամրջով անցնել Գետիկի ձախ ափ և այնտեղից հաղթահարել անտառի ճանապարհը մոտ 1.2 կմ: Անձրևային եղանակին խորհուրդ է տրվում քայլելով անցնել / Դժվար է, քանի որ մոտավորապես 2 կմ պետք է քայլել կամ քառանիվ փոխադրամիջոցով հասնել Մարտունի գյուղից: | 2<br>հուշարձանի վիճակը միջին է | հուշարձանի շրջակայքը պետք է մաքրվի մացառներից և մոլախոտերից: Պեղումներից հետո անհրաժեշտ է իրականացնել ամբողջական վերանորոգում: | 1<br>գրավիչ դիրքի շնորհիվ հուշարձանը կարող է դառնալ Գետիկի հովտի պատմական, հնեաբանական և մշակութային լավագույն տուրիստական վայրերից մեկը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սելիմի քարվանսարա | գտնվում է Գեղհովիտ գյուղից 18կմ դեպի հարավ՝ Գեղարքունիք և Վայոց Ձոր մարզերի միջև, Սելիմի ամենաբարձր կետում, 2410մ բարձրության վրա: Այն գեղատեսիլ վայր է, Վարդենիսի լեռնաշղթայի ալպիական մարգագետինների գրավիչ տեսարանով: Կարելի է հասնել նորակառույց Մարտունի-Եղեգնաձոր ճանապարհով, որի ձախ կողմում է տեղադրված այն: / հեշտ հասանելի | 1<br>ընդհանուր առմամբ հուշարձանի կարգավիճակը կարելի է բնորոշել որպես լավ | պահանջվում է հուշարձանի մաքրում | 1<br>խորհուրդ է տրվում հուշարձանը ընդգրկել մշակութային տեսարժան վայրերի շարքը |

Բանալի: 1. Լավ = կարիք չկա որևէ կառուցվածքային աշխատանքների / 2. Միջին = նշանակալի կառուցվածքային աշխատանքների իրականացման կարիք կա / 3. Վատ = Հուշարձանը կարիք ունի նշանակալի վերանորոգման աշխատանքների

ՀԱՎԵԼՎԱԾ 3

## ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԴՐՈՒՄԸ «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿՈՒՄ

### Ուսումնական ծրագիր

Դասընթացի նպատակը

Մասնակիցներին տալ տեսական և գործնական գիտելիքներ կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի, դրա անհրաժեշտության, կարևորության և ընթացքի վերաբերյալ, որպեսզի հնարավորություն ստեղծվի ներդնել և իրականացնել կենսաբազմազանության մոնիտորինգը ազգային պարկի տարածքում՝ կենսաբազմազնության կառավարման արդյունավետությունը, պահպանությունը և կայուն օգտագործումը բարելավելու համար:

Ակնկալվող արդյունքները

Մասնակիցները հնարավորություն կստանան.

- Հավաքագրել ելակետային տվյալներ ազգային պարկի կենսաբազմազանության վիճակի վերաբերյալ.
- մուտքագրել, մշակել և վերլուծել տվյալները ազգային պարկի կենսաբազմազանության մոնիտորինգի տեղեկատվական համակարգում.
- գնահատել և բացահայտել ֆլորայի ու ֆաունայի փոփոխությունները, դրանց վիճակի և զարգացման ընթացքի բարելավման նպատակով՝ համապատասխան կառավարչական որոշումներ ընդունելու և տեղեկատվությունը տարածելու համար:

Դասընթացի տևողությունը՝ 5 օր

Անցկացման վայրը

Դասախոսություններ՝ Սևան ազգային պարկի կենտրոնական գրասենյակ:

Դաշտային գործնական աշխատանք.

- գիհու նոսրանտառ.
- ջրային և մերձափնյա էկոհամակարգեր.
- ջրից ազատված գրունտերի էկոհամակարգ:

Մասնակիցներ

Ազգային պարկի գիտական բաժնի անձնակազմ:

### ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԸՍՏ ՕՐԵՐԻ ԵՎ ԺԱՄԵՐԻ

| Օր, ժամ | Թեմա |
|---|---|
| Օր I | |
| 10.00-13.00 (11.30-11.45 ընդմիջում) | **Թեմա** 1. Ծանոթացում էկոլոգիական մոնիտորինգի համակարգին<br>• Մոնիտորինգը որպես դիտարկումների, գնահատման և կանխատեսման համակարգ.<br>• Ծանոթացում կենսաբազմազանության մոնիտորինգի հետ.<br>• Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի պահանջները կենսաբազմազանության մոնիտորինգի վերաբերյալ.<br>• Միջազգային փորձը կենսաբազմազանության մոնիտորինգի վերաբերյալ: |
| 13.00-14.00 | Ընդմիջում |

| | |
|---|---|
| 14.00-17.30<br>(15.30-16.00 ընդմիջում) | **Թեմա 2.** Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի հիմնադրման և իրականացման անհրաժեշտությունը<br>• Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը.<br>• «Սևան» ազգային պարկի կենսաբազմազանությանը սպառնացող բնական և մարդածին ազդեցությունները.<br>• Կենսաբազմազանության մոնիտորինգի կարևորությունը «Սևան» ազգային պարկի համար: |
| Օր II | |
| 10.00-13.00<br>(11.30-11.45 ընդմիջում) | **Թեմա 3.** «Սևան» ազգային պարկի Ֆլորայի և Ֆաունայի առկա տվյալների վերլուծություն<br>• Պարկի ֆունկցիոնալ գոտիավորում.<br>• Ազգային պարկի կենսաբանական բազմազանությունը.<br>• Էնդեմիկ, ռելիկտային, հազվագյուտ և Կարմիր գրքում գրանցված տեսակներ.<br>• Ազգային պարկի հիմնական էկոհամակարգերը: |
| 13.00-14.00 | Ընդմիջում |
| 14.00-17.30<br>(15.30-16.00 ընդմիջում) | **Թեմա 4.** Կենսաբազմազանության մոնիտորինգի առանձնահատկությունները և ներդրման ընդհանուր մեխանիզմները ազգային պարկում<br>• Կենսաբազմազանության մոնիտորինգի առանձնահատկությունները.<br>• Կենսաբազմազանության մոնիտորինգի ընդհանուր մեխանիզմները.<br>• Օրենսդրական դաշտ և ինստիտուցիոնալ կառուցվածք: |
| Օր III | |
| 10.00-13.00<br>(11.30-11.45 ընդմիջում) | **Թեմա 5.** Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման մեթոդաբանությունը<br>• Կենսաբազմազանության մոնիտորինգի մեթոդաբանության ընդհանուր սկզբունքները.<br>• Կենսաբազմազանության մոնիտորինգի օբյեկտները ազգային պարկում.<br>• Ինդիկատորներ: |
| 13.00-14.00 | Ընդմիջում |
| 14.00-17.30<br>(15.30-16.00 ընդմիջում) | **Թեմա 6.** Կենսաբազմազանության մոնիտորինգի արձանագրություններ և դաշտային ձևեր<br>• Մոնիտորինգի արձանագրություններ.<br>• Դաշտային ձևեր.<br>• Կենսաբազմազանության մոնիտորինգի մոդելի օրինակի փորձարկում: |
| Օր IV | |
| 10.00-18.00<br>(13.00-14.00 ընդմիջում) | **Թեմա 7.** Կենսաբազմազանության մոնիտորինգի մոդելի փորձարկում դաշտում<br>• Դաշտային գործնական աշխատանք.<br>➢ ջրային և մերձափնյա էկոհամակարգեր<br>➢ ջրից ազատված գրունտերի էկոհամակարգ<br>• Քննարկում |
| Օր V | |
| 10.00-13.00 | **Թեմա 7.** Կենսաբազմազանության մոնիտորինգի մոդելի փորձարկում դաշտում<br>• Դաշտային գործնական աշխատանք.<br>➢ գիհու նոսրանտառ |
| 13.00-14.00 | Ընդմիջում |

| | |
|---|---|
| 14.00-17.00 | • Քննարկում<br>• Դասընթացի ամփոփում |

<u>Պահանջվող նյութեր</u>

- Դասընթացի համար տպագրված նյութեր.
- Դիդակտիկ նյութեր.
- Գրենական պիտույքներ.
- Գրատախտակ.
- Մեկ շարժական համակարգիչ.
- Պրոեկտոր: